ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԱՉՔԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Ուսանողական գիտաժողովների հոդվածների նյութեր

Երևան - 2016

Ժողովածուն տպագրության է երաշխավորել
Հյուսիսային համալսարանի գիտխորհուրդը

«Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները ուսանողության աչքերով» և **«Հայաստանի - Հանրապետության անկախ պետականության զարգացման հեռանկարները ուսանողների աչքերով».** ուսանողական գիտաժողովի նյութեր - Եր.: Հյուսիսային համալսարանի հրատարակչություն, 2016, էջ:

Ժողովածուն ամփոփում է Հյուսիսային համալսարանի ուսանողական երկու՝ «Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները ուսանողության աչքերով» և «Հայաստանի Հանրապետության անկախ պետականության զարգացման հեռանկարները ուսանողների աչքերով» գիտաժողովների նյութերը: Ժողովածուի հոդվածները համալսարանի ուսանողների գիտահետազոտական ուսումնասիրությունների արդյունք են և նախատեսված են թեմայով հետաքրքրվող սովորողների ու մասնագետների համար:

Հյուսիսային համալսարանի հրատարակչություն, 2016 թ.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԱՉՔԵՐՈՎ

ուսանողական գիտաժողով
2015 թ., ապրիլի 29

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Իրավագիտության և հասարակագիտության ամբիոնի
դասախոս, պրոֆեսոր Աշոտ Ներսիսյան

ՀԱՅԵՐԻ ՎԱՐԱԾ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (ՈՒՐՖԱ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Բանալի բառեր - *Հայոց ցեղասպանություն, ինքնապաշտպանական մարտեր, քաջագործություն, հերոսամարտ, ապստամբություն:*

1915 թվականների թուրք-հայկական հարաբերությունների մասին խոսելիս հիմնականում նշվում է հայերի ջարդի մասին, բայց քչերն են նշում, որ չնայած այդ ժամանակահատվածում բազում հայեր են ոչնչացվել, ամեն դեպքում հայը գլուխը ուղղակի կախ, պատի տակ չի կանգնել ու սպասել մինչև կգնդակահարեն իրեն, ծնկի չի իջել ասկյարի առաջ ու հլու հնազանդ չի մորթվել: Իր մոր, կնոջ ու քրոջ բռնաբարությունը, անմեղ մանկիկների թափած արյունը չի հանդուրժել ու չի դիտարկել որպես անխուսափելի փաստ: Հարկ է նշել, որ հայը եղել է նաև զենքը ձեռքին կռվող ֆիդայի, եղել է դիմադրող ու ապստամբ, պաշտպանել է ոչ միայն իր ընտանիքի, այլ նաև ազգի պատիվը: Հայն այդ կռվում ուղղակի չի

զոհվել, նա եղել է մարտիրոս[1]: Ճիշտ է, մեր ժողովուրդն ամբողջովին համախմբված չի եղել, ինչի հիմնական պատճառներից մեկը աշխարհագրական դիրքն էր, իսկ մյուս պատճառը 1914 թ. Հայ Հեղափոխական Դաշնակցության 8-րդ համագումարում կայացված որոշումը, որի համաձայն՝ Օսմանյան կայսրության հայերը պետք է ծառայեին օսմանյան բանակում, իսկ ռուսահպատակ հայերը՝ ռուսական բանակում: Այսինքն՝ Դաշնակցությունը նախընտրեց, որ տարբեր պետությունների ուժերում կռվող հայերը կռվեն իրար դեմ[2]:

Ինչևէ, ամեն դեպքում հայերն առանց ազգային երևելիների մեծ մասի (հիմնականում սպանվել էին) կարողացան որոշ քաղաքներում փայլուն ինքնապաշտպանություն կազմակերպել: Այդ քաղաքներից էին Վանը, Մուսա լեռը, Հաճնը, Սարդարապատը և Ուրֆան: Այս ինքնապաշտպանական մարտերում իրենց քաջագործություններով աչքի են ընկել բազում հայորդիներ: Թույլ տվեք միայն մեկի օրինակով ցույց տալ այդ քաջագործությունների մի փոքր մասը:

Մկրտիչ Յոթնեղբայրյանը եղել է 1915 թ. սեպտեմբերի 25-ին Ուրֆայում սկսված ինքնապաշտպանության կազմակերպման համար ստեղծված հինգ հոգանոց զինվորական մարմնի անդամ և ղեկավար (Մկրտիչ Յոթնեղբայրյան, Հարություն Ռաստկելենյան, Հարություն Սիմեյան, Խորեն Քյուլֆելյան և Լևոն Էղբերլերյան):

Դեռ 1908-ին՝ Սահմանադրությունից հետո, ուրֆայահայությունը սկսեց զինվել, բայց մարտական զենքը արժեր հայ ընտանիքների տարեկան ողջ եկամուտը: Շատերը ստիպված այգին կամ տան եղածն էին վաճառում, իսկ Մկրտիչ Յոթնեղբայրյանը բացառիկ վարպետությամբ կողոպտեց

---

[1] Տես Ավագյան Է.Ս., Ուրֆայի վերջին ահազանգը,Եր., 1990, էջ 3:

[2] Տես Շաքարյան Ա., Փաստարկներ հայոց ցեղասպանության մասին, Եր., 2014, էջ 62:

մզկիթը (հայոց երբեմնի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցին), որը հռչակված էր շքեղ ներքին հարդարման մաս կազմող թանկարժեք գորգերով: Դրանք վաճառեցին հեռավոր քաղաքներում ու փոխարենը զենք բերվեց Ուրֆա: Նա նույնպիսի վարպետությամբ կարողանում էր կառավարական պաշտոնյա ներկայանալ ու թուրքական գյուղերի հարկը հավաքել, պատերազմի ժամանակ սպայի համազգեստով մտնում էր թուրքական գյուղերն ու «զորակոչում» տղամարդկանց, իսկ գյուղից դուրս գալուն պես մեծ կաշառքների դիմաց բոլորին բաց թողնում և դարձյալ ողջ դրամը հատկացնում զենքի գնմանը: Բալկանյան պատերազմի ժամանակ ծառայելով - Հալեպում՝ գիշերային հանդուգն հարձակումների միջոցով նա տիրացավ թուրք զինվորների ունեցած զենքի խոշոր չափերին: Արաբ կամ չերքեզ ձևանալով՝ զինվորներից և անգամ սպաներից զենք և զինամթերք գնեց: Նրա այսօրինակ գործողության թագն ու պսակը Հալեպի բերդից 150 մարտական հրացանների հափշտակումն էր, որն իրականացրեց 1913 թ. փետրվարին: Երբ գողությունը բացահայտվեց ու բերդի ողջ անձնակազմը բանտարկվեց, զենքերը վաղուց հասել էին Ուրֆա, Տիգրանակերտ և անգամ Սասուն[3]:

1910թ. կազմակերպել է ինքնապաշտպանական ջոկատ[4], որը ոչնչացնելու՝ կառավարության բոլոր փորձերը ձախողվել են: Անգամ Ուրֆայի ոստիկանապետը հետո պատմում է. «Հակառակ մեր ճիգերին՝ չկարողացանք Մկրտչին բռնել: Նրա մասին ամեն օր հաղորդագրություններ էին գալիս, օրինակ՝ հեռագրաթելերը կտրել, գերաններն էլ այրել է, ոչնչացրել է հեռախոսալարերը, կտրել թուրքական թաղե-

---

[3] Տես Դևրիկյան Տ., Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ., Եր., 2005, էջ 227:

[4] www.anunner.com/name/biography/ՄԿՐՏԻՉ_ՅՈԹՆԵՂԲԱՅՐՅԱՆ_%28 ՅՈԹՆԵՂԲԱՅՐՅԱՆ% 29?lang=en

րի ջուրը: Ամենատարօրինակը, սակայն, իր ինքությունը հաստատող գրություններն էին, ուր ասում էր. «Վախկոտ-նե՛ր, ինձ քաղաքում մի՛ փնտրեք և անմեղներին բաց թողեք: Այստեղ եմ, եկե՛ք ծանոթանանք»: Այս մարդը կա՛մ դև էր, կա՛մ հրեշտակ, բայց ամեն դեպքում թրքության սարսափն էր»[5]:

Թուրքերի գազանաբարո գործողությունները ամենից առաջ անհանգստացնում էին Մկրտչին և իր տղաներին, անգամ մի պատրվակով Մկրտիչն ասում է. «Երբ քաղաքի հայոց թաղի գլուխն էին կտրում, մենք հանգիստ նստած էինք, հիմա ազգիս գլուխն են յաթաղանի տակ առել,դարձյալ լռում ենք»: «Հապա ի՞նչ պիտի անենք», - հարցնում են ընկերները: «Պետք է կռվենք, ոչ թե սպասենք, որ մեզ մորթեն», - ասում է Մկրտիչը[6]:

Մինչ այդ մի քանի անգամ փորձել էր փրկել կառավարության կողմից ձերբակալված մի շարք ուրֆայահայ երևելիների կյանքը: Մասնավորապես, երկու անգամ բանտում, և ապա նախապատրաստեց 1915թ. հունիսի 8-ին ձերբակալված և աքսորված առաջին 16 երևելիների և կուսակցական գործիչների փախուստը աքսորի ճանապարհին, բայց բոլորը կտրականապես հրաժարվեցին՝ զգուշանալով ուրֆայահայության ճակատագրի համար: Նրանք բոլորն էլ սպանվեցին: Իսկ հունվարի 25-ին կառավարությունը ձերբակալեց քաղաքի 100 փոքրիշատե ակնառու գործիչներին և մտավորականներին: Յոթնեղբայրյանը, իբրև նրանցից ոմանց պարտատեր, հարուստ արաբի հագուստով ծպտված կարողացավ մտնել բանտ, հանդիպել և փախուստի բավական իրագործելի ծրագիր ներկայացնել, ինչը մերժվեց: Օգոստոսի 1-ին Ուրֆա հա-

---

[5] Դևրիկյան Տ., Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ., Եր., 2005, էջ 215:

[6] Ավագյան Է.Ս., Ուրֆայի վերջին ահազանգը, Եր., 1990, էջ 250:

սած երկու «Մեծ աքսորականների»՝ օսմանյան մեջլիսի պատգամավոր, գրող և իրավագետ Գրիգոր Զոհրապի ու ազգային- ազատագրական շարժման գործիչ Վարդգեսի (Հովհաննես Սերենկուլյան) փախուստի ծրագիրը վերջիններիս ներկայացնելու համար գիշերը բարձրացավ նրանց հյուրընկալած տան տանիքը, ծխնելույզով իջավ սենյակ ու կես ժամ ապարդյուն համոզեց, բայց Զոհրապից միշտ նույն պատասխանը ստացավ. «Մեր ազատումը չի լավացնի ժողովրդի վիճակը, այլ ընդհակառակը»[7]:

Մինչ Ուրֆայի ինքնապաշտպանության սկսելը՝ Մկրտչի քաջագործություններն այնքան շատ են, որքան և ինքնապաշտպանության ընթացքում, որոնցից է, օրինակ, հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած մի դեպք. մարտերից մեկի ընթացքում, երբ թշնամու թնդանոթներից մեկը սարսափելի ավերներ էր գործում, Ուրֆայի ինքնապաշտպանության հրամանատարը այն լռեցնելու մի զարմանալի ու նույնքան համարձակ հնարք գտավ: Մտավ խոշոր տակառի մեջ ու զառիվայրով գլորվեց թնդանոթի դիրքի ուղղությամբ: Մինչ թուրքերը հասկանային, թե ինչ է կատարվում, տակառից դուրս ցատկած Յոթնեղբայրյանը, սպանեց թնդանոթաձիգներին, անօգտագործելի դարձրեց թնդանոթն ու հեռացավ[8]:

Ուրֆայի քսանհինգօրյա ինքնապաշտպանական մարտերից մեկի ընթացքում էլ սարսափելի հրետանակոծություն էր, իսկ գիշերը խուժանը զորքի առաջնորդությամբ հարձակման անցավ և շուտով գրավեց կաթոլիկ եկեղեցին, որը, սակայն, շրջապատված էր հայկական դիրքերով: Մինչ բոլորը շփոթված էին այս անհաջողությունից, պարզվեց, որ Յոթնեղ-

---

[7] Դևրիկյան Տ., Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ., Եր., 2005, էջ 216:

[8] Դևրիկյան Տ., Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ., Եր., 2005, էջ 222:

բայրյանը դրա համար միայն ուրախ էր: Եկեղեցու բակ լցված և հաջողությունից անպատմելիորեն ոգևորված խուժանը Մկրտչի հրամանով շուտով երկու ուղղություններից նետվող ձեռնառումբերի տարափի ներքո սկսեց ոչնչանալ, իսկ փախչել փորձողները սպանվում էին շրջակա դիրքերից բացված նշանառու կրակից[9]:

Երբ հայության ուժը արդեն բավականին թուլացել էր, իսկ թուրքերն էլ շարունակում էին անընդհատ համալրում ստանալ, թուրքագերմանական զորքերի հրամանատար - Ֆահրի փաշային ևս մեկ անգամ ապացուցելու համար, որ օրհասական կռվի ելած հայը երբեք այլևս զերի չի դառնա, - Յոթնեղբայրյանը մի խելահեղ քայլի է դիմում, որն էլ պսակվում է հաջողությամբ. ամերիկացի միսիոներ Լեսլին 14 օտարերկրացիների հետ դուրս չէին եկել քաղաքից և տեղակայված էին ամերիկյան ատաղձագործարանում: Հանդիպելով նրան՝ Մկրտիչը խնդրեց սպիտակ դրոշ պարզել և հեռանալ: Մինչ թուրքերը կփորձեին իրենց ուժերը հաստատել այս տարածքում, հայերն արդեն դիրքավորվել էին այստեղ, քսան հոգանոց մարտախումբը զբաղեցրել էր շինությունները, իսկ թուրքական համազգեստ հագած տասը մարտիկներ էլ դիրքավորվել էին բողոքականների վարժարանի մարզադաշտում, և երբ թուրքերը իրենց դիրքերից անարգել իջան ամերիկյան հաստատության շենքերը՝ միահամուռ հարձակում սկսվեց, թուրքերն այս անակնկալ հարձակումից քարացել էին և չգիտեին ինչ անել, երբ փորձեցին վազել դեպի իրենց «եղբայրները»՝ մարզադաշտ, այստեղ էլ նրանց գնդակներով դիմավորեցին[10]:

---

[9] Տես նույն տեղը, էջ 218:

[10] Ավագյան Է.Ս., Ուրֆայի վերջին ահազանգը, Եր.,1990, էջ 228-231:

Հավելենք նաև, որ վիրավոր Յոթնեղբայրյանը թշնամու ձեռքը չընկնելու համար ինքնասպան է եղել[11]:

Թերևս նման դրվագներ և նման հայորդիների հնարավոր է մեծ քանակությամբ թվարկել, ինչպիսիք են, օրինակ, - Սեբաստացի Մուրադը, Կայծակ Առաքելը, Տոնիկ Տոնիկյանը, Գևորգ Չավուշը, Անդրանիկ Օզանյանը և էլի շա՛տ ու շա՛տ նման քաջեր: Ի վերջո, մենք միշտ պիտի գլուխներս բարձր պահենք, քանի որ նույնպես հայ ենք ու ինչ-որ չափով մեր ազգի գոյության համար պարտական ենք վերոնշյալ ու նրանց նման բազում քաջերի:

Վերջում ցանկանում եմ մեջբերել Թալեաթի խոսքերը՝ կապված Ուրֆայի ինքնապաշտպանության հետ. «Եթե Ուրֆայի ապստամբությունը խորապես ուսումնասիրենք, ապա կտեսնենք, որ այստեղի հեղափոխական շարժումը լավագույն ձևով կազմակերպված ապստամբական ելույթներից մեկն էր: Գետնափոր նկուղների և սենյակների մեջ անհամար թվով զենք և ռազմանյութ էր լցված, 9-10 շաբաթվա չափով պարեն էր ամբարված: Այս քաղաքի մեջ 16-17 տարեկան երկսեռ պատանեկությունը զինավարժ էր և նշանառու»[12]:

Резюме

Ключевые слова. Геноцид армян, оборонительные бои, мужество, героический, бунт.

В нашем обществе, говоря о геноциде армян, очень мало говарят об оборонительных боях. По этой причине

---

[11] http://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%AF%D6%80%D5%BF%D5%AB%D5%B9_%D5%85%D5%B8%D5%A9%D5%B6%D5%A5%D5%B2%D5%A2%D5%A1%D5%B5%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6

[12] Դևրիկյան Տ., Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915- 1923 թթ., Եր., 2005, էջ 224:

распрастранено мнения, что во время геноцида, армяны не соопротевлялись. По моему личному мнению: Вышеуказанная история - удачный пример для подражания для всех нас, для всего нового поколения. Армянская история живет благодаря таким отважным героям, как к примеру, Мкртич.

Key words. Armenian Genocide, defensive battle, courage, heroic, rebellion

Summary

In our society, talking about the Armenian genocide, very few govaryat of defensive battles. For this reason rasprastraneno opinion that during the genocide, the Armenians not sooprotevlyalis. In my personal opinion: The above story - a good example for all of us, for a whole new generation. Armenian history lives thanks to the brave heroes, like for example, Mkrtich.

ՍՎԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Օտար լեզու և գրականություն ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, բան.գիտ.թեկն.՝ Ծովինար Ասատրյան

ՀԱՅ ՈՐԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄՆ ՈՒ ԹՈՒՐՔԱՑՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բանալի բառեր - *հայ որբեր, մանկահավաքի (դևշիրմե) ինստիտուտ, ենիչերիների զորագունդ, հայ որբերի «փրկություն», մոլեռանդ թուրքեր, բռնի իսլամացում:*

Ոչ մուսուլման ժողովուրդների երեխաների բռնի իսլամացումն ու թուրքացումը խոր արմատներ ուներ Օսմանյան կայսրությունում: Փաստերը ցույց են տալիս, որ այդ քաղաքականությունը կիրառվել է ընդհուպ մինչև Օսմանյան կայսրության անկումը: Կրոնափոխության հարմար թիրախներից են միշտ համարվել երեխաները, որոնց իսլամացնելով վաղ տարիքում՝ կարելի էր ավելի հեշտ ջնջել ազգային և կրոնական դեռևս չձևավորված ինքնագիտակցությունը: Հենց այս տրամաբանությամբ է գործել Օսմանյան կայսրությունում մեծ տարածում գտած և երկար դարեր կիրառված մանկահավաքի (դևշիրմե) ինստիտուտը, որն ունեցել է նաև «արյան հարկ» անվանումը: Մանկահավաքի ժամանակ կայսրության ոչ մուսուլման բնակչությունից հավաքվել են փոքրահասակ տղա երեխաները, որոնց տրվել է կրոնական և ռազմական

կրթություն, և հենց նրանցից էլ ձևավորվել են ենիչերիների զորագնդերը[13]:

Հայոց ցեղասպանության տարիներին արձանագրվել են պետության և մուսուլման հասարակության կողմից հայ երեխաների զանգվածային իսլամացման բազմաթիվ դեպքեր: Ընդ որում, պետության և հասարակության միջև եղել է, ըստ էության, փոխադարձ շահերի վրա հիմնված համաձայնություն: Մեծ հայասեր և հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենը, անդրադառնալով հայերի բռնի կրոնափոխության խնդրին, նշում է. «Իսլամ ընդունողների և թլպատվողների թիվը մեծ էր, հատկապես երեխաների, որոնց ձեռք էին գցում իշխանությունները»[14]:

Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն ու ձուլումը կատարվել են երկու մակարդակով՝ պետության և հասարակության լայն խավերի կողմից[15]: Օսմանյան իշխանությունների կիրառած քաղաքականության երկու հիմնական ուղղություններն են. ա) երեխաները վերցվել են պետական թուրքական որբանոցներ՝ իսլամացվելու և թուրքացվելու նպատակով, բ) հայ երեխաներին պետությունն իր համապատասխան կառույցներով և մեթոդներով բաժանել է մուսուլման բնակչությանը՝ կրկին իսլամացնելու և թուրքացնելու նպատակով:

Ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացման խնդրին, իրավացիորեն նշում է, որ թուր-

---

1www.noravank.am/arm/articles/detail.php? ELEMENT_ID=2373

[14] Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների, Հայոց ցեղասպանության մասին (խմբագիր՝ Պ. Հովհաննիսյան), Եր., 2011, էջ 451:

[15] Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Եր., 2010, էջ 82:

քերի համար այդ երեխաները դիտվում էին որպես թուրք ժողովրդի էթնիկ գենային նկարագիրը հարստացնելու համար փնտրված աղբյուր[16]: Ահա հենց այդ պատճառով աղջիկ երեխաները դառնալու էին թուրքերի և քրդերի հարեմների զոհ, և երեխաներ ունենալով, հարստացնելու էին նրանց գենետիկ ֆոնդը, իսկ հայ տղա երեխաները իսլամացվելուց հետո դաստիարակվելու էին որպես թուրք մուսուլման: Հայ երեխաների իսլամացման քաղաքականությունը թուրք հեղինակները փորձում են ներկայացնել հիմնականում հումանիզմի համատեքստում: Այսպես, պատմաբան Իբրահիմ Աթնուրի գրքում ասվում է, որ Օսմանյան կառավարությունը, հասկանալով, որ աքսորի ժամանակ երեխաները բազմաթիվ դժվարությունների են բախվում, դիմեց «հայ երեխաների խնամքի և կրթության համար երկու մեթոդի»[17]: Այդ մեթոդներից մեկը երեխաներին թուրքական որբանոցներում տեղավորելն էր, իսկ մյուսը՝ մուսուլման ընտանիքներին բաժանելը: Հատկապես մուսուլմանական ընտանիքներին բաժանելու փաստը թուրք հեղինակը փորձում է հիմնավորել հետևյալ անհեթեթ փաստարկով. «Անշուշտ, քանի որ պատերազմական վիճակում հնարավոր չէր բոլոր երեխաներին տեղավորել որբանոցներում, ուստի ընտրվել էր այս ճանապարհը»[18]: Սրան զուգահեռ՝ Աթնուրը նշում է, որ թուրքական որբանոցներում հայ երեխաների նկատմամբ չէր կիրառվում էթնիկ և կրոնական խտրականություն: Սակայն այս ամենի կողքին նա չէր կարողանում շրջանցել օսմանյան ղեկավարների՝ հայ երեխանե-

---

[16] Dadrian V., Soykırımın kurbanları çocuklar; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, 2005, s. 313.

[17] Atnur İ., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 52.

[18] Atnur İ., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 53

ին թուրքացնելու մասին տված հստակ հրամանները[19]: Ն-ման օրինակներից է Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվերի նամակը՝ ուղղված ներքին գործերի նա-խարար Թալեաթին, որտեղ նա խնդրում է և պահանջում հայ որբերին ուղարկել հատկապես թուրքական որբանոցներ: 1916թ. մայիսի 9-ին գրված նամակում ասվում է. «Կրոնափոխ և ոչ կրոնափոխ հայ որբերին եթե վերցնեք մեր որբանոցնե-րը, ես պատրաստ եմ ռազմական բյուջեից հոգալու դրա հա-մար անհրաժեշտ ծախսերը»: Օսմանյան կառավարության մեկ այլ անդամ՝ կրթության նախարարը, Մարդինի նահան-գապետարան ուղարկած 1916 թ. հունիսի 1-ի ծածկագիր-հե-ռագրում նշում է, որ Մարդինի որբանոց պետք է վերցնել միայն իսլամացված հայ երեխաներին[20]: Հայ երեխաների թուրքացման պետական քաղաքականության մասին անհեր-քելի փաստեր են ներկայացված հենց օսմանյան արխիվում, որոնցից, օրինակ, 1915թ. հուլիսի 10-ին թվագրված փաս-տաթղթում հրահանգվում է. «Իսլամացած հայ որբ երեխանե-րին բաժանել բարեկեցիկ մուսուլման ընտանիքներին, հատ-կապես այն գյուղերում ու գյուղաքաղաքներում, ուր հայեր չկան, եթե երեխաների թիվը շատ է, նրանց տալ ապրուստը դժվարությամբ հոգացող մուսուլման ընտանիքներին և ամեն երեխայի համար ամսական 30 քուրուշ վճարել նրանց: Ապա պետք է ցուցակագրել այդ երեխաների թվի և գտնվելու վայրի մասին տվյալներն ու դրանք ուղարկել կենտրոն: Հատուկ նշվում է, որ այս երեխաները հանձնվում են այդ ընտանիքնե-

---

[19] Atnur İ., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 56-57

[20] Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Եր., 2010, էջ 84:

ին այն պայմանով, որ նրանց տրվի մուսուլմանական կրթություն»[21]:

Օսմանյան իշխանությունները մուսուլմաններին են բաժանել ոչ միայն հայ որբ երեխաներին, այլև անգամ նրանց, ում ծնողները դեռ ողջ են եղել: Օրինակ, Մարզվանի, Ամասիայի և Թոքատի (Եվդոկիա) տարագիր հայության աքսորի ժամանակ պետական պաշտոնյաները քարավաններից առանձնացրել են երեխաներին, իսկ նրանց տարագիր ծնողներին հրամայել շարունակել ճանապարհը: Այնուհետև հայտարարություններ են տարածել շրջակա գյուղերի մուսուլման բնակչության շրջանում, որպեսզի գան և վերցնեն իրենց նախընտրած հայ երեխային[22]:

Հ. Հովակիմյանը փոխանցում է, որ Տրապիզոնի վիլայեթում ևս հայերի բռնի իսլամացումն առավելապես տարածվել է երեխաների վրա. «Հայերու տեղահանման և բնաջնջման հետ տեղի ունեցաւ նաեւ բռնի իսլամացումը, որ ֆիզիքական գոյութիւնը պահելու միջոց մըն էր միայն: Շատերը պատրաստուեցան ընդունիլ մահմետականութիւնը, բայց ան չգործադրուեցաւ մեծերու վերաբերմամբ, այլ ի զորու եղաւ միայն փոքրերուն համար»[23]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ չնայած պատերազմական վիճակին, թուրքական կառավարությունը ձգտում էր հայ որբ երեխաներին տալ հատկապես թուրքական որբանոցներ: Ըստ թուրքագետ Ռ. Մելքոնյանի եզրակացության՝ օսմանյան ղեկավարների՝ հայ երեխաներին թուրքական որբանոցներ վերցնելու շահագրգռվածությունը պայմանավոր-

---

[21] Տես նույն տեղը, էջ 83:

[22] Զավէն Արքեպիսկոպոս,Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ և վկայութիւներ, Գահիրե, 1947, էջ 138:

[23] Յովակմեան Յ., Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պեյրութ, 1967, էջ 264:

ված էր նրանց իսլամացնելու և ձուլելու ցանկությամբ, քանի որ այդ տարիներին Օսմանյան կայսրության տարածքում գործում էին եվրոպական, ամերիկյան, միսիոներական որբանոցներ ևս[24]:

Հայ որբերի թուրքացման հարցում հատկապես ակտիվ գործունեություն է ծավալել երիտթուրք պարագլուխներից - Ջեմալ փաշան, որի նախաձեռնությամբ Լիբանանում «Ային - Թուրա» ճիզվիտական մենաստանում հիմնվել է որբանոց, որտեղ հավաքել են շուրջ 1200 հայ երեխա՝ իսլամացնելու և թուրքացնելու նպատակով[25]: Ջեմալ փաշան հայ երեխաներին իսլամական և թուրքական կրթություն տալու նպատակով այնտեղ է հրավիրում հայտնի պանթյուրքիստ, գրող Հալիդե Էդիփին:

«Ային Թուրա» որբանոցի և այնտեղ հայ որբերի թուրքացման մասին արժեքավոր մի տվյալի ենք հանդիպում հենց այդ որբանոցի նախկին «սան» Թորոս Թադևոսյանի՝ մեծանուն պատմաբան Ջոն Կիրակոսյանին 1983թ. ուղղված նամակում: Նամակի հեղինակը մեկն է այն 1200 հայ երեխաներից, որոնք Ջեմալ փաշայի հրամանով հավաքվել էին «Ային - Թուրա» որբանոցում: Թադևոսյանը պատմում է. «Մեզ տեղ հասցնելուց անմիջապես հետո թուրքացրին, անուններս փոխեցին, դասարանների բաժանեցին, Կ. Պոլսից հրավիրված դասատուները սկսեցին մեզ հետ պարապել: Խստիվ արգելեցին հայերեն խոսել: Հատուկ դասարանի ավագներ նշանակեցին մեծահասակներից, որոնց պատվիրել էին հայերեն խոսողներին ցուցակագրել պատժելու համար: Այս ավագները հավատարմությամբ կատարում էին իրենց պարտականութ-

---

[24] Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Եր., 2010, էջ 84:

[25] Parseghian Nora, "New revelation on the Armenian genocide". www.aztagdaily.com/EnglishSupplement/FEA_02012006_0001.htm

յունները: Ամեն երեկո, երբ ամբողջ երեխաներին հավաքում էին աշխատողների հետ միասին ԶԱՌՅԱ-ի և բոլորը միատեղ երեք անգամ <թագավորը երկար ապրի> էին գոչում, այդ հանդիսավոր ժամին կարդում էին օրվա հայերեն խոսողների ցուցակը և թուրքավարի պատժում ամեն օր, մինչև որ բոլոր երեխաները վերջ տվին հայերեն խոսելուն»: Խոսելով որբանոցում հավաքված հայ երեխաների դաստիարակության մասին՝ Թ. Թադևոսյանը նշում է. «Մեզ դաստիարակում են մոլեռանդ թուրքեր, սովորեցնում թունդ շովինիստական ազգային երգեր, թուրք ազգի անցյալն ու ներկան գովերգող և պանթուրքիզմն ու պանիսլամիզմը գովաբանող: Անցել է ավելի քան վաթսուն տարի, և տակավին հիշում եմ այդ երգերից առանձին քառյակներ»[26]: Ցեղասպանությունը վերապրողի հուշերից նաև պարզ է դառնում, որ պարտությունից հետո, երբ թուրքերը փախչելիս են եղել, հանձնարարել են որբանոցի դեղագործ Ռիզա բեյին ճաշը թունավորելու միջոցով սպանել որբանոցի բոլոր երեխաներին: Սակայն թուրքացած բուլղար Ռիզա բեյը չի կատարել այդ ոճիրը, ինչի մասին հետագայում պատմել է որբանոցի սաներից մեկին, որին պատահաբար հանդիպել է Ստամբուլում:

Ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն ու թուրքացումը կատարվում էին նաև մուսուլմանական հասարակության միջոցով: Մուսուլմանների կողմից հայ երեխաների «փրկության» շարժառիթը ոչ թե հումանիստական, այլ շահադիտական մղումներն են եղել: Խլելով և ձուլելով հայ երեխաներին՝ թուրք և քուրդ գյուղացիները մի կողմից՝ ձեռք էին բերում ձրի աշխատուժ, մյուս կողմից՝ հատկապես աղջիկ երեխաները համալրում էին նրանց հա-

[26] Ջոն Կիրակոսյան, Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում (Արման Կիրակոսյանի թարգմանությամբ), Եր., 2009, էջ 298-299:

ռեմները: Համաձայն իսլամա-թուրքական ամուսնական սովորույթների՝ տղայի կողմն ուղղակի գնում է հարսին՝ նրա ծնողներին վճարելով որոշակի գումար: Ձեռք բերելով հայ աղջիկ երեխաներին՝ այնուհետև նրանց ամուսնացնում են իրենց տղաների հետ՝ այդպիսով խուսափելով նաև ամուսնական «գլխագին» վճարելու ծանր պարտականությունից[27]:

2009թ. Թուրքիայում հրատարակվեց լրագրող-ուսումնասիրող Մուրադ Բարդաքչրի բավական քննարկվող գիրքը, որտեղ ներկայացված են Թալեաթ փաշայի անձնական արխիվում պահված և մինչ այդ չհրապարակված մի շարք փաստաթղթեր, գրագրություն, նրա անձնական գրառումները: - Մասնավորապես, գրքում առկա է Թալեաթի ձեռագրով գրված մի գրություն, որը վերնագրված է «Հայ որբերը», որտեղ նա նշում է, թե որ նահանգում քանի հայ որբ է բաժանվել մուսուլման ընտանիքներին՝

Էրզրումի նահանգ՝ 500
Ադանայի նահանգ՝ 90
Դիարբեքիրի նահանգ՝ 1800
Տրապիզոնի նահանգ՝ 2292
Սեբաստիայի նահանգ՝ 1500
Ճանիկի գավառ՝ 561
Մարաշի գավառ՝ 25

Ենթադրելի է նաև, որ սա ամբողջական ցուցակը չի եղել, այլ ուղղակի Թալեաթը մուտքագրել է ստացված տվյալները նահանգներից, որոնք հետագայում լրացվել են[28]:

---

[27] Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Եր., 2010, էջ 86:
[28] Նույն տեղում, էջ 85:

Ամփոփում

Ոչ մուսուլման ժողովուրդների երեխաների բռնի իսլամացումն ու թուրքացումը խոր արմատներ են ունեցել Օսմանյան կայսրությունում: Կրոնափոխության հարմար թիրախը երեխաներն են եղել: Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն ու ձուլումը կատարվել են երկու մակարդակով՝ պետության և հասարակության լայն խավերի կողմից: Օսմանյան իշխանությունները հայ երեխաներին իսլամացնելու և թուրքացնելու նպատակով վերցրել են պետական թուրքական որբանոցներ, և պետությունն իր համապատասխան կառույցներով և մեթոդներով երեխաներին բաժանել է մուսուլման բնակչությանը:

Հայոց ցեղասպանության տարիներին հայ որբերի բռնի իսլամացումը կրել է պետական քաղաքականության բնույթ և գտնվել թուրք ամենատարբեր բարձրաստիճան ղեկավարների ուշադրության կենտրոնում: Բացի այդ, հայ որբերի բռնի իսլամացման մեջ չափազանց մեծ դեր են ունեցել նաև մուսուլմանական հասարակության տարբեր շերտերը:

Key words. Armenian orphans, institution (devshirme) of children' gathering, regiment of yenichers, Armenian orphans "rescue", fanatic Turkish, forced Islamization

Summary

Forced Islamization and Turks of non-Muslim people had deep roots in The Ottoman Empire. The target of the apostacy were children. During the Armenian genocide forced Islamization and Assimilation of the Armenian children were made by the broad layers of the state and society. The Ottoman Empire took the Armenian children to Turkish orphanages to turn into Muslim and Turks, and the state gave out the children to Muslim people with his appropriate installations and methods.

Forced Islamization of the Armenian orphans during Genocide years had nature of state policy and was in the center of attention of various Turkish leaders. In addition, different layers of Muslim society had also a major role in forced Islamization of the Armenian orphans.

Ключевые слова. Армянские сироты, институт сбора детей (девширме), полк еничеров, “спасения” армянских сирот, фанатичные турки, насильная исламизация

Резюме

Насильная исламизация и туркизация детей не мусулманского народа в Османской империи имела глубокие корни. В вероотступничстве удобной мишенью были дети. В годы армянского геноцида насильная исламизация и ассимилация детея-армян исполнялись двумя уровнями государственным и социальным. Два основных направление Османской власти - дети были взяти в государственные турецские приюты – с целью туркизации и исламизации, государство при помощи соответствующих учриждений распределяло детей в турецкие семьи.

В годы геноцида армян исламизация армянских сирот носила государственный политический характер и находилось в центре внимания самых высокоставленных руководителей. Кроме того в деле исламизации сирот-армян большую роль играли разные социальные мусулманского общество.

ԾՈՎԻՆԱՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Օտար լեզվի և գրականության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Հայոց լեզվի, գրականության և լրագրության
ամբիոնի դասախոս, պատմ. գիտ. թեկ., դոցենտ՝ Լիլիթ Զաքարյան

«ՆԵՄԵՍԻՍ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ: ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՄԱՀԱՊԱՏԻԺՆԵՐԸ

Բանալի բառեր- Նեմեսիս, պատժիչ կառույց, երիտթուրքական պարագլուխներ, դատավճիռ, արդարության մարտիկներ, եվրոպական հասարակական կարծիք:

«Նեմեսիսը» ՀՀԴ կուսակցության կազմակերպած հատուկ գործողությունն էր՝ ահաբեկման միջոցով Հայոց Մեծ եղեռնը կազմակերպող և իրականացնող երիտթուրքական կառավարության պարագլուխներին պատժելու նպատակով: Բացի երիտթուրք պարագլուխներից՝ «Նեմեսիսի» թիրախն էին նաև Բաքվի ջարդերի կազմակերպիչ մուսաֆաթական գործիչները և թուրքերի հետ համագործակցող հայ դավաճանները: Այս առումով տեղին է շեշտել, որ «Նեմեսիսը» ահաբեկչական կառույց չէր, այլ պատժիչ: «Նեմեսիս» գործողությունը ծնվեց 1919թ. Երևանում գումարված Հայ Հեղափոխական Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովում: Գործողության անվանումն ընտրվեց ի պատիվ հունական դիցաբանության վրեժի աստվածուհի Նեմեսիսի:

«Նեմեսիս» ծրագիրը պետք է իրականացներ պատասխանատու մարմինը, որի նախագահ ընտրվեց «Բանկ Օտտոմանի» գործողության կազմակերպիչներից Արմեն Գարոն,

որն այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության դեսպանն էր ԱՄՆ-ում: Շահան Նաթալին և Գրիգոր Մերճանովը պիտի ղեկավարեին գործողության ընդհանուր իրականացման ընթացքը: Ստեղծվեց հետախուզական խումբ՝ Հրաչ - Փափազյանի գլխավորությամբ, որի խնդիրը դահիճներին հայտնաբերելն էր:

Առաջին աշխարհամարտում (1914–1918թթ.) Օսմանյան կայսրության պարտությունից (1918 թ., հոկտեմբերի 30) հետո երիտթուրքական կառավարության ու կուսակցության պարագլուխները գերմանական սուզանավով Կոստանդնուպոլսից տեղափոխվել են Գերմանիա: Թուրքիայի՝ 1918թ. դեկտեմբերի 16-ի դեկրետով «Միություն և առաջադիմություն» կառավարող կուսակցության և երկրի կառավարության պարագլուխներ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Բեհաէդդին Շաքիրը և ուրիշներ մեղադրվել են Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու, հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը կազմակերպելու համար և հեռակա կարգով դատապարտվել մահվան: 1919թ. Երևանում ՀՀԴ կուսակցության IX ընդհանուր ժողովը որոշում է ընդունել ի կատար ածել երիտթուրքական պարագլուխների նկատմամբ դատավճիռը: Արձանագրվել է ցեղասպանության հանցագործների 650 անուն, որոնցից առանձնացվել են 41 գլխավոր հանցագործները[29]:

1921թ. մարտի 15-ին Բեռլինում հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանը գնդակահարեց երիտթուրքերի պարագլուխ, Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատու Թալեաթին: Գործողությունն իրականացնելուց հետո Թեհլերյանը փախուստի չդիմեց, հանձնվեց գերմանական իշխանություններին: Թեհլերյանի դատը, սակայն, վերածվեց երիտթուրքական դատավարության: Գերմանական դատարանը, արդա-

[29] http://www.encyclopedia.am

բացի և հիմնավոր գտնելով Թեհլերյանի վրեժխնդրությունը, հենց դատարանի դահլիճից նրան ազատ արձակեց: Թալեաթին դեռ պիտի հաջորդեին մյուսները...

Պետք է նշել, որ «Նեմեսիս» ծրագիրը հեշտությամբ չհաստատվեց: Դաշնակցության շարքերում ընդդիմացան անվանի գործիչներ Սիմոն Վրացյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Ռուբեն Դարբինյանը, Արշակ Ջամալյանը: Սակայն անգամ նրանց հեղինակությունը չկարողացավ արգելակել «Նեմեսիսի» իրականացումը:

1919 թ. Թիֆլիսի Երևանյան հրապարակում տակավին պատանի Արամ Երկանյանը գնդակահարեց մուսաֆաթական դահիճ Ղասիմբեկովին:

1920 թ. հունիսի 19-ին Արամ Երկանյանը գնդակահարեց Ադրբեջանի նախկին վարչապետ Ֆաթալի Խան Խոյսկուն և նրա գործակից, Շուշիի հայերի ջարդարար Սաֆարովին:

1921 թ. հուլիսի 21-ին Ստամբուլում Միսաք Թորլաքյանը գնդակահարեց Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բեհբութ Ջևանշիր խանին: Թորլաքյանը Թեհլերյանի նման վարվեց, փախուստի չդիմեց, և անգլիական դատարանը անմեղսունակ ճանաչեց նրան:

1921 թ. դեկտեմբերի 5-ին Հռոմում Արշավիր Շիրակյանը, համընթաց նետվելով կառքը, որով երթևեկում էր երիտթուրքերի կառավարության վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, կրակելով տապալեց նրան և կանգնեցնելով կառքը՝ հեռացավ:

Մի քանի ամիս անց՝ 1922 թ. ապրիլի 15-ին, Արշավիր - Շիրակյանն ու Արամ Երկանյանը Բեռլինում, Թալեաթի այրու աչքերի առաջ, սպանեցին Տրապիզոնի հայերի ջարդերի

կազմակերպիչ դոկտոր Ջեմալ Ազմիին և Բեհաեդդին Շաքիրին[30]:

1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում՝ Չեկայի շենքի դիմաց, Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը գնդակահարեցին Օսմանյան Թուրքիայի ռազմածովային ուժերի նախկին հրամանատար Ջեմալ փաշային:

Երիտթուրք պարագլուխներից «Նեմեսիսի» վրիժառությունից սկզբնական շրջանում խույս տվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղար, Թուրքիայի ներքին գործերի նախարար Էնվեր փաշան: Սակայն Էնվերին 1922 թ.՝ փախուստի պահին, Միջին Ասիայում գնդակահարեց Կարմիր բանակի հրամանատար Հակոբ Մելքումյանը:

Երիտթուրք մյուս դահիճը՝ դոկտոր Նազիմը, 1926 թ. մահապատժի ենթարկվեց Թուրքիայում՝ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի դեմ կազմակերպած մահափորձի համար:

Ինչպես վերը նշվեց, «Նեմեսիս» ծրագրի խնդիրն էր ոչնչացնել ոչ միայն երիտթուրքերի պարագլուխներին, այլև հայ դավաճաններին: Մասնավորապես, 1920 թ. Սողոմոն Թեհլերյանի գնդակով սպանվեց Թուրքիայի գաղտնի ոստիկանության քաղաքական ղեկավար Մկրտիչ Հարությունյանը: - Նույն թվականին Արշավիր Շիրակյանը գնդակահարեց Պոլսի հայ մտավորականների ցուցակը կազմած դավաճան Վահե Եսայանին:

Տեղին է նշել, որ «Նեմեսիսի» մարտիկներն իրենց գործողություններն իրականացնելու համար ընտրում էին մարդաշատ վայրեր: Դրա նպատակը մեծ աղմուկ բարձրացնելն ու հասարակական հնչեղություն ապահովելն էր: Ավելորդ չէ նշել նաև, որ հայ վրիժառուների գործողություններից երբևէ

---

[30] Արշավիր Շիրակյան, «Կտակն էր նահատակներուն», Եր., 1991թ., էջ 29:

անմեղ մեկը չի տուժել: Այս ամենը ապահովեց նաև եվրոպական հասարակական կարծիքի ձևավորումը, որ «Նեմեսիսի» իրագործողները մարդասպաններ չեն, այլ հանուն վրեժի և արդարության զենք վերցրած մարտիկներ:

Ցավոք, «Նեմեսիսը» կարճ կյանք ունեցավ: 1922 թ. Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի վտարանդի կառավարությունները ստորագրեցին «Պրոմեթևս» նախագիծը, որի նպատակը համատեղ պայքարն էր բոլշևիզմի դեմ: «Պրոմեթևս» ծրագրի կյանքի կոչումից հետո ՀՀԴ Բյուրոն որոշեց դադարեցնել «Նեմեսիսը», ինչը մեծ ընդդիմություն առաջացրեց թե դաշնակցության շարքերում, թե հայության մեջ առհասարակ: Սա թերևս ՀՀԴ-ի ընդունած ամենաամոթալի և ամենասխալ որոշումներից էր, երբ ազգային վրեժխնդրությունը ստորադասվեց կոմունիզմի դեմ պայքարի գաղափարին: Դրանով ՀՀԴ-ն ոչ միայն հաշտության ձեռք մեկնեց դարավոր ոսոխին, այլև, ըստ էության, ստվեր նետեց իր իսկ փառահեղ անցյալի վրա:

Մի քանի տարի անց Շահան Նաթալին առաջարկեց ՀՀԴ Բյուրոյին՝ վերսկսել «Նեմեսիսի» իրագործումը: ՀՀԴ Բյուրոն մերժեց, որն էլ պատճառ դարձավ Նաթալիի՝ կուսակցությունից հեռանալուն: Դրանից հետո Շահան Նաթալին Փարիզում հիմնեց «Արևմտահայ ազատագրական ուխտը»:

«Նեմեսիսի» մասնակիցներն են՝

Շահան Նաթալի(1884-1983), Արմեն Գարո (Գարեգին - Պաստերմաջյան, 1872—1923), Միսաք Թոռլաքյան (1894 - 1968), Արշավիր Շիրակյան (1902 -1973), Արամ Երկանյան (1895 -1930), Արտաշես Գևորգյան, Պետրոս Տեր-Պողոսյան, Ստեփան Ծաղիկյան [31]:

---

[31] http://archive.ankakh.com/2011/02/92770/

Ամփոփում

«Նեմեսիսը» ՀՀԴ կուսակցության կազմակերպած հատուկ գործողություն էր՝ ահաբեկման միջոցով Հայոց մեծ եղեռնը կազմակերպող և իրականացնող երիտթուրքական կառավարության պարագլուխներին պատժելու նպատակով:

«Նեմեսիս» ծրագրի խնդիրն էր ոչնչացնել ոչ միայն երիտթուրքերի պարագլուխներին, այլև հայ դավաճաններին: Այսպիսով, Նեմեսիս գործողության շրջանակներում պատժվեցին Հայոց մեծ եղեռնի գրեթե բոլոր կազմակերպիչները և իրականացնողները շնորհիվ «Նեմեսիսի» քաջ մարտիկների:

Резюме

Операция «Немезис» акция возмездия партии Дашнакцутюн по убийству лидеров Османской империи, причастных к организации Геноцида армян.

«Немезис» - название операции по осуществлению актов возмездия в отношении лидеров турецкой партии "Единение и прогресс", виновных в организации и осуществлении Геноцида армян.

Задача «Немезиса» была уничтожить не только лидеров младотурок, но также армянских предателей. Таким образом в течении акции «Немезис» были наказаны почти все организаторы и исполнители Геноьида Армян, благодаря храбрых солдатов Немзиса.

Summary

Operation «Nemesis» was a covert operation by the Armenian Revolutionary Federation (Dashnaktsutyun) during which a number of former Ottoman and Azerbaijani political and military figures were assassinated respectively for their roles in the Armenian Genocide killings.

«Nemesis» - the name of the operation for the implementation of acts of retribution against the leaders of the Turkish party "Unity and Progress", responsible for the organization and implementation of the Armenian Genocide.

The task of «Nemesis» was to destroy not only the leaders of the Young Turks, but also Armenian traitors. Thus, during the promotion «Nemesis» were punished almost all the organizers and implementers Armenian Genocide due to brave soldiers of «Nemesis>

ՍԵՐԳՈԺԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող
ղեկավար՝ Իրավագիտության և հասարակագիտության ամբիոնի դասախոս Հակոբ Քնաջյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԺԽՏՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Բանալի բառեր- Հայոց ցեղասպանության ժխտում, աքսոր և տեղահանություն, ժխտողական քաղաքականություն, Սփյուռք, ճշմարտության վերականգնում:

<Ամենամեծ ոճրագործները նրանք են, ովքեր քարոզում են իրենց անմեղությունը՝ հիմնվելով ստի ու կեղծիքի վրա: Վստահ լինելով, որ իրենց սուտը ավելի համոզիչ կլինի, քան միլիոնավոր զոհերի արյունը, մազապուրծ եղածների և ականատեսների վկայությունները, թուրքերը փորձում են համայն աշխարհին խաբել իրենց արատը քարոզչությամբ>[32]:

Թուրքիայի <Միություն և առաջադիմություն> կուսակցությունը, տապալելով սուլթանին, եկավ իշխանության: Իշխանության եկած առաջին իսկ տարիներից կուսակցության առաջնորդները նախագծեցին, կազմակերպեցին Մեծ եղեռնը՝ այդպիսով փորձելով փակել Հայկական հարցը: Օգտվելով աշխարհի պատերազմական վիճակից՝ սկսեցին տեղահանել ու կոտորել հայերին՝ հետագայում դա ներկայացնելով որպես զուտ պատերազմական անհրաժեշտություն: Ի-

[32] Իվ Թերնոն, «Հայեր. մի ցեղասպանության պատմություն», Փարիզ, 1977, էջ 65:

բականում ծրագիրը մեկն էր՝ տեղահանել և բնաջնջել հայ էթնոսին, զուտ նրա համար, որ հայ են:

Հետագայում թուրքերը ձեռնամուխ եղան պատմությունը կեղծելուն՝ փորձելով ամեն ինչ հակառակ ներկայացնել՝ իբրև հայերն են կազմակերպել թուրք ժողովրդի ջարդը: Բացի այդ, խեղաթյուրվեցին հայերի ունեցվածքի մասին փաստաթղթերը, հայկական մշակութային կոթողները: Դա ցեղասպանություն էր մի ողջ էթնոսի՝ իր մշակույթով: Թուրքիան իր ժխտողականությունը կառուցել է երեք հիմնական սկզբունքներով.

1. Պատասխանատվության տեղափոխում (այսինքն, հայերի կողմից են եղել կոտորածները):

2. Մտադրվածության ժխտում (այսինքն, ժխտվում է նախօրոք կազմակերպված լինելը, մասնակի ընդունվում է որոշ վայրերի տեղահանությունը, դա ներկայացնելով որպես ժողովրդի պաշտպանության անհրաժեշտություն):

3. Թվերի կեղծում (այսինքն, հայ բնակչության թվաքանակը, գույքը, մշակութային շինությունները կրճատ ներկայացնելը)[33]:

Ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը պատճառ է հանդիսացել ազգային ինքնության ճգնաժամի ցեղասպանությունից հետո առաջին սերնդի շրջանում: Սա ցեղասպանության յուրօրինակ շարունակությունն էր:

Սակայն հատկանշական է, որ վերջին ժամանակաշրջանում տեսնում ենք մեկ այլ իրականություն՝ ի պատասխան ժխտողական քաղաքականության, հայ երկրորդ և երրորդ սերնդի ներկայացուցիչները թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում միավորվել են և արտահայտում են նոր պարտավորություն՝ հակազդելու փաստերի հերքմանը և ժխտմանը:

---

[33] Տես Ֆլորես Մարսելո, «Հայերի ցեղասպանություն», Բոլոնիա, Մուլինո, 2007 թ.. էջ 74:

Ավելացել են նաև օտարազգի ներկայացուցիչների կողմից վկայությունները, ինչպես նաև պատմաբանների շրջանում տարածվել է մի նոր հետաքրքրություն՝ ցեղասպանության փաստերի ուսումնասիրման և վերահանման համար:

Ցեղասպանության ականատես վերապրողների հիշողությունները մեզ համար դարձել են պատմական հիշողություն:

Պատմական ճշմարտության վերականգնումը հայերի կողմից, ինչպես նաև օտարազգի բազմաթիվ ներկայացուցիչների ջանքերը այսօր օգնում են հաղթահարել Ցեղասպանության պատճառով գոյացած Հայաստանի և Սփյուռքի մեջ եղած անջրպետը:

Ժխտողական քաղաքականությունը պատճառ հանդիսացավ այս հարցի սխալ ընկալման համար, որը թողեց երկու բացասական ազդեցություն.

1. Պատմագրության բացակայություն (կեղծ աղբյուրների ստեղծում):

2. Հայ գրականության մեջ ցեղասպանության թեմային քիչ անդրադառնալը (պետության բացակայություն, գրաքննություն):

Մինչ ցեղասպանության իրագործելը, իրագործելու ընթացքում և դրանից հետո Թուրքիան ձեռնամուխ եղավ ստեղծելու իրեն պաշտպանող իրավական բնույթ ունեցող մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում էին հայերի արտաքսմանը և տեղահանությանը: Պատճառ բերելով Առաջին համաշխարհային պատերազմը՝ Թուրքիան այս կերպ փորձեց ապացուցել իր արարքների լեգիտիմությունը: Տեղահանումները և գաղթը կրկնակի առավելություններ էին տալիս թուրքերին՝ յուրահատուկ ձևով լուծելու Հայկական հարցը՝ թաքցնելով հազարավոր մարդկանց մահվան դատավճիռները տեղահանությունների և գաղթի ետևում:

Ցեղասպանության ժամանակ Օսմանյան կայսրությունը զարգացրել էր իր ապատեղեկատվական մեքենան՝ տարածելով հայերի դավաճանության և հայերի կողմից պատրաստվող դավադրության մասին կեղծ փաստեր՝ հայերի ինքնապաշտպանական մարտերը ներկայացնելով որպես ապացույց: Հայերի <դավաճանության> հեքիաթի և պատասխանատվության մասին խոսվում է 1916թ. Բարձր դռան կողմից հրատարակված <Սպիտակ թղթի> մեջ, որում դատապարտվում է Հայ հեղափոխական կոմիտեների գործունեությունը: Այս քարոզչական փաստաթուղթը՝ ստեղծված ներքին գործերի նախարարության կողմից, կազմված է հայ հեղափոխականների կողմից հրատարակած տեքստերից, երբ դեռ հայերը պայքարում էին Աբդուլ Համիդի դեմ՝ աջակցելով երիտթուրքերին: <Սպիտակ թուղթը> հնարավորություն է տալիս թուրքական կառավարությանը՝ հիմնավորել մի շարք դաժանություններ և անկարգություններ:

Ժխտողականությունն ակնհայտ է դառնում 1919-1920թթ. Ստամբուլում տեղի ունեցած դատավարությունների ժամանակ: Ցեղասպանության կազմակերպիչներին հեռակա դատապարտում են մահապատժի, իսկ մի մասի նկատմամբ պատիժ չեն կիրառում կամ դատապարտում են շատ մեղմ[34]:

Թուրքիայի ժխտողականության ամենամեծ դրսևորումը Սևրի պայմանագրից հրաժարվելն էր, որտեղ ակնհայտ խոսվում էր տարածքները վերադարձնելու, փոխհատուցման մասին: Սակայն արտաքին աշխարհից ոչ մի արձագանք չեղավ իրենց կողմից կնքած պայմանագրի կետերի պահանջների կատարման վերաբերյալ: Օսմանյան կայսրության ժխտողական քաղաքականությունը ոգևորեց Թուրքիայի - Հանրապետությանը:

[34] “La Turquie devant le Tribunal mondial”

Մուստաֆա Քեմալը, գալով իշխանության, հիմնվելով - Թուրքիայի տարածքային ամբողջականության վրա, վերջ տվեց բոլոր դատավարություններին: Քեմալականները շարունակեցին պնդել, որ միակ պատասխանատուն հայերն են: Լոզանի կոնֆերանսի ժամանակ թուրք նախարար Մուստաֆա Իսմեթ Ինյոնյուն, խոսելով Հայկական հարցի մասին, բոլոր մեղքերը բարդեց հայերի վրա՝ պատճառաբանելով, որ իրենց բոլոր քայլերը անհրաժեշտություն էին, զուտ ապստամբությունը ճնշելու միջոց: Այս թեզը հիմք է հանդիսանում այն քաղաքական գործիչների համար, ովքեր առաջնորդվում են ժխտողական դիրքորոշմամբ[35]:

1931թ. ստեղծվեց մի առավել ցինիկ թեզ, որով ասվում էր, որ կոտորածները անհրաժեշտություն էին մեծ պետություն ստեղծելու համար: Անատոլիան բնաջնջելով հայերից՝ - Թուրքիան դարձավ էթնիկ միատարր պետություն[36]:

Թուրքական քաղաքականությունը հետագայում շարունակվեց նույն կերպ. Ցեղասպանության մասին ոչ մի տեղ չհիշատակվեց, ավելին, խեղաթյուրվեց ողջ պատմությունը: 1945թ. Թուրքիան դարձավ ՄԱԿ-ի անդամ և ստորագրեց Ցեղասպանության վերաբերյալ հռչակագիրը: Մինչդեռ 1915-1916թթ. դեպքերը հենց ցեղասպանություն էր: Թուրքիայի կառավարությունը փոխեց իր դիրքորոշումը՝ ցեղասպանությունը ժխտելուց բացի՝ խեղաթյուրեց իր և հայկական պատմությունը: Այն, ինչ հայկական էր, վերագրեց իրեն[37]:

Թուրքիան, լինելով հզոր պետություն, ներկայացնելով ՆԱՏՕ-ի շահերը տարածաշրջանում՝ կարողանում է իրականացնել իր ժխտողական քաղաքականությունը: Նա օգտագործում է իր բոլոր լծակները ժխտողականության հարցում:

---

[35] Mandelstam A N.. La Socie'te' des Nations at les Puissances devant le proble'me arme'nien, 2 e'me e'd, Beyrut, 1970, p. 260-280:

[36] Norbert de Bischoff “ La Turquie dans le monde “

[37] Georges Brandés “L’Arménie et I’Europe”

Անկարան ստեղծել է պատմաբանների խումբ, որոնք զբաղվում են ցեղասպանության ժխտողականությամբ: 1889թ. արտաքին գործերի նախարարը հայտարարել էր, որ բացել են արխիվները բոլոր պատմաբանների համար, սակայն մինչև 1894թ. և Առաջին համաշխարհային պատերազմին վերաբերող նյութերի համար դեռ պետք է սպասել:

Չնայած որ գրեթե բոլոր թուրք պատմաբանները ժխտողական վերաբերմունք ունեն Հայոց ցեղասպանության վերաբերյալ, բայց կան նաև այնպիսիք, ովքեր համոզված են, որ տեղի ունեցածը իսկական ցեղասպանություն է: Բացառություններից է թուրք պատմաբան Թաներ Աքչամը, ով առաջիններից է, որ դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Նա իր հայացքների համար 1976թ. դատապարտվել է տասը տարվա բանտարկության: 1995թ. նա, հիմնվելով 1919-1922թթ. Ստամբուլի ռազմական դատարանի ակտերի, փաստերի և գործառույթների վրա, ներկայացրել է իր թեզը՝ <-Թուրքական նացիոնալիզմը և Հայոց ցեղասպանությունը> վերնագրով: Ըստ Թաների, երբ հանդիպում են հայը և թուրքը, հայը թուրքի մեջ տեսնում է ոճրագործի, իսկ թուրքը հայի մեջ՝ դավաճանի:

Թուրքիայում մինչև հիմա պայքարում են այլակարծության դեմ: Այստեղ գործում է 301 հոդվածը, որով հիմնականում պատժում են այլախոհերին: 2005թ. մայիսի 17-ին հրատարակիչ Զարաքոլուին կանչեցին դատարան՝ իր տպագրած 'The Truth Will Set Us Free: Armenians and Turks Reconciled' գրքի համար:

301 հոդվածը շատ պատմաբանների է ստիպել լռել: -Թուրք գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկը նույնպես հետապնդվել է 301 հոդվածով:

Չնայած թուրքական ժխտողական քաղաքականությանը՝ ուրախացնող փաստ է, որ շատ երկրների կառավարություններ, հայտնի անհատներ ճանաչում և դատապարտում են

Հայոց ցեղասպանությունը: Ճանաչումը շարունակվում է: Համոզված ենք՝ վաղ թե ուշ Թուրքիան պետք է առերեսվի իր պատմությանը, և պետք է լինի ճանաչում և փոխհատուցում:

Ամփոփում

Թուրքիայի <Միություն և առաջադիմություն> կուսակցությունը, գալով իշխանության, կազմակերպեց Հայոց ցեղասպանությունը: Օգտվելով պատերազմական վիճակից՝ սկսեցին կոտորել և տեղահանել հայերին՝ հետագայում դա ներկայացնելով որպես պատերազմից բխող անհրաժեշտություն: Ծրագիրը մեկն էր՝ բնաջնջել հայ էթնոսին:

Հետագայում թուրքերը փորձեցին ամեն ինչ հակառակ ներկայացնել՝ իբրև հայերն են կազմակերպել թուրք ժողովրդի ջարդը: Նրանք կեղծեցին պատմությունը, խեղաթյուրեցին հայերի ունեցվածքի մասին փաստաթղթերը, մշակութային կոթողները:

Հատկանշական է, որ Ցեղասպանությունից հետո հայ երկրորդ և երրորդ սերունդը թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում միավորվել են և արտահայտում են նոր պարտավորություն՝ հակազդելու փաստերի հերքմանը և ժխտմանը:

Թուրքիայի ժխտողականության ամենամեծ դրսևորումը Սևրի պայմանագրից հրաժարվելն էր, որտեղ խոսվում էր տարածքների վերադարձման և փոխհատուցման մասին:

Անկարան ստեղծել է պատմաբանների խումբ, որոնք զբաղվում են ցեղասպանության ժխտմամբ: Չնայած որ գրեթե բոլոր թուրք պատմաբանները ժխտողական վերաբերմունք ունեն Հայոց ցեղասպանության վերաբերյալ, բայց կան այնպիսիք, ովքեր համոզված են, որ տեղի ունեցածը իսկական ցեղասպանություն էր:

Ի հակառակ թուրքական ժխտողական քաղաքականության՝ շատ երկրների կառավարություններ ճանաչում և դատապարտում են Հայոց ցեղասպանությունը:

Key words. Denial of Armenian genocide, exile and eviction, denaying policy, diaspora, rehabilitation of truth

Summary

Coming to power Turkish "Union and progress" party organized Armenian genocide. Making use of the war they started slaughtering and exiling Armenians, in future they presented it as a military urgency. The plan was to annihilate the Armenian ethnos.

In future Turks tried to present everything contrary as if the Armenians had organized the slaughter of Turks. They falsified the history, mutilated the documents of the property of Armenians and destroyed cultural monuments.

It is characteristic that Armenian second and third generation both in native land and diaspora is joined together and expresses a new obligation to oppose the refutation and denial of the documents.

The biggest manifestation of Turkish refutation was to refuse Sevres Treaty where was spoken about returning and compensation of the territories.

Ankara formed historians' group who is engaged in refutation of genocide. Inspite of almost all of the Turkish historians have negative treatment of Armenian genocide but there are ones who are sure what had happened was real genocide.

Inspite of Turkish denaying policy many governments recognize and sentence Armenian genocide. The recognition is in progress.

Ключевые слова. Отрицание Геноцида армян, изгнание и выселении, диаспоры, восстановление истины.

Резюме

Приход к власти турецкого " Союз и прогресс " партия организовала геноцид армян. Используя войны они начали забой и ссылать армян, в будущем они представили его в качестве военной

срочности. План состоял в том, чтобы уничтожить армянского этноса.

В будущих турок пытались представить все вопреки, как если бы армяне организовали убийство турок. Они фальсифицировали историю, изувечены документы собственности армян и уничтожены культурные памятники.

Характерно, что армянское второе и третье поколение как в родной стране и диаспоре соединяется вместе и выражает новое обязательство выступить против опровержения и отрицания документов.

ԳՐԵՏԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մանկավարժության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոն դասախոս Մարինե Մաճկալյան

ԲՈՒՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲՈՒՆԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՄ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԲԵԿՈՐՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր - բոնի իսլամացում, Ցեղասպանություն, տրավմատիկ հիշողություններ, հոգեբանական խնդիրներ, քրիստոնյա ազգեր, իսլմացման թիրախ:

Հայ կանանց և աղջիկների կյանքը Թուրքիայում եղել է տանջանքներով, տառապանքներով լի: Թուրք իշխանությունների ժխտողական և ուրացման քաղաքականությունը էլ ավելի է նրանց կյանքը դառնացրել: Ոչ միայն կառավարական մակարդակով, այլև թուրքական գրականության մեջ ևս արտացոլված է այդ մերժման քաղաքականությունը: Խոսելով գրականության դերի մասին՝ պրոֆեսոր Ռուբինա Փիրումյանը հետևյալ կարծիքն է արտահայտում.»Հավաստում եմ, որ գեղարուեստական գրականության մեջ է արտացոլում անհատի և իր միջավայրի փոխյարաբերութիւնն ու փոխներգործութիւնը. Այնտեղ է երեւում նրա վերաբերմունքը հաւա-

քական անցյալի հետ՝ ներկայի պարունակում»[38]: Սակայն հարկ է նշել, որ թուրքական գրականության մեջ այդ փաստը ամենևին էլ ճիշտ չի արտացոլվել: Գրականության մեջ թյուրքականության գաղափարախոսության քարոզիչ գրողները՝ - Զիյա Գյոքալփ (1876-1924թթ.), Մեհմեթ Թմին (1869-1944թթ.), Հալիդե Էդիփ Ադըվար (1884-1964թթ.), Աքա Գյունդուզ (1886-1958թթ.), Հայոց ցեղասպանության նախորդած և հաջորդած տարիներին իրենց ստեղծագործություններով ատելություն էին տարածում քրիստոնյա ազգերի հանդեպ: Պետք է հավելել նաև, որ մի ստվար խումբ են կազմում այն համարձակ թուրք գրողները, որոնք անդրադարձել են 1915թ. հաջորդած դեպքերին՝ հայկական կոտորածներին:Այդ գրողներից են՝- Վեդաթ Թուրքալի, Քեմալ Թահիր, Նազըմ Հիքմեթ, Յաշար - Քեմալ, Քեմալ Յալչընն, Ֆեթհիյե Չեթին, Յուսուֆ Բաղի, Ֆիլիզ Օզդեմի, Էլիֆ Շաֆաք:

1915թվականը անջնջելի հետք է թողել ամբողջ հայության ճակատագրի վրա, տրավմատիկ հիշողությունները, հոգեբանական բարդ խնդիրները և խորը վախը ուղեկցել է նրանց ամբողջ կյանքի ընթացքում: Գերմանացի արևելագետ Յոհաննես Լեփսիուսը աքսորյալ հայ կանանց և երեխաներին անվանում էր «իսլամի իսկական ավար»[39]: Հայտնի է, որ հազարավոր հայերի բռնի իսլամացումը տեղի է ունեցել 1915-23թթ. Հայոց ցեղասպանության տարիներին: Ցեղասպանության ժամանակ առևանգման և իսլամացման թիվ մեկ թիրախը, կարելի է ասել, եղել են հայ կանայք և աղ-

---

[38] **Peroomian R** ., And Those Continued Living in Turkey after 1915:The Metamorphosis of the Post-Genocide Armenian Identity as Reflected in Artistic Literature, Yerevan, 2008, p. 256.

[39] **Լեփսիուս Յո.,** Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1-ին, թարգմանիչ՝ Վ.Մինալյան, Եր., 2006, էջ 45:

ջիկերը: Առևանգելով նրանց՝ մուսուլմանները նախ ազատվում էին ամուսնությունների ժամանակ վճարվող «գլխագնի» ծանր ֆինանսական բեռից և, բացի այդ, համալրում իրենց հարեմները: Բռնի իսլամացված կանանց մասին կան բավական թվով փաստեր, օրինակ, 1918թ. դեկտեմբերի 22-ին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Մուստաֆա Արիֆը մեծ վեզիրի աշխատակազմ և այնտեղից էլ համապատասխան գերատեսչություններ է ուղարկում մի շրջաբերական, որը վերաբերում է հայերին:Այդ շրջաբերականի 9-րդ կետում նշված էր.»Կրոնը փոխած և մուսուլմանների հետ ամուսնացած կանայք կարող են իրենց նախկին կրոնին վերադառնալ և այդ պարագայում նշանադրումը համարվում է անվավեր»[40]: Այս փաստաթուղթը խորությամբ պատկերում է ցեղասպանության տարիներին տեղի ունեցած բռնի իսլամացումը և հիմնահատակ հերքում թուրքական ժխտողականության մեջտեղ նետված թեզը «Հայերի կամովին իսլամ ընդունելու» վերաբերյալ: Թուրքիայում տասնամյակներ շարունակ ժխտման և մոռացության քաղաքականությունն անգամ չի կարողացել հասարակական լայն խավերի հիշողությունից ջնջել Հայոց ցեղասպանության հետ կապված հիշողությունները:Ինչպես նշում է թուրք գրաքննադատ Օմեր Թուրքեշը՝ «Անցյալը, ահա ինչքան ժամանակ է, բաց չի թողնում Թուրքիայի հասարակության օձիքը»[41]: Իսկ հետազոտող Մայքլ Սխուդսոնը անցյալը մոռացության տալու փորձերի առնչությամբ նշում է. «Անցյալը, որոշ իմաստով և որոշ պայմանների դեպքում, մեծապես դիմադրողունակ է իրենից վեր կանգնե-

---

[40] **Atnur I.,** Turkiyede Ermeni kadinlari ve cocuklari meselesi 1915-1923, Ankara, 2005, s. 120

[41] **Turkes O.,** Hafizanin baskaldirisi, Radikal, 07.09.2007.

լու փորձերի նկատմամբ»[42]: Տրավմատիկ հիշողությունները բազմաշերտ հետևանքներ են ունենում անհատի և հասարակության վրա և դրանցից են տրավմայի առաջացրած հոգեկան ու հոգեբանական խնդիրները: Ընդունված է կարծել, որ տրավմայից ազատվելու ձևերից մեկը այդ մասին պատմելն է, որը կարող է բերել հոգեվիճակի թեթևացման, սակայն այս մեթոդը ապահովագրված չէ նաև հակառակ էֆեկտներից: -Քեմալ Յալչընի «Անատոլիայի զավակները. դարի վկաները» գրքում պատմվում է, որ ցեղասպանությունը վերապրած ութսունն անց մի հայ շարունակ պատմել է իր ապրած սարսափները, մի քանի ամիս անց ծերունին հոգեկան խանգարում է ստացել, և երբ նրա երեխաները բժշկի են տարել, եզրակացությունը եղել է հետևյալը. «Անցյալի ցավալի դեպքերը հիշելը խախտել է նրա հոգեկան հավասարակշռությունը»: Վերջում ծերունին ինքնասպան է եղել: Իսլամացված հայ կանանց մեջ ուշադրություն է գրավում հատկապես այն հանգամանքը, որ ամբողջ կյանքի ընթացքում իրենց ուղեկցող տրավմատիկ հիշողությունների մասին այդ կանայք նախընտրել են բարձրաձայնել առավելապես կյանքի վերջում: Այսինքն, ամբողջ կյանքում թաքցրել են դա՝ վախենալով կամ գուցե չուզենալով ցավ պատճառել իրենց զավակներին: Ուշագրավ է նաև այն, որ այդ տրավմատիկ հուշերի ունկնդիր անձիք ևս դառնում են տրավմայի յուրահատուկ կրող և արդեն իրենք են ձգտում ազատվել դրա բեռից: Որպես հաստատող օրինակ կարող ենք դիտարկել Ֆեթիյե Չեթինի հայտնի «Մեծ մայրս» գիրքը, որում արտացոլված են նրան հանդիպած բազմաթիվ իսլամացված հայերի զավակների, թոռների ապրումները: Նրանցից մեկը, պատմելով իր մոր դառը կյան-

---

[42] **Մարության Հ.,** Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1, Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժում, Եր., 2009, էջ 43:

քի պատմությունը, վերջում խոստովանել է.»Այս գիշեր կը կարողանամ հանգիստ քուն քնել»[43]: Օմեր Թուրքեշը ցեղասպանության տրավմատիկ հիշողությունները համարում է յուրահատուկ ժառանգություն, որը տատերը թողնում են թոռներին: Հրանտ Դինքն ասում էր, որ մինչև սերնդից սերունդ մեզ փոխանցվող տրավմայից չազատվենք, հնարավոր չէ, որ հայկական աշխարհը հանգիստ ապագա ունենա: Տրավմայի կրելը, միևնույն ժամանակ, ցույց է տալիս, որ ցեղասպանություն վերապրածները, «փրկվելով» հանդերձ, դատապարտվել են ամբողջ կյանքում տառապելու: Ազգագրագետ Հ. Մարությանի կարծիքով. «Վերապրողները նույնպես զոհեր են, քանի որ նրանք վկան են եղել բազմաթիվ դաժանությունների, իրենց հարազատների կորստյան, տեսել են տասնյակ ու հարյուրավոր դիակներ և այլն»[44]: Այս առումով շատ խոսուն է լիբանանահայ գրող Գևորգ Աբելյանի 2005թ. տպագրած գրքի վերնագիրը՝ «Ցկեանս նահատակություն»: Այս գրքում հավաքված են Հայոց ցեղասպանությունը տարբեր կերպ վերապրած և հաճախ իրենց արմատներից բռնի հեռացված իսլամացված հայերի պատմություններ: Գրքի առաջաբանում Աբելյանը նշում է. «Այսպիսիններու կեանքը կենդանի և երկարատեւ, ցկեանս նահատակութիւն էր եղած»[45]: Թուրքական գրականության մեջ հանդիպում ենք մի շարք պատմությունների, որոնց գլխավոր հերոսուհիները բռնի իսլամացված հայ կանայք են: 2001թ. Գերմանիայում տպագրված թուրք գրող Քեմալ Յալչընի «Քեզնով է ուրախանում սիրտս» փաստավավերագրական վեպում հանդիպում

---

[43] **Peroomian R.,** նշված աշխ., էջ 274

[44] **Մարության Հ.,** Հայ ինքնության պատկերագրությունը. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, էջ 58:

[45] **Աբէլյան Գ.,** Ցկեանս նահատակութիւն, Այնճար-Լիբանան, 2005, էջ 6:

ենք բռնի իսլամացված հայուհիների հետ կապված պատմությունների, մեջբերենք մի հատված գրքից. «Երբեք չեմ մոռանար այս դէպքը: Գիտեմ, որ այս մարդը ամուսինս սպանեց: Իմ աչքերով տեսայ, զիս ալ պիտի սպաներ: Վախէս ամուսինս սպաննողին կինը եղայ: Երկու տղաներուս հայրը եղած այս մարդուն երբեք պիտի չներեմ, Աստուած անոր պիտի պատժէ»[46]: Քուրդ գրող Յուսուֆ Բաղիի «Աղջիկ» հուշագրական վեպը կրկին հենված է ականատես վերապրողի պատմած հուշերի վրա: Ֆաթմա վերանվանված Մարիամը պատմում էր թոռանը՝ գրքի հեղինակին.»Եղբայրներիս աչքերիս առաջ թրով հարվածելով գլխներին՝ սպանեցին և մարմինն ու գլուխը իրարից բաժանելով նետեցին հորը: Մինչև սպանելը նրանց միայն մի հարց էին տալիս՝ իսլամ ընդունո՞ւմ եք: Նրանց բացասական պատասխանից հետո դահիճը իջեցնում էր սուրը: Գլուխը մի կողմ, մարմինը մեկ այլ կողմ էին նետում: Այդ ընթացքում ես շարունակ լալիս էի, ինձ մորս գրկից վերցրին: Մորս և եղբայրներիս աչքիս առաջ սպանեցին: Ես շոկի ենթարկվեցի: Շարունակ լալիս էի, սակայն միայն ես չէի, որ լալիս էի: Հարյուրավոր հայեր, իրենց մահվան հերթին սպասելիս, մեկը պապանձվել էր, մեկը լացում էր: Մեկի եղբորը, մեկի հորը, մեկի սիրելիին նրանց աչքի առաջ գլխատում էին: Մարդ ինչպես կարող է չլացել, որդիս»[47]:Հայ կանայք երբևիցե չեն կարողացել իրենց սեփական հայկական ինքնությունը բացահայտել, քանի որ գտնվել են բռնատիրական Թուրքիայում և ունեցել են ինքնության երկվություն: Մարիամն ասում էր.»Որևէ մեկին իմ վիշտը չէի կարող ասել, որովհետև եթե ասեի, ինձ կոչնչացնեին, կասեին՝ Ֆաթման դեռ հայ է»[48]: Հայ կանանց թեմայով գրված

---

[46] **Յալչին Ք.,** նշված աշխ., էջ 358:
[47] **Bagi Y.,** Ermeni kizi. Agcik, Istanbul, 2007, s.7.
[48] Նույն տեղում , էջ 36:

ստեղծագործությունների շարքին է պատկանում Գյուլչիչեք Գյունել Թեքինի «Սև պատանք» փաստագրական գիրքը: Ն-շենք այդ գրքից մի հատված, որը ամբողջությամբ նկարագ-րում է հայության վերջին բեկորների կյանքը Թուրքիայի - Հանրապետությունում. «Արև չեմ ունեցել, իմ օրերը սև էին:Ա-նընդատ ցավեր եմ ապրել, կյանքս սև է եղել: Երբ մեռնեմ, իմ պատանքն էլ թող սև լինի: Գերեզմանս էլ>[49]: Բռնի իսլամաց-ված հայ կնոջ մասին գրել են ամենահամարձակ թուրք և քուրդ գրողները, որոնց ստեղծագործությունները Թուրքիա-յում դատապարտվել են անհաջողության և հալածանքների, սակայն թուրք հասարակության կողմից արժանացել է հե-տաքրքրության: Թուրք հասարակությունը իբրև թե տեղյակ չէ 1915թ. տեղի ունեցած կոտորածների, հայկական ջարդերի մասին, անտեղյակության խնդրին է անդրադառնում թուրք հայտնի ձախակողմյա գրող Վեդաթ Թուրքալին, Հրանտ Դին-քի հետ զրույցում՝ պատասխանելով վերջինիս հարցին, թե ինչու թուրքական ձախակողմյա շարժումը որևէ կերպ չի ար-ձագանքել Հայկական հարցին.»Մեր սերունդը չգիտեր, թե ին-չեր են տեղի ունեցել,-ասել է թուրք գրողը և հավելել,- ես ան-ձամբ Հայկական դեպքի մասին մի շարք մանրամասներ ա-վելի ուշ եմ իմացել»[50]: Ավելի ուշ, խոսելով թուրք մտավորա-կանների և ընդհանրապես հասարակության անտեղյակութ-յան մասին, Հրանտ Դինքն ասել է.»1915-ից հետո, իրակա-նում, Թուրքիայի հասարակությունն իր գյուղացիներով, քա-ղաքացիներով շատ լավ գիտեր, թե այդ ժամանակաշրջա-նում ինչեր են տեղի ունեցել: Շատերը վկան են եղել տեղի ու-նեցածների, որոնք վատ և ցավալի էին ու դրա համար պետք

---

[49] Նույն տեղում, էջ 21

[50] **Turkali V.,** Bizim kusagimiz neler oldugunu bilmiyordu,Agos, 28.05.2004; Հրանտ Դինքի հարցազրույցը թուրք գրող Վեդաթ Թուրքալիի հետ:

էր լռել:Այս հարցում պետական դիրքորոշումն էլ լռությունը պաշտոնականացրեց: Այս թեման դարձավ տաբու: Ոչ միայն պահպանող-
ականները, այլև իրենց հեղափոխական համարողներն էլ այս թեմայով երկուխոսք չկարողացան ասել: Նազըմ Հիքմեթի բանաստեղծություններում Հայկական հարցի վերաբերյալ լոկ մեկ տող է տեղ գտել, այդքանը միայն»[51]: Հայոց ցեղասպանության տարիներին հայ կանայք աչքի են ընկել իրենց վեհ անձնային որակներով, մասնավորպես, «Ջեմալ Փաշայի սպանությունը» խորագրով գրքում նկարագրվում է, որ աքսորի ճանապարհին հայ կանայք իրենց մանկահասակ երեխաներին գիրկներն առած նետվում էին Արաքսը, որով խուսափում էին 2 մեղք գործելուց՝ առաջին դեպքում պիտի հրաժարվեին քրիստոնեությունից և հայ լինելուց, երկրորդ դեպքում պիտի ընդունեին իսլամ և դառնային թուրք:Այսպիսի սահմռկեցուցիչ դեպքերը երբևիցե չեն մոռացվի և հանգիստ չեն թողնի թուրքին: 1915-ից տասնամյակներ անց էլ Հայոց ցեղասպանության մասին հիշողությունը հային կարող է դրդել պայքարի՝ քաջ գիտակցելով, որ Թուրքիայի բռնապետական համակարգում այն ի սկզբանե դատապարտված է անհաջողության: Ինչպե՞ս է Թուրքիան պատասխան տալու այսքան հայերի կյանքերի համար՝ քիչ չեն՝ 1.5 միլիոն: Բժիշկ Աբասալիևը հավաստում է՝ «Եթե յուրաքանչյուր սպանված հայի համար գեթ մի մոմ վառվի՝ այդ մոմերի ցոլքը լուսնի լույսից վառ կլինի»[52]: Այսքան մարդկանց հոգիները պտտվում են Թուրքիայում: Ինչպես ասել է երիտասարդ թուրք մտավորական Թորգա Էրենը՝ «Անատոլիայում մի ուրվական է

---

[51] **Kaplan S.,** 1915-te ne oldu?,Istambul, 2005, 2-inci baski, s. 77-78.

[52] **Աքրամ Այրիսլի,** «Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմ, «Անդին» ամսագրի մատենաշար, ԷԴԻԹ ՊՐԻՆՏ հրատարակչություն, Եր., 2013, էջ 130:

պտտվում և դա ցեղասպանության ենթարկված անմեղների ուրվականն է, Անատոլիայի անձայն մեծամասնության ճիչն է դա»[53]: Թուրքերը պիտի պատասխան տան իրենց կատարած ոճրագործությունների համար, յուրաքանչյուր հայի թափած արյան համար, այն որբերի համար, որոնք մնացել են անտեր և անտուն, այն տղամարդկանց համար, որոնց անխղճորեն քաշեցին սրին, այն կանանց և աղջիկների համար, որոնց բռնի կերպով տիրացան, այն բոլոր հայերի համար, ովքեր բռնի կերպով իսլամացան, և վերջապես այն բոլոր մարդկանց համար, որոնց ճակատագրերը արյունով ներկվեցին:

Եզրակացություն

Հայոց ցեղասպանության տարիներին ամենաբարդ, տրավմատիկ և դաժան ճակատագրին արժանացել են հայ կանայք և աղջիկները, նրանց կրած տանջանքները և տառապանքները աննկարագրելի են: Այն հայերը, ովքեր մահացել են սրի մի հարվածից, «փրկվել են»: Դժվար է ապրել թշնամու տանիքի ներքո և վախից ելնելով թաքցնել սեփական ինքնությունը՝ այն է հայ քրիստոնյա լինելը: Հայոց ճակատին դրոշմվել է մի հետք, որը չի անհետանա այնքան ժամանակ, քանի դեռ Թուրքիան չի ընդունել իր մեղքը: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման միակ ուղին կարող է լինել Հայոց ցեղասպանության ընդունումը Թուրքիայի Հանրապետության կողմից և բոլոր վնասների հատուցումը: Ո՛չ մի հայ չի մոռանալու այս ոճրագործությունը և հարյուրամյակներ անց էլ հիշելու է և պահանջելու:

Резюме

---

[53] **Թուրքերը թուրքերի մասին**, հատոր 3-րդ, Կազմ. և խմբ.՝ Ռ. Մելքոնյան, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 308:

Вовремя геноцид армян армянки стали особенным целом для турок. Армянки которые остались живы вынуждены были принять ислам и жить с теми турками которые и убили своих семей. Они подвергались бес человеческих пыток, и многие годы скрывали свои личности. А их потомки только потом узнали, что у них есть армянские корни. По этой причине и сейчас в Турции актуален вопрос самопознания.

Summary

In time genocide of Armenians of the Armenian became special whole for Turks. Armenians who remained are living were compelled to accept Islam and to live with those Turks who killed the families. They were exposed a demon of human tortures, and the persons hid many years. And their descendants learned only then that they have Armenian roots. For this reason and now in Turkey self-knowledge topical issue.

ԴԻԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Օտար լեզվի և գրականության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, պատմ.գիտ.թեկն., դոցենտ Լիլիթ Զաքարյան

ԿԱՅԶԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Բանալի բառեր-Հայոց ցեղասպանություն, Կայզերական Գերմանիա, հայկական կոտորածներ, հայատյաց քաղաքականություն, բարեկամ տերություններ, մեղսակցություն:

Դեռևս IX դարի վերջին Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ ձևավորվել և գործում էր մի ուղղություն, որը դիվանագիտության պատմության մեջ հայտնի է «արշավանք դեպի արևելք» անվանումով (Drang nach Osten): Դրա նպատակն էր ընդլայնել գերմանական ազդեցությունը դեպի արևելք, մասնավորապես դեպի Մերձավոր Արևելք, որն այդ ժամանակ կռվախնձոր էր Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Այդ տարածաշրջանում հակասությունների հիմնական օբյեկտը Օսմանյան կայսրությունն էր: Եվ այդ մեծ տերություններից յուրաքանչյուրը իրեն համարում էր թուրքական ժառանգության հավակնորդ: Գերմանիայի արևելյան քաղաքականության ակտիվացումը և գերմանա-թուրքական մերձեցումն ակնառու է դառնում հատկապես Վիլհելմ 2 կայսեր ժամանակ: Նա երկու անգամ այցելել է Թուրքիա: Երկ-

որդ այցելության ժամանակ գտնվելով Դամասկոսում՝ Սալահ-Էդդինի դամբարանի մոտ, դիմելով Աբդուլ Համիդ 2-ին՝ հայտարարել է. «Թող նորին մեծություն սուլթանը և 300 մլն մուսուլմանները համոզված լինեն, որ ի դեմս գերմանական կայզերի, նրանք ձեռք են բերում հավերժական բարեկամի»[54]: Թուրքիայի կողմից հակահայկական քաղաքականությունն ու գործունեությունը ելնում էին պանթուրքիզմի գաղափարախոսությունից, ուղղված էին նաև Ռուսաստանի դեմ և աջակցություն էին գտնում եվրոպական տերությունների, մասնավորապես Գերմանիայի կողմից: Այդ ժամանակաշրջանում էլ սկսեց Թուրքիայում և Գերմանիայում մոլեգնել մի ուղղություն՝ «Հայաստան՝ առանց հայերի» նշանաբանով: -Գերմանիայի արտաքին գործերի նախարար Արտուր Ցիմերմանը նշել է. «Ըստ էության հայերը պետք չեն Գերմանիային, հայերով բնակեցված Հայաստանը վնասաբեր է նրա շահերին»[55]: Հայ ժողովրդի տեղահանությունը Թուրքիայում ընդգրկում է հետևյալ ժամանակաշրջանները.

1.1914թ. նոյեմբերի 1-ին՝ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու պահից մինչև 1915թ. ապրիլի 20-ի Վանի ապստամբությունը: **2**. 1915թ. ապրիլի 20-24-ին համընդհանուր տեղահանման որոշումից մինչև ավարտը՝ 1915թվականի դեկտեմբերը: **3**. 1915թ. դեկտեմբերին հայ ժողովրդի մնացորդների բռնի իսլամացումը և բնաջնջման ավարտը՝ 1918թ. հոկտեմբեր: **4**. 1918թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից մինչև Բաքվի գրավումը՝ 1918թ. սեպտեմբերի 15-17-ը: Այս բոլոր ժամանակահատվածներում էլ Կայզերական կառավարությունը իր առանձնակի դերն է ունեցել -

---

[54] Asbarez.com/arm/96991/Գերմանիայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանության մեջ:

[55] Asbarez.com/arm/96991/Գերմանիայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանության մեջ:

Թուրքիայում: Բուն կոտորածի տարիներին, դրանից առաջ և դրանից հետո գերմանացի սպաները թուրքական բանակում և ընդհանրապես Թուրքիայում բարձր պաշտոններ էին զբաղեցնում, օրինակ, մարշալ Լիման ֆոն Սանդերսը 5-րդ բանակի հրամանատարն էր, գերմանական ռազմական առաքելության ղեկավարն ու ցամաքային զորքերի տեսուչը, գեներալ Բրոնսարդ Ֆոն Շելենդորֆը՝ գերագույն հրամանատարության շտաբի պետը և այլն: Գերմանիան Թուրքիայում ուներ ավելի քան 2000 սպա, որոնց մի մասը գործում էին վիրաբույժի կամ «Կարմիր խաչի» աշխատակցի անվան ներքո: «Պատերազմի նախօրեին Բուխարեստում գերմանական դեսպանատանը տեղի ունեցած թուրք-գերմանական բարձրաստիճան ներկայացուցիչների խորհրդակցությունում արդեն որոշվել էր տեղահանել ու ոչնչացնել Արևմտահայաստանի վեց վիլայեթների, Կիլիկիայի ու մյուս հայաշատ վայրերի հայությանը, մի մասին էլ տարագրել կառուցվող Բաղդադի երկաթուղու երկայնքով ստեղծվող գերմանական գաղթավայրեր: Փոխարենը Գերմանիան Թուրքիային խոստանում էր օգնել նվաճելու Անդրկովկասը, Իրանական Ադրբեջանը, Աֆղանստանն ու այլ տարածքներ: Արևմտահայության տարագրության գաղափարը տվեցին գերամանացիները՝ ռուսական ներթափանցման վտանգը կասեցնելու, հայերի և հույների հետ համագործակցող ֆրանսիական տնտեսական տարրին դուրս քշելու և հայերին Միջագետքում վերաբնակեցնելով՝ Բաղդադի երկաթուղու կառուցումն ու շահագործումը դյուրացնելու համար: Դրա համար էլ Արևմտահայաստանում գրեթե ամենուր թուրք ջարդարար ոհմակների կողքին, որպես տեղահանության ծրագրողներ ու հիմնական ղեկավարներ, մենք տեսնում ենք գերմանական բարձրաստիճան զինվորականների, հյուպատոսների ու փոխհյուպատոսների: Բայց գերմանացիների հղացած գաղափարը թուր-

քերն իրականացրին իրենց հասկացած և իրենց ձեռնտու ձևով՝ տարագրությունը դարձնելով ոչ թե վերաբնակեցման, այլ բնաջնջման միջոց: Եվ պատահական չէր, որ դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին ֆրանսիացի Ռընէ Բինոնը Մեծ եղեռնը ներկայացնող իր «Հայերի բնաջնջումը» ուսումնասիրությունում «գերմանական մեթոդ ու թուրքական գործելակերպ»անվանեց արևմտահայության նկատմամբ գործված անլուր ոճիրը»[56]: Ի հակադրություն սրան՝ Յոհաննես Լեփսիուսը գրում է. «Բարձր Դուռը իր կատարած գործողությունների մասին չի խորհրդակցել Գերմանիայի դեսպանության հետ, երբ դեսպանությունը բազմաթիվ անգամներ միջամտեց բոլոր շրջաններից գնալով մեծ ծավալ ընդունող արտաքսումների առթիվ, Բ. Դուռը հասկացրեց, թե դա կատարվում է ռազմական շահերից ելնելով, և որ դա Թուրքիայի ներքին գործն է, որը դեսպանությանը չի վերաբերում»[57]: Չնայած այն բանի, որ Յ. Լեփսիուսը առաջիններից էր, որ 1914թ.-ից սկսած բարձրացրել է իր ձայնը հայերի օգնության և փրկության համար, սակայն, այնուամենայնիվ, իր արձանագրություններում փորձում է նեցուկ լինել Գերմանիային: -**Վերսալի, Սեն-Ժերմենի, Սևրի խաղաղության դաշնագրերը մինչ այդ իրավազրկված շատ ժողովուրդների ինքնիշխանություն շնորհեցին…Իսկ հայերը խաբված մնացին, Գերմանիան թուրք մարդասպանների ձեռքը բռնելու համար ոչինչ չարեց[58]:** Կան բազում փաստեր և արձանագրություններ հայ ժողովրդին կոտորելու հարցում գերմանացիների լավ խորհրդական

---

[56]Դևրիկյան Տ., Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ., Եր., 2005, էջ 349:

[57] Գերմանիան և Հայաստանը 1914-1918/Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու/Հատոր 1

[58] Սև գիրք: Նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին, Եր., Հայագիտակ, 2011, էջ 73:

լինելու մասին: Այդ դերը ստանձնել են գերմանացի զիվորականներ, հյուպատոսներ, փոխհյուպատոսներ և այլք: Օրինակ, Կարինում թուրքերին հավասար հայերի ջարդերի ղեկավարներից էին Էրզրումում գերմանական փոխհյուպատոս, թուրք չեթենների հրամանատար Մաքս Էրվին Ֆոն Շյոբներ-Ռիխտերը, և նրա պարտականությունն էր կազմակերպել տեղահանությունն ու ճանապարհին կոտորել քարավանները, հրետանու հրամանատար Շտանկերը և այլք: Գերմանացիների այս բացահայտ աջակցությունից օգտվում էին թուրքերը և հայտարարում, որ Գերմանիան էր, որ պարտադրեց հայերի բնաջնջումը:Ասում էին նաև, որ իրենք ուղղակի հետևել են լեհերի նկատմամբ գերմանացիների կատարածի օրինակին: Դանիացի նշանավոր գրաքննադատ Գեորգ Բրանդեսը գրել է. «Գիտեմ, որ Թուրքիան Գերմանիայի բարեկամ տերություններից մեկն է և, ճիշտն ասած, այս է պատճառներից մեկը, որ Թուրքական կառավարությունն իրեն իրավունք վերապահեց ուզածն անելու գործում»[59]: 1914թ. օգոստոսի 2-ին Թուրքիան գաղտնի պայմանագիր կնքեց Գերմանիայի հետ, որի կետերից մեկը Օսմանյան կայսրության արևելյան սահմանների փոփոխումն էր դեպի ռուսական կայսրության մուսուլմանական ազգերը տանող միջանցք ստեղծելու նպատակով, որից կարող ենք ենթադրել փոփոխված տարածքներում հայերի բնաջնջում: Սա բարձրաձայնվեց միայն 1915թ. հոկտեմբերի 30-ին՝ պատերազմի մեջ մտնելուց հետո, քանի որ պատերազմը կարող էր «քողարկել» այս պայմանագրի էությունը: Պայմանագրի մեջ պնդում կար թուրքական ռասայի բոլոր ներկայացուցիչների «բնական» միավորման մասին: Սակայն պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո Օսմանյան կայսրությունում սկսվեց քրիստոն-

[59] Նույն տեղում, էջ 84:

յաների ունեցվածքների բռնագրավումը: 1914թ. նոյեմբերին հայտարարվեց ջիհադ, որը ավելի ակնառու դարձրեց մուսուլման բնակչության հակաքրիստոնեական ազգայնամոլությունը: Առաջին աշխարհամարտը հնարավորություն էր ընձեռել երիտթուրքերին՝ հաշվեհարդար լինել կայսրության հպատակ հայերի հետ՝ իրականացնելով դեռևս 1911 թվականին Սալոնիկ քաղաքում տեղի ունեցած գաղտնի ժողովի որոշումը: Այն նախատեսում էր, որ կայսրության տարածքում բնակվող մուսուլմանները պետք է թուրքացվեն, իսկ քրիստոնյաները՝ բնաջնջվեն: Համագումարում որոշվել էր. «Վաղ թե ուշ պետք է իրագործվի Թուրքիայի բոլոր հպատակների օսմանացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարվի համոզելով, այլ պետք է իրականացվի զենքի ուժով[60]: Եվ իհարկե, այս հարցում նույնպես թուրքիայի «անդավաճան աջակիցը» կրկին Գերմանիան էր: Գերմանացի սպաները ամենուր էին, նրանք առանձնակի մասնակցություն էին բերում հայերի կոտորածներին: Իր «Սարսափի երկրին մեջ. Նահատակ Հայաստան» նշանավոր գրքում Անրի Բարբյուսը գրում է. «Կարինում գերմանացի սպաների ուրախ զբաղմունքն ուրախ կյանք անցկացնելն էր: Իսլամ բնակչությունն ու թուրք սպաներն անգամ տհաճությամբ էին նայում այս ամբարտավան ու շնական սպաներին, որոնց զինվորական տեսանկյունից օժանդակությունը խիստ աննշան էր և նրանց միակ զբաղմունքը հայերի նկատմամբ գրգռություններ հրահրելն ու գինարբուքներով զբաղվելն էր»[61]: Հայերի դիակները ճշգրիտ ցույց էին տալիս իրենց անցած ուղին: Շատերին կապում էին զույգ-զույգ, մեջք մեջքի ու ողջ-ողջ շպրտում գետը:

---

[60] Hy.m.wikipedia.org (Առաջին համաշխարհային պատերազմ. Հայերի ցեղասպանությունը)

[61] Հանրի Բարբյուս «Սարսափի երկրին մեջ. Նահատակ Հայաստան»

Մի քանի գերմանացի հյուպատոսներ ոգեշնչողներն են եղել այդ իրադարձությունների: Օրինակ, Հալեպի Գերմանական հյուպատոս Ռյոսլերը մեկնել էր Այնթապ, այդ ամենն անձամբ դիտելու համար, իսկ վատահամբավ բարոն Օպենհայմն առաջարկել է դաշնակիցների կանանց ու երեխաների փոխադրումը Ուրֆա, որպեսզի նրանք դառնան վկաներն այն բարբարոսությունների, որ զորքերը կատարում էին տառացիորեն արյունով ողողված փողոցներում[62]: «Թուրքերի գլխում չէր կարող ծագել բնաջնջման նման դաժան ու ավելի հնարամիտ եղանակ, և գերմանացիները, չբավարարվելով այդ բարբարոսներին ոգեշնչելով, հաճախ ուղղություն էին տալիս նրանց չարագործություններին և իրենց հերթին, «որպես հուշանվերներ», վերցնում էին երիտասարդ հայուհիների ու ասորուհիների», գրում է համաշխարհային մամուլը: - Հետաքրքրական է, թե ինչ էր գրում այդ ժամանակ գերմանական մամուլը: Ահա այսպես, շաբաթաթերթերից մեկը նշել է. «Թուրքերը ճիշտ վարվեցին՝ բնաջնջելով հայերին»: Այդ նույն հանդեսում նույն ոճով գրված է. «Եթե հայ որբերը մեռնում են սովից, ուրեմն բարի աստվածը ցանկանում է, որ նրանք սովից մեռնեն»: Իսկ ինչպիսի՞ն էր կայզերական Գերմանիայի պաշտոնական դիրքորոշումը թուրքական հայատյաց քաղաքականության և հայկական կոտորածների նկատմամբ: 1895 թ. ստանալով Կոստանդնապոլսում Գերմանական դեսպան - Ֆօն Զաուրմայի զեկուցագիրը հայերի կոտորածների մասին՝կայզեր Վիլհելմ 2-րդը փաստաթղթի լուսանցքում երկերեսանիորեն ու կեղծավորությամբ արել է հետևյալ նշումները. «Եվ այս բոլորը քրիստոնյան ու եվրոպացին պետք է հանգիստ դիտարկի ու սուլթանի հասցեին բարի խոսքե՞ր ասի»[63]:

---

[62] «Թայմս» , 1915 թ., սեպտեմբեր:

[63] Asbarez.com/arm/96991/Գերմանիայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանության մեջ:

Նմանատիպ բազմաթիվ գրություններ ու արտահայտություններ մնացել են միայն թղթի վրա և գործնական ոչ մի բան չի ձեռնարկվել: Ճշմարտությունն այն է, որ խոսքով դատապարտում էին հայկական կոտորածները, իսկ իրականում բոլորովին այլ էր: «Միայն Թուրքիայի նկատմամբ Գերմանիայի ընդգծված բարեկամական վերաբերմունքը հնարավոր դարձրեց սարսափելի չափերի կոտորածները», նշել է Պ. - Ռոհրբախը:

Ամփոփում Փաստերը ցույց են տալիս, որ 1915թվականին - Թուրքիայում հայերի դեմ կատարվող անլուր ոճրի մասնակիցն ու ոգեշնչողն է եղել կայզերական Գերմանիան:Այս մասին արձանագրություններ կան ոչ միայն հայկական արխիվներում, այլև օտարերկրյա գրողների օրագրություններում, ինչպես նաև համաշխարհային մամուլում: Եվ երբ մենք խոսում ենք Հայոց մեծ եղեռնի մասին և չենք գտնում շատ ու շատ հարցերի պատասխաններ, միշտ պետք է հիշենք, որ արևմտահայությունը պարտվեց ոչ միայն թուրք ջարդարարներին, այլև ժամանակի ամենահզոր բանակներից մեկի՝ կայզերական Գերմանիայի զինված ուժերի բարձրագույն սպայական կորպուսին:

Summary

The facts show that in 1915 the unheard of crime against Armenians in Turkey was the inspiration for the participants and Kaiser Germany. The inscriptions are not only Armenian archives, but also for foreign writers of Scripture as well as international media. And when we speak about the Armenian Genocide and do not find answers to lots of questions, you should always remember that Western has lost not only the Turkish murderers, but the most powerful armies of the time, the German Kaiser's senior officer corps of the armed forces.

Резюме

Факты показывают, что в 1915 году неслыханно преступления против армян в Турции была источником вдохновения для участников и кайзеровской Германии. Надписи не только армянские архивы, но и для зарубежных писателей Писания, а также международных СМИ. И когда мы говорим о геноциде армян и не найти ответы на множество вопросов, вы всегда должны помнить, что Западная потерял не только турецкие убийц, но самые мощные армии того времени, старший офицерский корпус немецкого кайзера Вооруженных силы.

ԱՆԻ ՍԻՐԵԿԱՆՅԱՆ

Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արմեն Ճուղուրյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բանալի բառեր - *Կորուստ, հատուցում, միջազգային կազմակերպություններ, յուրացում:*

Հայ ժողովրդի նյութական կորուստները Հայոց ցեղասպանության ժամանակ, հայ ժողովրդի դեմ իրականացված հանցագործությունը դեռևս Թուրքիայի կողմից պատասխանի է սպասում՝ Ցեղասպանությունը պիտի ճանաչվի և վնասները պիտի հատուցվեն: Սրանք ուտոպիական նպատակներ չեն: Որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ, թուրքական պետությունն ունի միջազգային իրավական պարտավորություններ:

Համաձայն միջազգային իրավունքի՝ հանցագործությունների համար պատասխանատվությունն ընկնում է դրանք իրականացրած երկրի վրա, ինչպես նաև, ըստ շարունակականության և պատասխանատվության սկզբունքի, նրա իրավահաջորդի:

Մարդկային կյանքը գերագույն և բացառիկ արժեք է: Այն անգին է: Բնականաբար, խոսելով Հայոց ցեղասպանության մասին, մենք առաջին հերթին, և գրեթե բացառապես, շեշտել

ենք հայ ժողովրդի մարդկային կորուստները: Սակայն ցեղասպանության տարիներին հայ ժողովուրդն ունեցել է նաև հսկայական նյութական կորուստներ: Անվիճելի է, որ ցեղասպանության ածանցյալ նպատակներից է եղել հայ ժողովրդի անհատական և հավաքական սեփականության յուրացումը: Միջազգային իրավունքը հռչակում է. Ex injuria non oritur jus (լատ.), այսինքն՝ հանցագործը չպիտի վայելի իր հանցագործության պտուղները: Այլ խոսքով, erga omnes՝ հանցագործության հետևանքները չեն կարող ճանաչվել կամ օրինականացվել: Այս առումով, շատ կարևոր է հստակեցնել, թե գումարային դրսևորմամբ ինչքան են եղել հայ ժողովրդի նյութական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին՝ 1915-1923թթ.: Քննության առնենք որոշ պաշտոնական փաստաթղթեր, որոնցում արձանագրվել են հայ ժողովրդի նյութական կորուստները, և ամրագրվել է նրա փոխհատուցում ստանալու իրավունքը: 1918թ. նոյեմբերի 11-ին Առաջին աշխարհամարտում ռազմական գործողությունները վերջնականապես կասեցնող զինադադարը պաշտոնապես մտավ ուժի մեջ: Երկու ամիս անց՝ 1919թ. հունվարի 18-ին, Փարիզում իր աշխատանքներն սկսեց Փարիզի Խաղաղության վեհաժողովը (The Paris Peace Conference), որի նպատակն է համապարփակ քննության ենթարկել պատերազմին առնչվող բոլոր հարցերը և նախապատրաստել խաղաղության պայմանագրերը: Կարևորագույն հարցերի թվին էր պատկանում պատերազմի հրահրման համար մեղավոր երկրների կողմից նյութական կորուստների փոխհատուցումը (reparations): Ըստ այդմ, Փարիզի վեհաժողովի կազմում կար հատուկ հանձնաժողով փոխհատուցումների հարցով (The Commission on Reparations of Damage /Valuation of Damage/): Գրեթե 2 ամիս տևած աշխատանքներից հետո պարզ դարձավ, որ նյութական կորուստներ են ունեցել ոչ միայն պատերազմին անմի-

ջականորեն մասնակցած երկրները: Ուստի, մարտի 7-ին նշյալ հանձնաժողովը ձևավորեց առանձին մարմին՝ Հատուկ հանձնախումբ (Special Committee), որի նպատակն էր ի մի բերել հանձնաժողովում չներկայացված երկրների և ժողովուրդների նյութական կորուստները և դրանց հատուցմանը տալ պաշտոնական ընթացք: Հատուկ հանձնախումբն ուներ հետևյալ կազմը՝ անդամներ՝ գեներալ Մըք-Քինսթրի (McKinstry) ԱՄՆ, գնդապետ Փիլ (Peel) Մեծ Բրիտանիա, պրն Ժուասե (Jouasset) Ֆրանսիա,քարտուղարներ՝ Հ. Ջեյմս (H. James) ԱՄՆ, պրն Փ. Լոր(P. Laure) Ֆրանսիա: Հանձնախմբի ձևավորման հաջորդ իսկ օրը՝ մարտի 8-ին, այն դիմեց Բոլիվիայի, Բրազիլիայի, Չինաստանի, Էկվադորի, Գվատեմալայի, Հայիթիի, Հեջազի (ներկայումս՝ Սաուդյան Արաբիա), Լիբերիայի, Պանամայի, Պերուի, Սիամի (ներկայումս՝ Թաիլանդ) և Հայաստանի Հանրապետության (Delegation of the Armenian Republic of the Conference of Peace) պատվիրակություններին՝ տեղեկություններ խնդրելով կրած նյութական կորուստների վերաբերյալ: Մեկ ամսվա ընթացքում Հատուկ հանձնախումբն ամփոփեց պատվիրակությունների ներկայացրած, ինչպես նաև այլ աղբյուրներից հայթայթած փաստաթղթերը և 1919թ. ապրիլի 14-ին ներկայացրեց իր նախնական զեկույցը: Թեև արևմտահայության և արևելահայության համար հաշվարկները կատարվել էին առանձին-առանձին, սակայն կորուստները ներկայացված էին միասնական վերջնական թվով: Ըստ այդմ, հայության ամբողջական նյութական կորուստը 1914-1919թթ.-ին 1919թ.-ի գներով կազմել է 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ կամ 3.693.239.768 ԱՄՆ դոլար: Ըստ զեկուցագրի, հայության նյութական կորուստներն ունեին հետևյալ պատկերը՝

1. Արևմտահայաստան (կամ ինչպես փաստաթղթում է գրված՝ Turkish Armenia).

ա) գյուղաբնակների անհատական նյութական կորուստները՝ 4 601 610 000 ֆրանկ,

բ) քաղաքաբնակների անհատական նյութական կորուստները՝ 3 235 550 000 ֆրանկ,

գ) ոչ անհատական նյութական կորուստները՝ 6 761 350 000 ֆրանկ:

Ընդամենը՝ 14 598 510 000 ֆրանկ:

2. Հայաստանի Հանրապետության և Կովկասի հայաբնակ այլ տարածքներ.

ա) այն բնակավայրերի բնակչության կորուստները, որոնց բնակչությունն ամբողջովին տեղահանվել է՝ 1 831 872 000 ֆրանկ,

բ) այն բնակավայրերի բնակչության կորուստները, որոնց բնակչությունը չի տեղահանվել՝ 1 293 600 000 ֆրանկ,

գ) այլ նյութական կորուստներ՝ 1 407 000 000 ֆրանկ:

Ընդամենը՝ 4 532 472 000 ֆրանկ:

Համընդհանուր նյութական կորուստները՝ 19 130 982 000 ֆրանկ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այս թվի մեջ ներառված չեն հայերի 1920, 1921 և 1922թթ. (համապատասխանաբար՝ Արևելյան Հայաստան, Կիլիկիա, Զմյուռնիա և այլն) նյութական կորուստները: Եթե հաշվառվեն նաև նշյալ ժամանակահատվածի կորուստները, ապա վերոնշյալ թիվն առնվազն պետք է 15-20%-ով մեծացվի: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը երբեք չի հրաժարվել իրեն հասանելիք հատուցումից (reparation): Անգամ հայոց պետականության կորստից հետո, երբ այն ռազմակալվեց օտարերկրյա զինված ուժերի կողմից (ռուսական 11-րդ բանակ և թուրքական 3-րդ բանակ), Հայաստանի Հանրապետության օրինական ներկայացուցիչները շարունակել են պնդել հայ ժողովրդի իրավունքների, մասնավորապես՝ նյութական փոխհատուցման մասին: Այս-

պես, Լոզանի պայմանագրի կնքումից (24 հուլիսի, 1923թ.) անմիջապես հետո Փարիզի վեհաժողովում Հայաստանի - Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը պաշտոնական գրությամբ (8 օգոստոսի, 1924թ.) դիմել է Գլխավոր դաշնակից ուժերի արտաքին գործերի նախարարներին և վերահաստատել հայոց իրավունքներին հավատարիմ մնալը: Հատուցումների հարցով անհրաժեշտ է առանձնացնել մի կարևոր հանգամանք. ժամանակային գործոնը բնավ հիմք չէ նյութական պարտավորություններից խուսափելու համար: Ֆինլանդիան ԱՄՆ նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմից մնացած իր նյութական պարտավորությունների կատարումն ամբողջացրեց միայն 1969թ., Մեծ Բրիտանիան՝ միայն 1965թ.: Ներկայիս Ռուսաստանը դեռևս խնդիրներ ունի ցարական Ռուսաստանի նյութական պարտավորությունների առումով: Թուրքիայի Հանրապետությունն ինքը, չնայած հսկայական զիջումներին, Օսմանյան կայսրության պարտքը կարողացավ փակել միայն 1944թ. հունիսին 10-ին:

«Նյու Յորք Լայֆ» ապահովագրական ընկերությունը (NYLIC) իր 1875-1915թթ. շահառուների ժառանգներին փոխհատուցման հանձնառության մասին հայտարարեց միայն 2004թ. հունվարին, այն էլ երկարատև դատավարությունից հետո: Սույն դատավարությունը, թեև անմիջականորեն չի վերաբերում Հայոց ցեղասպանության ընթացքում մեր ընդհանրական նյութական կորուստների փոխհատուցմանը, այնուհանդերձ խիստ կարևոր է: Այն դատական վճռով նմանաբնույթ գործերի համար ամրագրվեց հաշվարկային փոխարժեքը, այն է՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի 1 ֆրանսիական ֆրանկը ներկայումս հավասար է 2.17 ԱՄՆ դոլարի: Այսինքն, դատական նախադեպի կիրառմամբ մենք կարող ենք հաշվարկել հայության

նյութական կորուստների չափը Հայոց ցեղասպանության հետևանքով՝ 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ × 2.17 =41.514.230.940 ԱՄՆ դոլար: Այսպիսով, Թուրքիայի Հանրապետության, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի, փոխհատուցման պարտավորությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որպես Հայաստանի Առաջին Հանրապետության իրավահաջորդի, կազմում է առնվազն 41 միլիարդ 514 միլիոն 230 հազար 940 ամերիկյան դոլար:

Резюме

Кроме человеческих, территориальных, историческо-культурных памятников и духовных последствий армянский народ так же потерпел большие материальные убытки. В армянском обществе нет единого метода для расчета материальных убыток. Не уточнен еще и вопрос кто будет требовать эти деньги и от кого. Отдельные люди от конкретных страховых компании или Армения как государство от Турции.

Summary

Except human, territorial, historical and cultural monuments and spiritual consequences the Armenian people also sustained big loss of property. In the Armenian society there is no uniform method for calculation material a loss. It isn't specified also the question who will demand this money and from whom. Certain people from concrete insurance companies or Armenia as the state from Turkey.

Աղբյուրները՝ 1. Andreu-Guzman F. Senior Legal Advisor, International Commission of Jurists (Geneva), Preface,
p. 9. In: Alfred de Zayas. The Genocide against the Armenians 1915-1923 and the Relevance of
the 1948 Genocide Convention. Brussels-Geneva, 2005.
2. Brownlie I. Principles of Public International Law. Oxford, 5th ed.,

2001, Glossary.

3. Միջազգային իրավունքի մեջ erga omnes (միջազգային ամբողջ հանրության դեմ)
հանցագործություններ են համարվում jus cogens-ը (միջազգային ի-
րավունքի
անբեկանելի սկզբունքները) ոտնահարող հանցագործությունները: Միանշանակ
է, որ ցեղասպանությունը jus cogens-ը ոտնահարող հանցագործութ-
յուն է,
հետևաբար Թուրքիայի պատասխանատվությունը, ոչ միայն հա-
յության, այլև ողջ
միջազգային հանրության առջև է:

4. Alfred de Zayas, Ibid, p. 11.

5. Հատուկ հանձնախմբի աշխատանքների մանրամասների համար տե՛ս՝ Burett P.M.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

ուսանողական գիտաժողով
2015 թ., մայիսի 31

ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Իրավագիտության և հասարակագիտության ամբիոնի դասախոս Անի Խեչոյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր-մարդ, պետություն, իրավունք, ազատություն, իրավախախտում, իրավագիտակցություն, արդարադատություն:

Հազարամյակներ շարունակ մարդու ազատության և իրավունքների ճանապարհին առկա են եղել բազմաթիվ խոչընդոտներ: Դրանցից մեկն էլ պետությունն է, որն իր հզորությունն օգտագործել է մարդու ազատությունը ոտնահարելու, նրա իրավունքները խախտելու համար: Հաճախ մարդը և պետությունը գոյատևել են իրարից օտարված և միմյանց հանդեպ թշնամաբար տրամադրված: Ստրուկի և ճորտ գյուղացու համար պետությունը եղել է օտար, թշնամական ուժ, որովհետև նրանք չեն ունեցել իրավունքներ և ազատություններ, այլ կրել են միայն պարտականություններ: Մարդկությունը անցել է երկար և դժվարին ճանապարհ, մինչև որ պետությունը սկսել է ճանաչել և հարգել մարդու իրավունքները:

Այդ իրավունքների ճանաչումն ու հարգումը պետության կողմից, թերևս, մարդկության մեծագույն նվաճումներից է: Մարդու իրավունքների ճանաչման խիստ անհրաժեշ-

տությունն ու կարևորությունը հասկանալու համար պարտադիր չէ ունենալ համապատասխան մասնագիտական գիտելիքներ, բավական է միայն գիտակցել, որ յուրաքանչյուր անձ ունի իրավունքների և, համապատասխանաբար, պարտականությունների որոշակի ծավալ:

Իր հերթին մարդու իրավունքները հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ, թե ո՞վ է մարդը, քանզի մարդու իրավունքները, մարդու անօտարելի հատկություններն են:

Մարդը հասարակական կյանքով ապրող կենսաբանական և բանական էակ է, որի՝ որպես տեսակի գոյության համար անհրաժեշտ են որոշակի բնական, հոգևոր և հասարակական պայմաններ:

Մարդը կարող է գոյություն ունենալ միայն որոշակի բնակենսաբանական և հասարակական միջավայրում, որտեղ բավարարվում են նրա պահանջմունքները: Նման միջավայրի ստեղծման ուղին մարդու համար հնարավորություններ ապահովելն է, որպեսզի նա, օգտագործելով դրանք, բավարարի իր սեփական, անհատական պահանջմունքները:

Այլ կերպ ասած՝ մարդու իրավունքները հնարավորություններ են, որոնք ուղղված են մարդու բնույթով պայմանավորված բնական ու հասարակական պահանջմունքների բավարարմանը, դրանք մեր կամքից անկախ և անհրաժեշտ պայմաններ են, առանց որոնց մարդը որպես էակ գոյություն ունենալ չի կարող:

Իրավունքներն անհատից անբաժանելի ու անօտարելի են: Պետությունը ճանաչում, օրենքներով ամրագրում և երաշխավորում է մարդու բնական իրավունքները, որպեսզի ի վերջո ապահովի մարդու գոյությունն ու ազատ զարգացումը: Դրանք ամրագրվում են կոնկրետ պետության օրենքներում, միջազգային իրավական փաստաթղթերում և ձեռք են բերում համապարտադիր իրավական նշանակություն:

Մարդու իրավունքների հասարակական առաքելությունը և նպատակը մարդու արժանապատիվ կյանքի և ազատության, մարդկանց իրավահավասարության ապահովումն է: Դրանց միջոցով է որոշվում անհատի ազատության չափը հասարակության մեջ, ինչպես նաև այլ անհատների հետ հարաբերություններում, քանզի մարդու իրավունքներից յուրաքանչյուրի համար բխում է նաև այսպես կոչված «ընդհանուր պարտականություն» չխախտել այլ անձանց իրավունքները: - Մարդու իրավունքները կազմում են յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակության ձևավորման և զարգացման նախահիմքը, և որքանով անձը քաջատեղյակ է իր իրավունքների, ինչպես նաև այլ անձանց իրավունքները չխախտելու «ընդհանուր պարտականության» մասին ու ազատ է իր ընտրությունը նախասիրությունների հարցում, այնքանով ավելի մեծ է հասարակության մեջ լիարժեք և օրենքի հարգման ոգով դաստիարակված անդամ դառնալու հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալները՝ կարող ենք ասել, որ մարդու իրավունքները բնական օրինաչափություններով պայմանավորված հնարավորություններ են, որոնք ապահովելու համար ամրագրվում են Սահմանադրությամբ և օրենքներով, և կոչված են երաշխավորելու մարդու կյանքը, ազատությունը, իրավահավասարությունը, արժանապատվությունը:

«Պետության նպատակը մարդն է ու նրա իրավունքները», սա նշանակում է, որ պետությունը հասարակական դաշինքի արդյունքում ստեղծված կազմակերպություն է, որի առաքելությունը մարդու իրավունքների անօտարելիության ու անքակտելիության երաշխավորումն է, հասարակական կարգուկանոնի ու խաղաղության հաստատումը:

ՀՀ Սահմանադրությունը հռչակում է, որ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Մարդու ար-

ժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբաժանելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Պետությունը սահմանափակված է մարդու իրավունքներով:

Այլ հարց է արդեն, արդյո՞ք դրանք պաշտպանված են, իսկ եթե այո, ապա որքանո՞վ, և ինչո՞վ է իրականում պայմանավորված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հիմնախնդիրը:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ՀՀ-ն թերևս թերանում է և բախվում այնպիսի խնդիրների հետ, երբ խախտվում է անձանց այս կամ այն իրավունքը: Ամենացավալին այն է, որ մարդու իրավունքների ոտնահարումները մեծամասամբ հանդիսանում են կոռուպցիոն երևույթների հետևանք: Մասնավորապես՝ կաշառքը, հովանավորչությունը, յուրացումը և կոռուպցիայի այլ դրսևորումները հանգեցնում են այլոց իրավունքների (օրինակ՝ սեփականության իրավունք, կրթության իրավունք, առողջության իրավունք և այլն) ոտնահարումների և խտրականության: Ուսումնասիրելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը՝ ակնհայտ երևում են այն բնագավառները, որտեղ իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումներն ավելի ընդգծված բնույթ են կրում: Փորձենք ներկայացնել դրանցից մի քանիսը:

Մասնավորապես, հաղորդման մեջ պաշտպանն անդրադարձ է կատարել դատախազության գործունեության ոլորտին՝ նշելով, որ գործնականում դեռևս չի վերացել այն պրակտիկան, երբ անձի՝ որպես վկա հայտնած տեղեկությունների հիման վրա վերջինս նույն կամ մեկ այլ գործով ներգրավվում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ, նման

պրակտիկան խախտում է անձի տարբեր իրավունքներ՝ այդ թվում՝ լռելու իրավունքը, ինչպես նաև անմեղության կանխավարկածը:

Դատախազությունը չի ձեռնարկել բավարար միջոցներ՝ ազատազրկման վայրերում խոշտանգման դեպքերը վեր հանելու և կանխելու ուղղությամբ: Ստացվել են բողոքներ, ձերբակալված և կալանավորված անձանց պահման մի շարք վայրեր, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներ (ՔԿՀ) ընդունված անձանց մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, սակայն այդ վնասվածքների առկայության փաստով բազմաթիվ դեպքերում կայացվել են քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ: Չեն իրականացվել անհրաժեշտ դատավարական և քննչական գործողություններ (օրինակ՝ զննություն, փորձաքննություն) կամ այդ դեպքերը բավարար խորությամբ և արագությամբ չեն ուսումնասիրվել, մինչդեռ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, նաև պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, նրանց պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները: Այսպիսով, ազատազրկված անձանց մոտ մարմնական վնասվածքների հայտնաբերման դեպքերի առթիվ պատշաճ քննություն չիրականացնելը հանգեցրել է մարդու՝ խոշտանգումներից, դաժան, անմարդկային, ինչպես նաև իր պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի ոտնահարմանը:

Խոսելով արդարադատության նախարարության ոլորտում առկա խնդիրների մասին՝ պաշտպանը առանձնացրել

է մի շարք օրենսդրական բացեր: Օրինակ՝ օրենսդրությամբ դեռևս երաշխավորված չեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքները:

Խնդրային են նաև օրենսդրությամբ սահմանված բարձր պետական տուրքի դրույքաչափը և որոշ դեպքերում՝ դրանց վճարման անհիմն պահանջները, որոնք հանգեցրել են դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակմանը:

Անդրադառնալով Հատուկ քննչական ծառայության (ՀՔԾ) գործունեությանը՝ պաշտպանը նշում է, որ պաշտոնատար անձանց կողմից իրականացված հանցագործությունների, այդ թվում՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ոչ բոլոր դեպքերով է կատարվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Պաշտպանը խոսել է նաև պաշտպանության նախարարության ոլորտում առկա խնդիրների մասին՝ նշելով, որ ինչպես 2014թ., այնպես էլ 2015թ. ընթացքում չեն ձեռնարկվել բավարար միջոցներ՝ զինված ուժերում մահվան, ինչպես նաև ինքնավնասման դեպքերը կանխելու ուղղությամբ:

Ոստիկանության ոլորտում առկա խնդիրների մասին խոսելիս օմբուդսմենն ընդգծել է, որ 2015թ. կրկին արձանագրվել են ոստիկանության կողմից խաղաղ հավաքների սահմանափակման որոշ դեպքեր, այդ թվում՝ ոչ իրավաչափորեն հավաքի ցրում, հավաքի մասնակիցների նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառում, նրանց ազատ տեղաշարժի սահմանափակում, իսկ որոշ դեպքերում՝ անհարկի բերման ենթարկում:

Իսկ ի՞նչ միջոցներ է անհրաժեշտ ձեռնարկել այդ ամենը կանխելու համար: Կարծում ենք՝ անհրաժեշտ է մշակել

հստակ ռազմավարական ծրագիր, որի օգնությամբ էլ ավելի կընդգծվեն առկա խնդրներն ու կմշակվեն դրանց լուծման հնարավոր տարբերակները:

Որպես առաջնային նպատակ կարելի է առանձնացնել իրավագիտակցության մակարդակի աճի ապահովումը՝ մարդու իրավունքների և դրանց պաշտպանության եղանակների մասին հանրային իրազեկության բարձրացումը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, լայն հասարակության, ինչպես նաև՝ քաղաքացիների կողմից սեփական իրավունքների պաշտպանության խրախուսումը:

Իր էական նշանակությունը կունենա նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ կրթական ծրագրի կազմումը, որն իր մեջ կներառի ոչ միայն կոնկրետ իրավունքների վերաբերյալ «տեսական» գիտելիքների ընդլայնումը, այլև դրանց ենթադրյալ խախտումների դեպքում պաշտպանության միջոցների վերաբերյալ պատշաճ տեղեկատվության ապահովումը: Դրա օգնությամբ կբարձացվի իրավունքների մասին տեղեկացվածության աստիճանը հասարակության բոլոր շերտերում՝ ներառյալ դպրոցական տարիքի անձանց և, իհարկե, բուհերը: Անկախ մասնագիտությունից, զբաղվածությունից և աշխատանքից՝ իրավունքների մասին տեղեկացված լինելը մեզանից յուրաքանչյուրի, այսպես ասած, «պարտականությունն» է, քանզի այդժամ ավելի հեշտ է կանխել դրանց խախտումը, ինչպես նաև դրա անհնարինության դեպքում՝ իրականացնել խախտված իրավունքի վերականգնումը:

Անհրաժեշտ է համապատասխան միջոցառումներ ձեռնարկել՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մասնագետների և կազմակերպությունների կարողությունների կատարելագործմանը, մարդու իրա-

վունքների խախտումների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և թափանցիկության ապահովմանը:

Մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար նպատակահարմար ենք համարում իրավունքի տարբեր ոլորտներում ստեղծել իրավունքի տվյալ բնագավառում մարդու իրավունքների երաշխավորման համար հասարակական վերահսկողական գործառույթներ իրականացնող խմբեր:

«Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ» խորագրով հրապարակային սեմինարների հաճախակի անցկացումը մեծ հետաքրքրություն կառաջացնի հասարակության անդամների շրջանում, բնականաբար կավելանան նշյալ սեմինարների մասնակիցները, այնուհետև ակտիվ քննարկումներն ու համատեղ կատարած աշխատանքներն էլ իրենց հերթին որոշակիորեն կկանխեն իրավունքների և հիմնարար ազատությունների հնարավոր խախտումները:

Անհրաժեշտ է հեռուստատեսությամբ ցուցադրել բոլորովին նոր ձևաչափ ունեցող հաղորդումներ՝ այդպիսով ավելի հանրամատչելի դարձնելով համապատասխան տեղեկությունների տրամադրումն այն անձանց խմբի համար, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն կարող իրենց մասնակցությունն ունենալ անցկացվող սեմինարներին կամ հասարակական խմբերին, հաղորդման ընթացքում կներկայացվեն որոշակի իրավիճակներ՝ լուծման հնարավոր եղանակներով:

Թերևս ամենակարևոր նախադրյալը հասարակության անդամների մոտ արդարադատություն իրականացնող մարմինների նկատմամբ վստահության ձեռքբերումն է: Միայն այդ ճանապարհով հնարավոր է կանխել իրավունքների հետագա խախտումները: Այսինքն՝ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց առկայության դեպքում իրավունքները խախտված անձը առանց որևէ մտավախության կամ

կասկածի կձեռնարկի համապատասխան միջոցառումներ իր իրավունքը վերականգնելու ուղղությամբ:

Резюме

Ключевые слова: человек, государство, право, свобода, правонарушение, правосознание, юстиция

Для нормального развития государства и образованного общества необходимо по мере возможности сократить количество правонарушений, по этой причине в статье рассматриваются существующие проблемы и обстоятельства в современном мире, которые являются причиной многочисленных правонарушений. Представлены возможные способы их устранения, а также способы предотвращения последующих правонарушений. В особенности, первоначальная цель повышение уровня правосознания. Для осуществления этой программы представлены многочисленные и по меньшей мере продуктивные направления, при помощи которых восстановление нарушенных прав человека станет легче.

Summary

Key Words: human, state, right, freedom, offence, legal awareness, justice

For normal development of state and civilized society the number of present offenses must be reduced. For that reason the article touches present problems and circumstances of the current reality that cause numerous offenses. The possible means of their abolition, also the ways of prevention of future offenses are presented. In particular, the main goal is rise the level of legal awareness. For making real that plan many effective means have been proposed which will facilitate the process of actions aimed at restoration of the violated rights of person.

ԷԴԻՏԱ ԿՈՆԱՏՅԱՆ
Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, պրոֆեսորԱրմեն Ճուղուրյան

Բանալի բառեր - միգրացիա, բնակչություն, Հայաստան, աշխատուժ, միգրանտներ, զբաղվածություն, քաղաքականություն, կարգավորում:

.,,,,,,,,,,,,,,,vernagir

Միգրացիան տարերային բնույթ ունի և այդ գործընթացում ներգրավված է երկրի չափահաս բնակչության զգալի մասը, որն էլ, իհարկե, բացասական ազդեցություն ունի տնտեսության վերափոխումների արդյունավետության և սոցիալ-տնտեսական առաջընթացի վրա: Միգրացիան առնչվում է նաև ազգային անվտանգության հետ, որտեղ գործում են մարդու իրավունքները և հաշվի առնվում հասարակության շահերը:

Սկսած 1990-ական թվականներից՝ Հայաստանում սկսվեց բնակչության զանգվածային միգրացիա և առաջացավ թաքնված գործազրկություն: Դա պայմանավորված էր հիմնականում հետխորհրդային երկրների հետ տնտեսական կապերի խզման, Արցախյան ազատամարտի, Սպիտակի երկրաշարժի, Հայաստանի շրջափակման և հետխորհրդային տնտեսական այլ խնդիրների հետ: 1990-ական թվականների երկրորդ կեսից, երբ սկսվեց Հայաստանի տնտեսության վերակազմավորումը, Հայաստանը ստանձնեց հումքային երկ-

րի կարգավիճակ: Ակնհայտ է, որ Խորհրդային Հայաստանի զարգացած վարչահրամայական տնտեսությունից անցումը դեպի շուկայական տնտեսության հանգեցրեց լուրջ համակարգային խնդիրների, այդ թվում՝ զբաղվածության ոլորտում: Այսպես, տնտեսապես ակտիվ բնակչությունը չապահովվեց համապատասխան աշխատատեղերով և աշխատավարձով: Այդ իրավիճակը առաջ բերեց զանգվածային աշխատուժի արտագաղթ:

Ըստ 2015 թվականի պաշտոնական տվյալների՝ ՀՀ-ի գործազրկության մակարդակը կազմում է 19,5%[64]: Ըստ համաշխարհային մրցակցության ցուցանիշի՝ հակամենաշնորհային քաղաքականության և ներքին մրցակցության ինտենսիվության տեսանկյունից Հայաստանը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների ցանկում զբաղեցնում է վերջին տեղը: Այդպիսի ցածր ցուցանիշը արտացոլում է Հայաստանի տնտեսության մեջ դինամիկայի բացակայությունը, որը իր հերթին բարձր գործազրկության և բնակչության ցածր եկամուտների պատճառ է հանդիսանում[65]:

ՀՀ աշխատուժի միգրացիան, բացի գործազրկությունից, պայմանավորված է նաև այլ գործոններով: Ըստ ՄԱԿ-ի մեթոդաբանության՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում (2011- 2014թթ.) արտաքին միգրանտները կազմել են հաշվառման ժամանակ երկրից 3 ամիս և ավելի ժամկետով բացակայած տնային տնտեսությունների անդամների (չվերադարձածների-116500 մարդ) 97%-ը (մոտ 113 հազ.մարդ), որոնցից կարճաժամկետ միգրանտները՝ 4-12 ամիս տևողությամբ երկրից բացակայածները (որում չեն ներառվել՝ հանգստի, ընկերներին/բարեկամներին այցելության, արձակուրդի,

---

64 http://www.armstat.am/am/?nid=126&id=08010&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6% 80%D5%A5% D5%AC

65 http://gtmarket.ru/news/2015/09/30/7246

գործնական, առողջական կամ կրոնական ուխտագնացության մեկնածները) կազմել են արտաքին միգրանտների համակցության 60%-ը(69900մարդ), իսկ երկարաժամկետ միգրանտները՝ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայածները՝ 40%-ը (46600 մարդ): Հետազոտության արդյունքներով՝ 2011- 2014թթ. 3 ամիս և ավելի տևողությամբ ՀՀ-ից մեկնած և 2014թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած (ներառյալ կարճաժամկետ միգրանտները) 15 և բարձր տարիքի տ/տ անդամ միգրանտների միջին տարեկան գնահատականը կազմել է շուրջ 28.2 հազ. մարդ: Ստորև բերված աղյուսակով ներկայացված է ՀՀ 2011-2014 թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2014 թ. դեռևս չվերադարձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամները՝ ըստ բացակայության տևողության և պատճառի[66].

Աղյուսակ 1

Մեկնելու հիմնական պատճառը	Բացակայության տևողությունը			Ընդամենը
	≤3 ամիս	4-11 ամիս	≥12 ամիս	
Աշխատելը	66.9	69.5	56.0	64.5
Աշխատանք փնտրելը	6.1	2.7	7.1	4.7
Ընտանեկան	0.0	0.1	1.4	0.5
Բնակությունը	4.8	0.3	0.2	0.9
Մասնավոր այց բարեկամներին, ընկերներին	0.5	0.0	0.0	0.1
Զբոսաշրջություն	9.4	5.1	4.3	5.4
Գործնական	0.5	0.1	0.0	0.1
Բուժում/առողջական	2.9	0.3	0.7	0.8
Այլ	8.9	21.9	30.4	23.0

[66] http://www.armstat.am/file/article/demog_2015_7.pdf

Ընդամենը	100	100	100	100

Աղյուսակի տվյալներից երևում է, որ միգրացիայի գերակշռող պատճառ է աշխատանքի հիմնահարցը, սակայն, ըստ հետազոտությունների, այն կրում է սեզոնային բնույթ:

Ներկայացնենք նաև 2011-2014թթ. 3 ամիս և ավելի տևողությամբ միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2014թ. դրությամբ դեռևս չվերադաձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներն ըստ մեկնելու պատճառի և գտնվելու վայրի.

Աղյուսակ 2

Մեկնելու հիմնական պատճառը	Գտնվելու վայրը								
	Երևան	ՀՀ մարզեր	ԼՂՀ	ՌԴ	ԱՊՀ այլ երկրներ	Եվրոպա	ԱՄՆ, Կանադա	Այլ	Ընդամենը
Աշխատելը	3.0	1.8	0.7	92.1	0.7	1.4	0.2	0.1	100
Աշխատանք փնտրելը	0.8	8.4	0.0	75.7	5.1	4.9	5.1	0.0	100
Ընտանեկան	0.0	0.0	0.0	100	0.0	0.0	0.0	0.0	100
Բնակություն	0.0	0.0	0.0	100	0.0	0.0	0.0	0.0	100
Գործնական	0.0	0.0	0.0	100	0.0	0.0	0.0	0.0	100
Բուժում/ առողջական	22.8	14.4	0.0	36.3	0.0	26.5	0.0	0.0	100
Այլ	5.7	41.6	52.3	0.3	0.0	0.1	0.0	0.0	100
Ընդամենը	7.2	12.3	13.7	63.7	0.7	1.8	0.5	0.1	100

Աղյուսակ 2-ի տվյալներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ աշխատուժի միգրացիայի հիմնական երկիրը ՌԴ-ն է: Դա արդյունք է այն բանի, որ 20 տարիների ընթացքում աշխատուժի էմիգրացիայի հետևանքով ՌԴ-ի տարբեր մեծ քաղաքներում և մարզերում ձևավորվել են հայկական գաղթօջախներ, սոցիալական և տնտեսական կապեր ինչպես

տեղի բնակչության, այնպես էլ Հայաստանի սոցիալական կառուցվածքների հետ: Եվ դրա արդյունքն այն է,որ ապահովվում է միգրանտների սեզոնային հոսքերի կայունությունը:

Այսպես, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2016թ. ապրիլի 1-ի դրությամբ 2015թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 12.3 հազ. մարդով կամ 0.4% -ով: Տարեսկզբի նկատմամբ բնակչության թվաքանակը նվազել է 4.2 հազ. մարդով, ինչը ձևավորվել է բնակչության բնական հավելաճի (1.5 հազ.) և միգրացիայի մնացորդի գնահատված ցուցանիշի (-5.7 հազ. մարդ) տարբերությամբ: Ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգով ստացված տվյալների՝ սահմանային անցման կետերով իրականացված արտաքին ուղևորաշրջանառության համախառն ծավալը 2016թ. հունվար-մարտին կազմել է 1 015. 7 հազ. և 2015թ. հունվար-մարտի համեմատ աճել է 7.2 %-ով (947.3 հազ.)[67]:

ՀՀ միգրացիոն քաղաքականության կարգավորման արդյունավետությունը, իհարկե, պայմանավորված է դրա օրենսդրական ապահովվածությամբ, որը ներկայումս դեռևս թերություններ ունի: ՀՀ-ում միգրացիայի քաղաքականության խնդիրների կարգավորման հարցերով զբաղվելու իրավասություններ ունեն.

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ աշխատանքային միգրացիայի մասով:
- Տարածքային կառավարման նախարարությունը (ՏԿՆ)՝ միգրացիայի կառավարման քաղաքականության մշակման և դրա իրագործման համակարգման և աշխատանքային միգրացիայի կազմակերպման մասով:

[67] http://www.armstat.am/file/article/sv_03_16a_520.pdf

• ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայությունը՝ քաղաքականության մշակման գործառույթների համակարգման, միգրացիայի կառավարման և փախստականների խնդիրների լուծման նպատակ հետապնդող ծրագրերի մշակման և իրագործման մասով:

• Արտաքին գործերի նախարարությունը (իրավաբանական վարչություն, հյուպատոսական վարչություն, միգրացիայի բաժին՝ պատասխանատու են վիզաների և անձնագրերի տրամադրման, արտերկրում գտնվող հայերի հետ հարաբերությունների համար):

• Սահմանապահ ծառայությունը (մտնում է Ազգային անվտանգության ծառայության մեջ, հաշվետու է վարչապետին և պատասխանատու է սահմանների կառավարման և հսկողության համար):

• Վիզաների և անձնագրերի բաժինը (մտնում է Ոստիկանության համակարգի մեջ, հաշվետու է վարչապետին և պատասխանատու է անկանոն միգրացիայի, սահմաններում վիզայի տրամադրման, երկրի տարածքում գտնվող օտարերկրացիների գրանցման, ինչպես նաև ՀՀ քաղաքացիներին ելքի թույլտվություն տալու համար):

• Նախագահի աշխատակազմը (զբաղվում է քաղաքացիություն շնորհելու հարցերով):

Երկրի միգրացիոն իրավիճակը բնութագրվում է հիմնականում էմիգրացիայով, և դրա կառավարումը ուղղված է էմիգրանտների հոսքերի վերահսկմանը, պարզեցմանը և կառավարմանը: Պետությունը առաջին հերթին կրում է պատասխանատվություն այն գործընթացների համար, որոնք տեղի են ունենում երկրի ներսում, և միայն դրանից հետո միջազգային համաձայնագրերի շրջանակում հոգ է տանում արտերկրում գտնվող իր քաղաքացիների մասին:

Այլ երկրների միգրացիոն քաղաքականությունը միանշանակ ազդեցություն է ունենում մեր երկրի վրա։ Եվրոպական երկրները մի կողմից հեշտացնում են Շենգենյան վիզայի տրամադրման կարգը, մյուս կողմից՝ ՀՀ հետ կնքված համաձայնագրերի, միջազգային և տեղական կազմակերպությունների միջոցով նպաստում են ՀՀ քաղաքացիների վերադարձին և վերաինտեգրմանը։ Այդ նպատակով վերադարձողներին ապահովում են որոշակի ֆինանսական միջոցներով, որի շնորհիվ նրանք կարող են հայրենիքում սեփական գործ սկսել կամ լուծել կենսապահովման այլ հարցեր։

Հայաստանի բնակչության միգրացիայի հիմնական պատճառները սոցիալ-տնտեսական են։ Դրա մասին խոսվում է ԵԱՀԿ-ի աջակցությամբ իրագործված «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» հետազոտությունում։ Հետազոտության ընթացքում հարցվածների 93.5%-ը որպես միգրացիայի հիմնական պատճառ նշել են զբաղվածության հիմնախնդիրը։ 46,5%-ը նշել են, որ երկրում աշխատատեղեր չկան, 43%-ը բողոքել են ցածր աշխատավարձից։ Տվյալ խնդիրները հանգեցնում են արտագաղթի ծավալների մեծացման և ներգաղթի նվազման։ Եվ այդ իսկ պատճառով միգրացիոն արդյունավետ քաղաքականությունը պայմանավորված է հետևյալ խնդիրների՝

1. արտագաղթի նվազեցման,
2. ներգաղթի խրախուսման,
3. մասնավոր տրանսֆերտների ավելացման և դրանց կառավարման,
4. ներդրումների օգտագործման,
5. միգրանտներին տեղեկատվությամբ ապահովման, շահերի պաշտպանության և աջակցության խնդիրների լուծմամբ։

Վերոնշյալ խնդիրների լուծմանը կարելի է հանգել հետևյալ քայլերով.

• Իրականացնել զբաղվածության արդյունավետ քաղաքականություն՝ նոր աշխատատեղեր և պայմաններ ստեղծել բնակչության արտագաղթը նվազեցնելու և ներգաղթը խթանելու համար:

• Կատարել որոշակի օրենսդրական շտկումներ, հստակեցնել ՀՀ միգրացիոն օրենսդրական դաշտը համապատասխան օրենքների ընդունմամբ:

• Ստեղծել բարենպաստ պայմաններ և արդյունավետ ներդրումային միջավայր փոքր և միջին բիզնեսի զարգացման համար: Այն կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, աշխատուժի արտահոսքի նվազեցմանը, տեխնոլոգիական առաջընթացին, միջին խավի ձևավորմանը, նաև աղքատության մակարդակի նվազեցմանը, նորարարությունների զարգացմանը, ֆինանսավարկային համակարգի զարգացմանը և այլն:

• Անհրաժեշտ է ստեղծել միգրանտների համար խորհրդատվական մարմիններ, որոնք կապահովվեն միգրանտներին անհրաժեշտ տարբեր տեսակի տեղեկատվությամբ՝ ընդունող երկրի վերաբերյալ:

• Կարևոր դեր ունի արտերկրում անօրինական կարգավիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի մասին երկկողմ համաձայնագրերի կնքումը: Նաև անհրաժեշտ է միգրանտների խնդիրների լուծման շուրջ միջազգային նոր պայմանագրերի կնքումը:

• Ուշադրություն պետք է դարձնել նաև շրջափուլային միգրացիայի կարգավորմանը, քանի որ ՀՀ-ի աշխատուժի միգրացիայի ծավալի մեծ մասը կրում է սեզոնային բնույթ:

Շրջափուլային միգրացիան ՄՄԿ-ը սահմանում է որպես «սահուն շարժում, որը կարող է օգտակար լինել բոլոր

մասնակիցների համար, եթե առաջանում է կամավոր կերպով և կապվում ծագման երկրի աշխատուժի կարիքների հետ»[68]: Այն դիտարկվում է ՄԱԿ-ի Միջազգային միգրացիայի և զարգացման միջազգային սիմպիոզումի մեջ՝ որպես երկրի ծերացող աշխատուժի և հմտությունների որոշակի տեսակի համար լուծում գտնելու մեխանիզմ:

Այսպես, Հայաստանի միգրացիոն քաղաքականությունը պետք է կենտրոնանա ժամանակավոր միգրացիայի արդյունավետ կառավարման և համակարգման վրա՝ շեշտադրելով միգրանտների հմտությունների և աշխատաշուկայի պահանջների արդյունավետ համապատասխանեցումը:

• Անհրաժեշտ է նաև ՀՀ որոշ կառավարչական որոշումների վրա ազդեցություն գործել և փոխշահավետ համագործակցություն ծավալել ԵՄ երկրների հետ՝ միգրացիոն սխեմաների ստեղծման հարցում: Վերջինս կնպաստի ընդունող երկրում միգրանտների հմտությունների թերօգտագործման նվազեցմանը և աշխատատեղերի բազմազանության ավելացմանը:

• Միգրանտների կրթության թերօգտագործումը նաև կապված է ՀՀ բուհական ոլորտում տրվող հմտությունների և աշխատաշուկայի պահանջների ոչ լիարժեք համապատասխանելիության հետ: Այդ բացը կարող է լրացվել բարձրագույն կրթության ծրագրերի վերանայմամբ և միջին մասնագիտական ծրագրերի զարգացմամբ, նաև որոշակի վերապատրաստական ծրագրերի իրականացմամբ:

Ներկայումս գործում է «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը»՝ նախատեսված 2011-2016 թթ. հա-

[68] ՄՄԿ, մարտ, 2008:

մար, որում նշված է միգրացիոն քաղաքականության գործողությունների մանրամասն պլանը՝ ուղղված միգրացիայի կարգավորմանը, օրինական միգրացիայի, աշխատուժի շարժունության ապահովմանը, ապօրինի միգրացիայի կանխարգելմանը և վերահսկմանը, վերադարձի հնարավորությունների ապահովմանը և այլ միգրացիոն խնդիրների լուծմանը[69]:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ միգրացիոն քաղաքականությունը առավել մեծ ուշադրություն պետք է դարձնի աշխատուժի էմիգրացիային և շրջափուլային միգրացիային՝համակարգելով միաժամանակ զբաղվածության քաղաքականությունը:

Կառավարության կողմից զբաղվածության արդյունավետ քաղաքականության մշակումը, ներդրումային միջավայրի բարելավումը,միգրացիոն դաշտի օրենսդրական կարգավորումը և միգրանտներին համապատասխան տեղեկատվությամբ ապահովումը կհանգեցնի էմիգրացիայի հոսքերի կրճատմանը և բնակչության ժողովրդագրական վիճակի բարելավմանը:

Հայաստանի կառավարությունը անհրաժեշտություն ունի իր էմիգրատների հմտությունների և կարողությունների օգտագործման վերաբերյալ հետազոտությունների անցկացման, ինչպես նաև երկրների աշխատուժի շուկաների պահանջների և կրթական համակարգում առաջարկվող ծրագրերի համապատասխանելիության հետազոտման: Արդյունքում անհրաժեշտ է դրանց առավել համապատասխանելիությանը նպաստող գործունեություն ծավալել: Դա միգուցե հնարավոր է կրթական ծրագրերի վերանայմամբ և վերապատրաստական ծրագրերի իրականացմամբ:

Միգրացիոն հոսքերը հնարավոր չէ դադարեցնել, սակայն արդյունավետ միգրացիոն և զբաղվածության քաղաքականությունը

[69] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/11/11_1593.pdf

ների մշակման միջոցով հնարավոր է հասնել դրանց կարգավոր-մանը և վերահսկմանը:

Заключение

Миграционная политика РА должна уделять большое внимание на трудовую эмиграцию и циклическую миграцию, одновременно координируя политику в области занятости.

Разработка эффективной политики занятости правительством, улучшения инвестиционной среды , регулирование законов, и предоставление информации о соответствующей области мигрантом, приведет к сокращению эмиграционных потоков и к улучшению демографической ситуации страны.

Правительство Армении имеет потребность в проведении исследований по использованию навыков и умений эмигрантов, а также изучению соответствии между требованиями рынка труда и программами системы образования. В результате, необходимо осуществлять деятельность, которая будет способствовать их согласованию. Это возможно осуществить при помощи пересмотра учебных программ и проведения подготовительных курсов.

Миграционные потоки не возможно остановить. Однако, за счет разработки и осуществлении эффективной политики миграции и занятости можно достичь их контролированию и регулированию .

Conclusion

The migration policy of the Republic of Armenia must a great attention to the emmigration of the labor and circular migration, simultaneously coordinating the employment policy.

Developing an effective policy of employment by government, improvement of the investment environment, regulation of laws and providing information about the relevant area to migrants, would reduce emigration flows and improve the demographic situation of the country.

The Armenian government has a need for research about the use of immigrant's skills and abilities, also the correspondence between the

labor market requirements and programs of the education system. As a result, it is necessary to carry out activities which will promote their harmonization. This is possible to implement by means of revision of the curricula and conducting the preparatory courses.

Migration flows cannot be stopped. However, through the development and implementation of an effective migration and employment policies, the government can achieve controlling and regulating them.

Գրականության ցանկ

1. Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ենթատարածաշրջանային գրասենյակ: - Միգրացիա և զարգացում. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն: 2009:

2. ԵԱՀԿ, «Առաջադեմ տեխնոլոգիաներ» ՀԿ, Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից 2002-2005թթ.

3. ԵԱՀԿ, «Առաջադեմ տեխնոլոգիաներ»ՀԿ, Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից 2005-2007թթ.:

4. Հայաստանի հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն: Գնահատման առաքելության զեկույց, 2008թ.:

5. ՀՀ ԱՎԾ, Զեկույց. Հայաստանի հանրապետության հսկիչ անցագրային կետերի ուղևորաշրջանառության (միգրացիայի) ընտրանքային հետազոտության,2002թ., 106էջ:

6. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/11/11_1593.pdf

7. http://www.armstat.am/file/article/demog_2015_7.pdf

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս Ռոմիկ Կարապետյան

ԶԱՐԳԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Բանալի բառեր - գյուղատնտեսություն, աղքատություն, արտագաղթ, կոոպերատիվների ստեղծում, գյուղատնտեսության ապահովագրում, արտահանում:

Հայոց պետականությունը ունի հազարամյա պատմություն՝ վերելքներով և անկումներով: Մեր պետականության համար գրեթե միշտ խնդիր է եղել պահպանել քաղաքական, տնտեսական և մշակութային անկախությունը: Այն ընթացել է բարբարոսների և նվաճողների դեմ մղած ազգային ազատագրական պայքարով, մերը պահպանել ենք՝ սերունդներին ավանդելով սեր դեպի մարդը: Դարերով չունենալով պետականություն՝ մենք չենք վերացել, հակառակը՝ լինելով աշխատասեր, հավատարիմ և անդավաճան ազգ, հաճախ զբաղեցրել ենք պատասխանատու պաշտոններ օտար արքունիքներում:

Պատմությանը հայտնի է հրեաների պետականության վերականգնման օրինակը, որը տևել է 2500 տարի: Նրանք կարողացան ստեղծել մի երկիր, որը եզակի է իր տնտեսա-

կան, կրթական, գիտական, ռազմական, սոցիալական, բարոյական զարգացածության մակարդակով:

Ցավոք, հարկ է նշել, որ մեզ հետ նույնը տեղի չունեցավ: Ունենալով բարձր մշակութային, կրթական, գիտական, տնտեսական, քաղաքական ներուժ, մենք չկարողացանք ինքնակազմակերպվել, իրականացնե լգերագույն նպատակը, այն է՝ ստեղծել հզոր պետականություն: ԽՍՀՄ-ի տարիներին ձեռք բերելով բարձր տնտեսական և գիտական զարգացածություն՝ անկախության առաջին տարիներից սկսած՝ փաստորեն այն չօգտագործվեց: Տեղի ունեցավ կապիտալի և տնտեսական ներուժի փոշիացում: Անլուծելի դարձան քաղաքական պրոբլեմները և առաջին հերթին՝ հայ-ադրբեջական հակամարտությունը:

Որպես գյուղում ապրող և Հայաստանի Հանրապետության գյուղի ապագայով մտահոգված անձ, մեր երկրի պետականության զարգացումը և ազգային հզորացումը տեսնում եմ նաև գյուղական կյանքի, ապրելակերպի վերակառուցման և զարգացման հետ: ԽՍՀՄ-ի փլուզումը հանգեցրեց Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական արտադրության կազմալուծմանը: Գյուղի ունեցվածքի սեփականաշնորհման և ապապետականացման գործնթացը, ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա զարգացումը, արդարացի և արդյունավետ չէր: Հողատարածքների կադաստրային բաշխումը, այսպես կոչված վիճակահանության միջոցով և հողի մշակման անկանոն սկզբունքների առաջացումը, փաստորեն հանգեցրեց անարխիայի:Գյուղական կյանքում տեղի ունեցավ շերտավորում, որը բացասական հետևանքներ ունեցավ գյուղական արտադրանքի ստեղծման և իրացման վրա: Զրկված լինելով մասնագիտացած օգնությունից, արտադրության կազմա-

կերպման և կառավարման գիտական միջամտությունից՝ գյուղացու առջև կանգնեցին բազմաթիվ լուրջ խնդիրներ, մասամբ նույնիսկ անլուծելի՝ կապված սպառման շուկայի, նյութատեխնիկական ապահովման և այլ հարցերի հետ: Գյուղացին փաստորեն զրկված էր աշխատանքների կազմակեպման և կառավարման պետական աջակցությունից, տնտեսվարման սուբյեկտների ֆինանսական օգնությունից: Ստեղծված իրավիճակը հանգեցրեց պետական ծրագրերի խափանմանը, երբ 2013թ.-ի տվյալներով գյուղական բնակավայրերում մեկ շնչի հաշվով անվանական դրամական եկամուտը երկրում կազմել է 34.7 հազար Հայաստանի Հանրապետության դրամ[70]: Ծավալելով տնտեսական գործունեություն՝ գյուղում ապրող մարդն ունի ցածր եկամուտ, ինչը հանգեցնում է աղքատության բարձր մակարդակի: ԵԱՏՄ-ի և ԱՀԿ-ի շրջանակներում Հայաստանի մաքսային և հարկային քաղաքականությունը ունի որոշակի սահմանափակումներ՝ կապված հարկերի և մաքսերի դրույքաչափերի հետ, ինչը խոչընդոտում է տնտեսության, մասնավորապես գյուղատնտեսության առանձին ուղղությունների զարգացմանը: Այսօր Հայաստանը դարձել է ռիսկային գոտի բոլոր առումներով՝սոցիալական ապահովվածության ցածր մակարդակ, արտագաղթ, աշխատանքի արտադրողականության անկում, ռազմավարության բացակայություն, գյուղերի դատարկություն և այլն: Այդ պատկերը նկատելի է անզեն աչքերով: Հայաստանի - Հանրապետության կառավարության կողմից ձեռք են առնվում որոշակի միջոցառումներ՝ ստեղծված իրավիճակը շտկելու, այն կառավարելի դարձնելու ուղղությամբ: Մշակվել է մինչև 2020 թվականի Հայաստանի Հանրապետության

[70] barometer.am

գյուղատնտեսության կայուն զարգացման ծրագիրը, որտեղ հնարավորինս ներկայացված են գյուղացու և գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման ուղիները: Դրանցից են՝

-գյուղատնտեսությունը զարգացնել արդյունաբերականացման ուղիով, այսինքն՝ արտադրության ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, արդիական տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի կիրառումը,

-առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների և կոոպերատիվների ստեղծում,

-արտադրված գյուղատնտեսական արտադրանքի հումքի զգալի մասի վերամշակումը գյուղական համայնքներում,

-փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը,

-պարենային անվտանգության բարձր մակարդակի ապահովում, կարևորագույն պարենամթերքների գծով ինքնաապահովումը,

-աղքատության և արտագաղթի վերահսկումն ու կառավարումը,

-ոռոգման համակարգի և հողերի մելիորատիվ վիճակի բարելավում, անասնապահության զարգացում, թարմ կաթի և կաթնամթերքների, ոչխարի մսի և ձվի նկատմամբ հանրապետության ներքին շուկայի պահանջարկի ամբողջական, իսկ տավարի ու խոզի մսի նկատմամբ շուրջ 80 տոկոսով, թռչնի մսի ավելի քան 50 տոկոս ապահովում,

-գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի զուգահեռ զարգացում, վերամշակման կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխում,

Գյուղտեխնիկայի, առաջավոր տեխնոլոգիաների ներդրում և արտադրանքի մրցունակության բարձրացում,

-մարքետինգային աջակցություն և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացում,

-գյուղատնտեսական ռիսկերի մեղմացում՝ մասնավորապես գյուղատնտեսության փոխադարձ ապահովագրության համակարգի ներդրում և հակակարկտային համակարգի վերականգնում[71]:

Միջազգային կառույցների առջև ստանձնած պարտավորությունների կատարումը պայմանավորված է ներդրումային գրավչությամբ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող և զբաղվել ցանկացող գործարարների համար:

Резюме

Ключевые Слова: сельское хозяйство, бедность, эмиграция, создание кооперативов, страхование сельского хозяйства, экспорт

Развал СССР привел к распаду сельскохозяйственного производства Армении. В результате сельский житель столкнулся с рядом проблем; это -

- отсутствие научных методов управления;
- недоступности рынков потребления;
- низкий уровень материально-технического обеспечения;
- ограниченность финансовых средств и рядом других проблем.

Сельскохозяйственное производство Армении по своим качественным характеристикам конкурентоспособно на международном рынке, следовательно и в связи с этим необходимы стратегический подход и программное обеспечение, для которого актуальными задачами являются продовольственная безопасность, селекция, научно-техническая база и рынки потребления; в результате решения задач разрешится ряд проблем, что приведет к:

- сокращению бедности;
- повышению уровня жизни;

[71]minagro.am

- повышению уровня продовольственного обеспечения;

- созданию новых рабочих мест по перезапуску перерабатывающих предприятий;

-увеличению роста объема экспорта.

Развитие сельского хозяйства обусловлено организацией работы села, фермера. Оно должно быть научно обосновано. Сельское хозяйство Армении имеет неиспользованные резервы возможностей.

Summary

Key Words: Agriculture poverty, emigration, creation of cooperatives, agriculture insurance, export

The collapse of USSR led to the dissolution of agricultural production of Armenia. As a result the farmer (villager) faced a number of problems:

* The absence of scientific management methods

* The inaccessability of comsumer market

* The low level of logistics assurance

* The constraints of the financial resources and other reasons.

The agricultural product of Armenia is competitive in the international market with its qualitative aspects, that is why strategic state approach and software security is necessary, for which food security, selection, scientific and technical base and consumer market are urgent issues. As a result of solving the problems a number of issues will be solved, which may lead to:

* Poverty reduction

* The improvement of living conditions

* The improvement of food security level

* The relaunching of the processing enterprises, to the creation of new workplaces

* The increased growth of export volumes.

The agricultural development depends on the organization of the village, farm labor. It should be scientifically justified. The agriculture of Armenia has development opportunities /unused reserves/.

ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բանասիրության և մանկավարժության ֆակուլտետի
3-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Ռոմանագերմանական և ռուս բանասիրության
ամբիոնի դասախոս Քրիստինե Ռշտունի

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՀՀ ՊԵՏԱ-ԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բանալի բառեր - ԽՍՀՄ փլուզում, ՀՀ անկախացում, պետականություն, օտար լեզուներ, անգլերեն:

ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախության հռչակումից հետո ՀՀ-ում կատարվեցին մի շարք փոփոխություններ: Այդ փոփոխություններն առնչվեցին նաև կրթական ոլորտին: Ինչպես գիտենք, փոխվեց կրթական համակարգը և այն չափորոշիչները, որոնց վերջինս պետք է համապատասխաներ: Փոխվեց նաև օտար լեզուների, մասնավորապես անգլերենի դերը և նշանակությունը: Հանրապետությունում ակտիվորեն սկսվեց օտար լեզուների ուսուցումը, ինչն էլ նպաստեց երկրի առաջխաղացմանը:

Այժմ, երբ համաշխարհայնացումը նոր իրողությունների առջև է կանգնեցնում ժամանակակից մարդուն, առավել մեծ կարևորություն է ձեռք բերում օտար լեզուների, մասնավորապես անգլերենի իմացությունը: Սակայն մինչ անդրադառնալը օտար լեզուների ուսուցման դերին ՀՀ պետականության զարգացման գործում՝ նախ նշենք, թե ինչ է իրենից ներկայացնում «պետականություն» հասկացությունը. «Պետակա-

նությունը յուրաքանչյուր ազգի ազատության և ինքնորոշման իրավունքի իրացումն է, ինչը ձևակերպված է որպես ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունք»:

Այժմ ՀՀ-ն անցնում է պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման դժվարին ճանապարհ: Այս գործընթացում հսկայական է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ քաղաքացու ձևավորումը, որը կրողը կլինի ազգային արժեքների՝ համադրված քաղաքացիական հասարակության առաջադիմական մշակույթի հետ: Ինչպես գիտենք, Հայաստանը 2005թ. միացել է Բոլոնիայի գործընթացին, որն իրենից ներկայացնում է կրթական համակարգ, որտեղ առանցքային է եվրոպական չափանիշներին համապատասխան միասնական կրթական համակարգի ստեղծման մասին դրույթը[72]:

Գտնվելով մի տարածաշրջանում, որտեղ խաչվում են տարբեր աշխարհաքաղաքական ուժերի շահեր, Հայաստանը որդեգրել է միջազգային ակտիվ ներգրավվածության ռազմավարություն: Ըստ ՀՀ «Կրթության մասին» օրենքի հոդված 5.4՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից մեկը միջազգային կրթական համակարգում ինտեգրացումն է[73]: Սա մի կողմից ենթադրում է կրթության բնագավառի ակտիվ մասնակցություն գլոբալ և տարածաշրջանային գիտակրթական գործընթացներին, մյուս կողմից՝ խնդիր է առաջադրում կրթությանը՝ մեծացնել նման մասնակցության ներուժը, ապահովել լեզվական և միջմշակութային շփումների դժվարությունների հաղթահարումը: Կր-

---

[72] Բոլոնյան գործընթացը Հայաստանում /տեղեկանք/ http://www.edu.am/index.php?id=-1533&topMenu=17&menu1=-1&menu2=17&arch=0

[73] ՀՀ «Կրթության մասին» օրենք, 1999թ.:

թության զարգացումը պետք է առաջնորդվի կրթության՝ որպես Հայաստանի մրցակցային հիմնական առավելության տեսլականով[74]:

Այս տեսանկյունից կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության և գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը[75]:

Ներկայիս էթնոմշակութային պայմաններում բացառիկ նշանակություն ունի լեզուների իմացությունը: Լեզուն որոշիչ է «աշխատանքի ընտրության, կենսագործունեության և միջազգային հաղորդակցման ինտենսիվության» հարցերում[76]:

Այսօր անձի լեզվական կրթության հիմնական պատասխանատվությունը ընկած է դպրոցի և բուհի վրա: Լեզուների իմացությունը դիտվում է որպես կարևոր գործոն, որով անձն արժևորվում է աշխատանքային շուկայում: Հատկապես մեծ է անգլերենի դերը: Գործնական բանակցությունների 80%-ը անցկացվում է անգլերենով: Դրա ազդեցությունը հատկապես ակնհայտ է համացանցում, որտեղ էլեկտրոնային ռեսուրսների հիմնական մասն անգլալեզու է[77]:

---

[74] ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր, ՀՀ «Կրթության մասին» օրենքի հավելված, էջ 31:

[75] ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր, ՀՀ «Կրթության մասին» օրենքի հավելված, էջ 34:

[76] Арутюнян Ю. В., О потенциале межэтнической интеграции в Московском мегаполисе, социол. исслед. 2005, N 1, էջ 33:

[77] Михалева Е. А., Языковое образование как составляющая экономического капитала личности на современном рынке труда, Научный журнал “Фундаментальные исследования” N 7, Казань, 2008, էջ 2:

Օտար լեզուների կարևորությունը հռչակված է նաև մի շարք միջազգային փաստաթղթերում՝

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային բազմազանության մասին 2001թ. համընդհանուր հռչակագրի գործողությունների ծրագրի համաձայն անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ ուղղված

մարդկության լեզվական ժառանգության պահպանման և ինքնաարտահայտման, արվեստի և գաղափարների տարածման խրախուսում՝ հնարավորինս շատ լեզուներով, լեզվական բազմազանության խրախուսում՝ հարազատ լեզվի նկատմամբ հարգանքի պահպանմամբ, կրթության բոլոր հնարավոր մակարդակներում[78]:

2003թ. ոչ նյութական մշակույթի պահպանման կոնվենցիան հռչակում է լեզուն որպես ինքնաարտահայտման և ոչ նյութական մշակութային ժառանգության փոխանցման միջոց[79]:

2005թ. մշակութային ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին կոնվենցիայի ներածական մասում նշվում է, որ լեզվական բազմազանությունը հանդիսանում է մշակութային բազմազանության հիմնարար տարրը[80]:

Չնայած գործադրվող ջանքերին՝ լեզուների ուսուցումը ՀՀ-ում, այնուամենայնիվ, դեռ կարիք ունի զարգացման: Օ-

---

[78] UNESCO universal declaration on cultural diversity http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13179&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html

[79] 2003 convention for the safeguarding of the intangible cultural heritage http://www.unesco.org/culture/ich/en/convention

[80] Convention on the Protection and Promotion of the Diversity of Cultural Expressions 2005 http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=31038&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html

տար լեզուների, մասնավորապես անգլերենի իմացության մակարդակը թեև նախորդ տարիների հետ համեմատ բարձրացել է, դեռ չի հասել ցանկալի մակարդակի: Այս ուղղությամբ կարելի է ձեռնարկել հետևյալ քայլերը՝

- ավելացնել լեզվի կենտրոնների քանակը,
- ապահովել օտար լեզուների մասնագետների առնվազն ամենամյա վերապատրաստումներ արտերկրում,
- օտար լեզվի պարտադիր ուսուցումը սահմանել առաջին դասարանից,
- իրականացնել ուսանողների փոխանակման ծրագրեր,
- կազմակերպել ամառային դպրոցներ արտերկրում,
- ապահովել վերոնշյալ ծրագրերի հնարավորինս մատչելիությունը:

Ամփոփում

Առանցքային բառեր. ՀՀ ինտեգրում, միջազգային կառույցներ, զբոսաշրջություն, բյուջե, կրթություն, միջազգային չափորոշիչներ, աշխատաշուկա:

Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով զարգացող պետություն, մեծ կարևորություն է տալիս ինտեգրմանը միջազգային ասպարեզ: Այդ գործում մեծ է անգլերեն լեզվի դերը, քանի որ միջազգային կառույցներում պետությունների միջև համագործակցությունը իրականացվում է անգլերենով:

Հարկ է նշել, որ լեզուն նաև մեծ դեր ունի զբոսաշրջության ոլորտում, քանի որ այն համարվում է ՀՀ տնտեսության զարգացող ճյուղերից մեկը և նպաստում է բյուջեի մեծացմանը:

Այսպիսով, միանշանակ կարելի է պնդել, որ օտար լեզուների ուսուցումը մեծ նշանակություն ունի պետականության զարգացման գործում, քանի որ այն մեծապես նպաստում է՝

- պետության ինտեգրմանը միջազգային գործընթացներում,

- կրթական ոլորտի միջազգային չափորոշիչներին համապատասխանեցմանը,
- աշխատաշուկայի որակի և մրցունակության բարձրացմանը:

Резюме

Ключевые слова: Интеграция, международные организации, туризм, бюджет, образование, международные стандарты, трудовой рынок.

РА будучи развивающейся страной, придает большое значение интеграции в общий международный процесс. Коммуникацыя в международных организацыях проходит на английском языке.

Необходимо отметить, что английский язык также играет существенную роль в области туризма, который является одним из растущих секторов экономики РА способствующую повышению бюджета страны.

Таким образом, можно утверждать, что изучение иностранных языков имеет большое значение для развития государства, поскольку он в значительной степени способствует,

- интеграции в международный процесс,
- соблюдению международных стандартов в области образования,
- повышению качества рынка труда и конкурентоспособности.

Summary

Key words: Integration, international organizations, tourism, budget, education, international standards, labor market.

As a developing country, RA gives great importance to international integration. The role of the English language is great, since, as it mentioned above cooperation between states, countries within international organizations is conducted in English.

It should be noted that language also plays a significant role in the tourism sector, the latter being one of the growing sectors in the economy and increasing the budget.

Thus, it can be said that the study of foreign languages is of great importance for the development of the State, because it greatly contributes to

- integration of the country into international processes,
- compliance with international standards in the field of education,
- improvement of the quality of the labor market and competitiveness.

Գրականության ցանկ

1. ՀՀ «Կրթության մասին» օրենք, 1999թ.:

2. ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր, ՀՀ «Կրթության մասին» օրենքի հավելված:

3. Арутюнян Ю. В., О потенциале межэтнической интеграции в Московском мегаполисе, социол. исслед., 2005.

4. Михалева Е. А., Языковое образование как составляющая экономического капитала личности на современном рынке труда, Научный журнал “Фундаментальные исследования”

5. Բոլոնյան գործընթացը Հայաստանում /տեղեկանք/ http://www.edu.am/index.php?id=-1533&topMenu=17&menu1=-1&menu2=17&arch=0

6. UNESCO universal declaration on cultural diversity http://portal.unesco.org/en/ev.phpURL_ID=13179&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html

7. 2003 convention for the safeguarding of the intangible cultural heritage http://www.unesco.org/culture/ich/en/convention

8. Convention on the Protection and Promotion of the Diversity of Cultural Expressions 2005 http://portal.unesco.org/en/ev.phpURL_ID=31038&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանասիրության և մանկավարժության ֆակուլտետի
2-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի դասախոս, դոցենտ Հռիփսիմե Հարությունյան

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բանալի բառեր-հայրենիք, հայրենասիրություն, բանակ, ժողովուրդ, խաղաղություն, զինվոր:

Հայրենասիրությունը ենթադրում է հպարտություն Հայրենիքի նվաճումների հանդեպ, ազգային շահերի պաշտպանում, կապվածություն սեփական հողին, սեր դեպի հայրենիքի մշակույթը և սեփական լեզուն: Բոլորը գիտեն, թե ինչ է հայրենասիրությունը, սակայն կարծիքները տարբեր են: Յուրանքաչյուր մարդ յուրովի է պատկերացնում հայրենասիրությունը: Ինչպես ասել է Պարույր Սևակը՝

« Չկա ավելի խոր զգացում,քան հայրենասիրությունը:Եվ սխալվում էին հները՝կարծելով, թե սերը կույր է:Համենայն դեպս, չի կարող կույր լինել սիրո այն տեսակը,որ հայրենիքն է հարուցում, այն էլ մի այնպիսի հայրենիք,որպիսին մերն է: Նա կարիք չունի այն սիրույն, որ գործում է կույր հավատի օրենքով, նա արժանի է այն սիրույն, որ ենթակա է ըմբռնողության օրենքին: Հայրենասիրությունը ոչ մենաշնորհ է, ոչ կոչում, ոչ

պատվո տիտղոս, այլ մարդ էակի էական հատկանիշներից մեկը»[1]

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, նշանակում է՝ հայրենիքը սիրող: Սերը ոչ միայն հայրենիքի, պետության, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Սիրո և նվիրումի զգացումը երեխաների մեջ ներշնչում և սնուցում է հայրենանվեր մայրը: Ահա թե ինչու մեր իրականության մեջ՝ ՄԱՅՐ անունը պիտի դառնա ու մնա սրբազան մենաշնորհ: Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ[2]:

Այսօրվա մեր զինվորներն ապացուցեցին, որ իրենք հայրենասեր են, և որ ամեն վայրկյան պատրաստ են թշնամուն ետ շպրտելու անգամ իրենց կյանքի գնով:

Մոնթե Մելքոնյանի բառերով ասած՝ **»Դժվար էր մեր ուղին, բայց նպատակը վեհ էր, իսկ դեպի վեհ նպատակ տանող ուղին հաղթանակն է»:** [3]

Եվ իսկապես, թշնամու գնդակից ընկած այս զինվորները մերօրյա հերոսներ են, ովքեր զոհվել են հանուն հայրենիքի, հանուն մեր պետության զարգացման, մեր իսկ խաղաղության համար: Հիմա ես համոզված եմ, որ դուք էլ համաձայն եք, որ նրանք պատահական չեն ծնվում և անհետ չեն կորչում…նրանք ոգու պես ապրում են բնության մեջ, ինչպես Նժդեհը, Վարդանը, Մոնթեն, Մովսեսը նաև մեր ժամանակակից շատ հերոսներ: [4]

Հայ ժողովրդի դաստիարակության մի մաս է կազմում **ռազմահայրենասիրական դաստիարակությունը:**

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը, մեզանում օրեցօր ավելի է կատարելագործվում:

Ճիշտ է, այսօր ունենք կանոնավոր, մարտունակ և պրոֆեսիոնալ բանակ, սակայն մեծ է նաև դպրոցի դերը աշակերտի՝ ապագա զինվորի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Ուսուցիչ լինելը, ինչ խոսք, հաճելի և միևնույն ժամանակ պարտավորեցնող է:

Եվ կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացում այսօր առանձնակի տեղ է հատկացվում դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, մասնավորապես, նախնական զինվորական պատրաստություն առարկայի դասավանդմանը դպրոցում: **Ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ կատարվող մեծամասշտաբ աշխատանքները նպաստում են ոչ միայն բանակի, այլև մեր երիտասարդության շրջանում հայրենասիրական վսեմ գաղափարների հաստատմանը:**

Ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կարևոր նշանակություն կարող են ունենալ դպրոցում անցկացվող **ռազմահայրենասիրական** դաստիարակության թեմաներով միջոցառումները, որոնք կօգնեն երեխաների մեջ սեր արթնացնել դեպի հայրենիքը:

Ռազմահայրենասիրական միջոցառումների իրականացման գլխավոր նպատակներից են բանակ-հասարակություն կապի անընդհատ ամրապնդումը, հայ զինվորի մարտունակ ոգու պահպանումը և հզորացումը, հասարակության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության արմատավորումն ու պահպանումը և, ընդհանուր առմամբ, հայոց ազգային բանակի՝ հայ ժողովրդի բացարձակ արժեքի դե-

րի ու նշանակության խիստ կարևորումը հայ հասարակության շրջանում:

Ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստության դասարանները հագեցած են զորատեսակները, համազորային կանոնադրությունը, զինվորական կոչումները ներկայացնող հարուստ պաստառներով, որոնք ավելի կենդանի, իրական ու հետաքրքիր են դարձնում դասանյութը: Յուրաքանչյուր դպրոցի բակում ու ներսում ծածանվող Եռագույնը, ՀՀ և ԶՈՒ զինանշանները, օրհներգերի տեքստերը զգաստություն ու հպարտություն են ներշնչում: Այս մթնոլորտում յուրաքանչյուր աշակերտ՝ անկախ իր ստացած դաստիարակությունից, անշուշտ տոգորվում է գիտակցված հայրենասիրությամբ, ճանաչում մեր պատմության դրվագները, մշակույթի գանձերը և գիտակցում, որ ինքն արժանի ժառանգորդը, պահապանն ու փոխանցողը պիտի դառնա այս ամենի:

Վարդան Ստեփանյանը՝ լեգենդար Դուշմանը, ասել է՝ **«Երանի այն մարդուն, որը Մասիս սարը տուն կբերի»:** [5] Եվ իսկապես, մենք հավատում ենք, որ մի օր Մասիս սարը նորից մերը կլինի:

Գրող, լրագրող Մանվել Միկոյանի[6] կարծիքով, հայրենիքի հանդեպ սեր, հարգանք ու պատկառանք պետք է սկսել սերմանել մանկապարտեզից սկսած՝այն շարունակելով դպրոցներում ու բուհերում: Բանակում, իհարկե հույսը չի դրվում դպրոցում ստացած ռազմական գիտելիքների վրա, սակայն երբ զորակոչիկը բանակ է գնում պատրաստակամ, հայրենասիրությամբ լցված, ապա դա միանշանակ դպրոցի ջանքերի մասին է խոսում: Ռազմաճակատ մեկնողների կամք, հայրենասիրություն ու նպատակասլացություն ունենալը պարտադիր, բայց ոչ բավարար պայմաններ են պատերազմում հաղթելու համար:Սակայն զինվորի բարոյական ո-

գին ի զորու կլինի հրաշքներ գործել միայն զենք բռնել սովորելուց հետո: Մենք ենք մեր հայրենիքի սրի ու վահանի կենդանի մարմնացումը, մենք ենք մեր երկրի այսօրվա պաշտպանը, մենք ենք գալիք սերունդների համար պայծառ ապագա կերտողը, նրա հոգսը թեթևացնողը: Մենք էլ մեր լավ սովորելով թեթևացնենք մեր հզոր հայրենիքի բեռը և նպաստենք մեր պետության զարգացմանը:

Ասում են, երբ արագիլին հարցրել են, թե ինչու է մեկ ոտքի վրա կանգնում, նա պատասխանել է՝ որպեսզի մի քիչ թեթևացնեմ երկրի բեռը: [7] Եվ զինվորը այսօր առաջնորդվում է այս նշանաբանով և նույն մղումով աներեր մտնում է ռազմի դաշտ:

Մեծ է երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության կարևորությունը երկրի զարգացման գործում: Յուրաքանչյուր երկրի ներուժը նրա տնտեսությունն է, բանակը և մատաղ սերնդի ռազմահայրենասիրական ոգին, և վերջինիս ամրապնդման համար անցկացվող բազմաթիվ միջոցառումներն են:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ռազմահայրենասիրական դաստիարակությունը մեծ նշանակություն ունի հայրենիքի և այդ հայրենիքում ապրող ժողովրդի համար: Եվ եթե մենք չստանանք հայրենասիրական դաստիարակություն, չենք կարող պաշտպանել մեր հայրենիքը, մեր սահմանները:

Եվ այսօրվա մեր սերունդը ապացուցեց, որ ինքն այդ դաստիարակությունը լիովին ստացել է:

Մենք հպարտ պետք է լինենք, որ հայ ենք: Սիրում ենք մեր հայրենիքը՝ Հայաստանը: Եվ եկեք մեզ համարենք հայրենասեր և երբեք չպատկերացնենք մեր առավոտը օտար երկրում: Շատերը գնում են Հայաստանից՝ լավագույնը գտնելու, լավագույնին հասնելու ակնկալիքով:Սակայն չեն գիտակցում, որ դժվարությունն ամեն տեղ է, և փախչելով ոչ մի հարց չի լուծվում:Ինչո՞ւ գնանք Հայաստանից, աշ-

խատենք ու շենացնենք օտարի երկիրը, փոխարենը մնանք Մե՛ր Հայաստանում:Այո՛, մեր: Մենք՝ հայերս, իրավունք ունենք այն լիովին մերը համարելու: Քանզի մեր նախնիները իրենց արյան գնով են այդ իրավունքը վաստակել մեզ համար: Խնդիրներն ու դժվարություններն ամենուր են: Պետք է պայքարել ցանկացած ձևով, և յուրաքանչյուրս թեկուզ մեր չնչին ներդրումը անելով Հայրենիքի շենացման գործում՝ կկարողանանք պահպանել մեր նախնյաց երկիրը:

Ինչպես ասել է Ի.Գյոթեն՝ օտար երկիրը հայրենիք չի դառնա[8]:

Conclusion

Thus, military-patriotic upbringing is of great importance for the Country and people living there. In case we, don't get patriotic upbringing we can't protect our Motherland, our boundaries.

And nowadays generation proved, that we have got that upbringing thoroughly.

We should be proud of being Armenians. We love our Motherland Armenia. We partially are considered as a patriotic nation and we shouldn't imagine our morning in a foreign country.

Many people leave Armenia for finding better places, for reaching the best. But people don't realize that difficulty is everywhere and while evading it you can't solve any problem why leave Armenia why work and prosper in any other country instead of staying here in our country. Yes, we Armenians can consider wholly ours as for as our ancestors have won their right themselves. Problems and difficulties are everywhere. We should fight in any way, every one must do his best for the prosperity of our country, we can keep our ancestors country.

As- I Goethe mentioned

" Foreign country will not become motherland".

Вывод

И так воспитание имеет патриотический большое значение в родине и для там живущим людям. Если мы не получим патриотический воспитание не можем защищать нашу родину, нашу границы. Сегодня наше поколение показал, что мы это воспитание полностью получили.

Мы должны быть гордой, что армянин любим нашу родину Армению. Давайте нам рассматривать патриотом и никогда не представить нашу утро в чужих странах.

Большинство уйдут из Армении, чтобы найти лучшее. Но не почувствуют, что трудности повсюду и избегал не какой вопросе не решается. Почему уйти из Армении, работать для чужих, останемся нашу Армению. Да, нашу. Мы армяни полностью имеет право считать свое.

Наши древние с целью кровью получили право для нас. Задачи и трудности по всюду. Мы должны защищать нашу подину любой ценой и каждый своим обеспечением обеспечить древнюю страну. Как сказал Гете «В чужой стране, не станет родиной».

Գրականություն

[1]Պարույր Սևակ, «Ականջդ բեր ասեմ»Երևան, 2015:
[2]https://hy.wikipedia.org/wiki/
[3] http://aforizmner.do.am/news/2012-10-04-82
[4] Հայ Ասպետ» Կրթամշակութային մանկապատանեկան հանդես»N 1 2011(էջ20)
[5] http://www.photoart.biz/
[6]http://www.asparez.am/news-hy/hayreniq_hayrenasirutyun-hy/
[7] Պարույր Սևակ,»Ականջդ բեր ասեմ»,Երևան, 2015:
[8] http://lili-mardastco.blogspot.am/2011/09/blog-post_24.html

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի
ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Տնտեսագիտության և կառավարման
ամբիոնի դասախոս Կարապետ Բոյաջյան

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ - ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր-զբոսաշրջություն, հյուրանոցային տնտեսության օբյեկտ, մրցունակություն, գյուղական, քարանձավային, խոհանոցային, առողջարանային, պատմամշակութային տուրիզմ:

Հայաստանը ողջ աշխարհում հայտնի է իր բացառիկ և հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, աշխարհագրական բազմազանությամբ, հյուրընկալությամբ և հյուրերի հանդեպ ջերմ ու բարեհամբույր վերաբերմունքով:

Որպես տուրիստական երկիր՝ Հայաստանը գնալով ամրապնդում է իր դիրքերը տուրիզմի միջազգային շուկայում, քանի որ այն կարող է աշխարհին ներկայանալ ինչպես իր բազմադարյան մշակույթով, այնպես էլ՝ գեղատեսիլ և չքնաղ բնությամբ:

Հայաստանում տուրիզմը բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն տեղաբնակների, այլ նաև այլ երկրների բնակիչների համար: ՀՀ-ում զբոսաշրջիկների նախընտրած տուրիզմի ձևը ռեկրեացիոն հանգիստն է: Ռեկրեացիոն գործունեությունը ազատ ժամանակ անձի գործունեությունն է՝ ուղղված ֆիզիկական ուժերի վերականգնմանը, բազմա-

կողմանի զարգացմանը: Ռեկրեացիոն ռեսուրսները լինում են բնական և մարդածին: Բնական ռեկրեացիոն ռեսուրսները շատ բազմազան են: Դրանց թվին են պատկանում մարդու հանգստի, առողջության համար նպաստավոր պայմաններ ունեցող ծովափնյա ու գետափնյա վայրերը, լեռնային մաքուր օդը, զուլալ աղբյուրները, արևային էներգիայի առատությունը, ձյունածածկ ու ալպյան մարգագետիններով հարուստ լեռները, անտառները, հանքային բուժիչ աղբյուրները, բնական հուշարձանները, որոնց հիման վրա հնարավոր է կազմակերպել հանգստյան տներ, սպորտային և զբոսաշրջային բազաներ: Սակայն մարդը կարող է իր հանգիստը, ուժերն ու առողջությունը վերականգնել, ոչ միայն բնական նշված ռեկրեացիոն ռեսուրսները օգտագործելով, այլև հաճախելով թանգարաններ, թատրոններ, դիտելով պատմաճարտարապետական մեծ հետաքրքրություն ներկայացնող կոթողներ, հուշարձաններ, քաղաքներ, արգելոցներ և մարդու կողմից ստեղծված այլ օբյեկտներ: Բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներով առավել հայտնի են աշխարհում Իտալիան, Հունաստանը, Իսպանիան, Ֆրանսիան, Եգիպտոսը, -Չինաստանը, Հնդկաստանը, որոնք էլ հանդիսանում են միջազգային զբոսաշրջության առաջատար երկրները: Հանրապետության բնական ռեկրեացիոն հանգստի, բուժման ռեսուրսներից գործնական կարևոր նշանակություն ունեն հանքային բուժիչ ջրի բազմազան աղբյուրները, ինչպես նաև տորֆի որոշ պաշարները:

Հայաստանի Հանրապետությունը մեծ պոտենցիալ ունի առողջարանային տուրիզմի ուղղությունում: Հանրապետության տարածքում հայտնաբերված են հանքային ջրի հարյուրավոր աղբյուրներ, որոնցից վաղուց արդեն լայն ճանաչում ունեն Ջերմուկի հանքային տաք աղբյուրների խումբը՝ ավելի քան 40 ելքով,Արզնու, Հանքավանի, Դիլիջանի, Իջևանի, Բջ-

նու, Արարատի աղբյուրները: Հանքային ջրի աղբյուրներ կան նաև Վայքի այլ վայրերում, Որոտան գետի ավազանում, Սևանի ավազանում և հանրապետության այլ տարածքներում: Բուժման համար օգտագործվող տորֆի պաշարներ կան Լոռու մարզում և Սևանի ավազանում: Այդ վայրերում հանքային ջրերից բացի առկա են լեռնային մաքուր օդի, արևային ուլտրամանուշակագույն էներգիայի նախապայմանները հանգստյան տների կազմակերպման համար: Իսկ Սևանա լճի ափերը, դրանցից բացի, նպաստավոր են հանգստի, սպորտային միջոցառումների, և այլնի համար: Դիլիջանը՝ իր հանքային ջրով, բազմազան կենդանական աշխարհով ու բուսատեսակներով հարուստ անտառներով, Պարզ լճով, Վանաձորի ու առհասարակ Դեբեդ գետի ավազանը, Լոռու սարահարթը, Կապանի անտառաշատ տարածաշրջանները, Արագածի լճերը, մաքուր օդ ունեցող լեռնալանջերը նպաստավոր են առողջարանային բուժման համար: Հայաստանում զբոսաշրջության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության հիմնական նպատակն է մեծացնել բնագավառի ներդրումը ազգային տնտեսության մեջ, ապահովել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների համաչափ սոցիալ-տնտեսական զարգացումը, ինչը ոչ միայն կնպաստի մարզերում սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանը, այլև բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Այս ամենը կարելի է իրագործել՝ նպաստելով ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի աճին, միաժամանակ ավելացնելով զբոսաշրջությունից ստացվող եկամուտները: Զբոսաշրջությունը ոչ միայն տնտեսության կարևորագույն ճյուղ է, այլ նաև մարդկանց կենսակերպի կարևոր բաղկացուցիչ: Այն ներառում է մարդու հարաբերությունը շրջապատող արտաքին միջավայրի հետ:

Հայաստանում տրանսպորտային համակարգը համալրվել է զբոսաշրջիկներին սպասարկող նոր բարձրակարգ միկրոավտոբուսներով և զբոսաշրջային ավտոբուսներով, իսկ ձիարշավարանների, հրաձգարանների, գոլֆի դաշտերի և ժամանցային տարաբնույթ ենթակառուցվածքների զարգացումը յուրատեսակ որակ են հաղորդում Հայաստանի զբոսաշրջությանը:

Զբոսաշրջությունը Հայաստանում ունի զարգացման բազմաթիվ նախադրյալներ: Ըստ վիճակագրության տվյալների՝ վերջին տարիներին Հայաստանի նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է Իրանի, Եվրամիության երկրների, ԱՄՆ-ի, Սկանդինավյան երկրների, Թուրքիայի զբոսաշրջիկների կողմից: 2013թ.-ին Հայաստան այցելած 957 հազար զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունն ունի հետևյալ կառուցվածքը՝ ԱՊՀ երկրներից՝ 27.8%, ԵՄ-ից՝ 36.3%, և այլ երկրներից՝ 35.9%: 2012-2013թթ.-ին աշխարհագրական կառուցվածքում նկատվում է հստակ միտումներ. ԵՄ երկրներից այցելությունների տեսակարար կշիռը 38.4%-ից նվազել է մինչև 36.3%, ընդ որում, եվրոպական երկրներից զբոսաշրջիկների չնչին աճ է գրանցվել միայն Գերմանիայից, իսկ մնացած դեպքերում 2013թ.-ին 2012թ.-ի համեմատությամբ այցելուների թիվը նվազել է: Ի տարբերություն ԵՄ-ի երկրների՝ ԱՊՀ-ից այցելությունների տեսակարար կշիռը ամբողջի մեջ 21.8%-ից հասել է 27.8%-ի: Իսկ առանձին պետությունների մասով՝ 4%-ով աճել է Ռուսաստանից այցելուների թիվը:

Հայաստանի ազգային մրցունակությունը միայն տուրիզմի վրա չի կարելի կառուցել, բայց այս ոլորտը մեծ կարևորություն ունի մի քանի պաճառով: Առաջինը՝ Հայաստանի պատմամշակութային և բնական հարստությունը ինքնին մրցակցային առավելություն է: Սա անպայմանորեն պետք է

արժևորել: Երկրորդը՝ տուրիզմը արտահանման ոլորտ է, իսկ մենք արտահանման հարցում լուրջ խնդիր ունենք: Երրորդը՝ զբոսաշրջությունը ֆինանսական հոսքեր, ներդրումներ է ուղղորդում դեպի մարզեր: Այս առումով իսկապես զբոսաշրջությունը շատ կարևոր ոլորտ է, և համոզված եմ, որ Հայաստանը զբոսաշրջության ոլորտում կարող է մրցունակ լինել: Համապատասխան քայլեր ձեռնարկելու դեպքում հնարավոր է անգամ 2 տարում արդյունքեր տեսնել տուրիզմի բնագավառում: Տաթևում «Տա Թևեր» ճոպանուղու բացումը նպաստեց զբոսաշրջիկների հոսքին: Միայն 2010-ի նոյեմբեր ամսվա տուրիստական հոսքը դեպի Տաթև ավելի շատ էր, քան ամբողջ 2009 թվականի ընթացքում: Սա ապացուցում է, որ հնարավոր է արագ, բեկումնային զարգացում ապահովել զբոսաշրջության բնագավառում: Տաթևի հետ կապված ծրագիրը միայն ճոպանուղու բացմամբ չի սահմանափակվում: Տաթևի ճոպանուղին լինելով ամենաերկարը՝ դրանով իսկ ապահովում է Հայաստանի գովազդն աշխարհում: Այսինքն՝ բացի վանական համալիրից, զբոսաշրջիկին տրամադրվում է բազմազանություն՝ ժամանցը կազմակերպելու համար: Պետք է նշել, որ հիմնական խնդիրը ծառայությունների բավարար մակարդակի բացակայությունն է և Հայաստանի ճանաչելիության ցածր մակարդակը: Հայաստանի զբոսաշրջության զարգացմանը խանգարում է տնտեսության մեջ արմատավորված մենաշնորհը, կոռուպցիան, ծառայությունների և ապրանքների բարձր գները: Հայաստանը մեծ պոտենցիալ ունի գյուղական տուրիզմի ուղղություններում: Այս ուղղությունները զարգացնելու համար անհրաժեշտ է մատչելի գներով մատուցել հնարավորինս բարձրորակ ծառայություններ և այն ներկայացնել արտասահմանի տուրօպերատորներին: Տուրօպերատորները ևս նշում են, որ եթե, ասենք, 10 % էժան լինի ավիատոմսի և հյուրանոցի գինը, ապա անհամե-

մատ ավելի մեծ թվով զբոսաշրջիկներ կգան Հայաստան: Հայաստանը միգուցե տարածաշրջանում ամենաթանկ տուրիզմը չի առաջարկում, բայց գներն այստեղ օպտիմալ չեն: Համակարգային խնդիրներից՝ մենաշնորհներից, բիզնեսի համար անբարենպաստ միջավայրից, հարկերից բացի, պահանջարկի խնդիր կա: Իրականում զբոսաշրջիկների թիվը փոքր է, և նաև այս պատճառով դժվար է էժան գին սահմանել: Եթե կարողանանք ավելացնել զբոսաշրջիկների քանակը, ապա գները կնվազեն, և դա իր արդյունքը կտա: Սփյուռքից հայությունը մեծ ներուժ ունի: Բայց մեր հիմնական թիրախը պետք է լինի օտարերկրացին: Ոչ միայն օտարազգի զբոսաշրջիկների, այլ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մոտ մեծ հետաքրքրություն կա խոհանոցային, քարանձավային, գյուղական տուրիզմի ուղղություններում: Եղեգիսը, Արենին, Նորավանքը, Սիսիանը, Քարահունջը, Ուխտասարը, Տաթևը, Գորիսը մեծ պոտենցիալ ունեն: Խթանելով ծառայություններն այնտեղ՝ մենք ավելի շատ զբոսաշրջիկ կներգրավենք, ինչը կնպաստի նաև ներդրումային ծրագրերի իրականացմանը:

Սևանում նույնպես մեծ հնարավորություններ կան: Մասնավորապես, այնտեղ հիմա մշակվում է բարձր լեռնային գոտու սպորտային տուրիզմի զարգացման հատուկ փաթեթ, որը կարևոր ծրագիր է: Ծաղկաձորը ձմռանը հյուրնկալում է լեռնադահուկորդներին, ամռանը՝ լեռնագնացներին և պիկնիկների սիրահարներին:

Հայաստան ժամանած զբոսաշրջիկները լեզվական խնդիրներ են ունենում: «Օտարերկրացիները հանրապետություն են գալիս ոչ միայն մեր մշակույթին, պատմությանը եւ ավանդույթներին ծանոթանալու, այլ նաեւ՝ հայերի հետ շփվելու համար: Այստեղ ամենամեծ ունկնդիրը՝ տեղացինե-

ը, մեծամասամբ օտար լեզուների, հատկապես՝ անգլերենի վատ են տիրապետում»:

1950 թ. զբոսաշրջիկների թիվը ողջ աշխարհում հասնում էր 25 մլն-ի, ապա 21-րդ դարի սկզբին այս ցուցանիշն արդեն կազմում էր 663 մլն, որը վկայում է, որ զբոսաշրջության զարգացման տեմպերը գերազանցում են ցանկացած այլ ճյուղի աճի տեմպերը: Ըստ կանխատեսումների՝ մոտ ապագայում զբոսաշրջիկների թիվը կգերազանցի 1 մլրդ մարդու սահմանագիծը, իսկ 2020 թ. կհասնի 1 մլրդ 600 մլն մարդու: Համախառն եկամուտները միջազգային զբոսաշրջությունից 2020 թ. կկազմեն 3,5 տրիլիոն դոլար և կհամեմատվեն նավթի վաճառքի և ավտոարդյունաբերության եկամուտների հետ: Ներկայումս զբոսաշրջության ներդրումը միջազգային տնտեսության մեջ 11% է կազմում, և զբաղվածների յուրաքանչյուր 15-րդը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներկայացնում է զբոսաշրջությունը: Զբոսաշրջության նպատակով կատարված ծախսերի առումով, ըստ վերջին տարիների միջինացված տվյալների, առաջին տեղում է ԱՄՆ-ն՝ 31 մլրդ դոլար, երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է Գերմանիան՝ 25,2 մլրդ դոլար, ապա Մեծ Բրիտանիան՝ 21 մլրդ դոլար, այնուհետև Ռուսաստանը՝ 7,1 մլրդ դոլար: Ինչպես նշվեց, միջազգային զբոսաշրջության աճի տարեկան տեմպերը վերջին 20 տարվա ընթացքում կազմել են մոտ 6%, իսկ եկամուտների մասով՝ 13%: Մասնագետների կարծիքով՝ 21-րդ դարը կդառնա զբոսաշրջության ժամանակաշրջան:

Եզրակացություն

Զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության հեռանկարային ոլորտներից է: Ունենալով հազարամյա պատմություն, հարուստ մշակութային ժառանգություն և լեռնային ռելեֆ՝ մենք ունենք բոլոր նախադրյալները դառնալու աշխարհի տուրիստական

հայտնի կենտրոններից մեկը: Մեր երկրի զբոսաշրջությունը մեծ պոտենցիալ ունի զարգանալու հետևյալ ուղղություններով՝

-Գյուղական տուրիզմ

-Քարանձավային տուրիզմ

-Խոհանոցային տուրիզմ

-Առողջարանային տուրիզմ

-Պատմամշակութային տուրիզմ և այլն:

Տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել ենթակառուցվածքներ, բարձրացնել սպասարկման մակարդակը և մատչելի դարձնել հյուրանոցների և ավիատոմսերի գները: Բացի վերը նշված խնդիրներից, մեկ այլ լուրջ խնդիր է մենաշնորհը և կոռուպցիան:

Կառավարության քաղաքականության հիմքում դրված են երեք հիմնական նպատակներ՝ զբոսաշրջային այցելուների քանակի աճ, զբոսաշրջիկներից ստացված եկամուտների ապահովում ու ավելացում, աշխատատեղերի ստեղծում, որոնց իրականացման արդյունավետության վրա մեծ ազդեցություն ունեն նշված խնդիրները: Զբոսաշրջության զարգացումը կնպաստի Հայաստանի աղքատության նվազմանը, աշխատատեղերի ստեղծմանը, կենսամակարդակի աճի, ներդրումների ավելացմանը և այլն: Զարգացող պետականություն ունենալու համար անհրաժեշտ է ունենալ զարգացած տնտեսություն, որի մեջ իր առանցքային տեղն ունի տուրիզմը:

Заключение.

Туризм является перспективным экономическим сектором в Республике Армения. С многовековой историей, богатым культурным наследием и горным рельефом, мы стали всемирно известным туристическим центром всех предпосылок. Наша страна имеет огромный потенциал для развития туризма в следующих областях:

Сельский туризм

Пещерный туризм

Кулинарный отдых Спа-туризм

Историко-культурный туризм и т.д.

Для создания инфраструктуры необходимо развитие туризма, повышения уровня обслуживания, и доступ к гостиницам и ценам авиабилетов. Помимо указанных выше проблем, туризм имеет монопольскую коррупцию и другие серьезные проблемы. Правительственная политика основана на трех основных целей: увеличение количество туристических посетителей, и обеспечение роста доходов от туристов, и создание рабочих мест, которые оказывают большое влияние на эффективность этих вопросов. Развитие туризма в Армении будет способствовать сокращению бедности, созданию новых рабочих мест, рост уровня жизни, роста инвестиций и так далее. Государственность должна иметь развитую экономику, в которой ключевую роль играет сфера туризма.

Conclusion.

Tourism is promising area of the Republic of Armenia. Having thousand years of history, rich cultural heritage and mountainous terrain we have all the prerequisites to become one of the world famous tourist center in our country, tourism has great potential to develop in the following areas:

-Rural tourism
-Cave tourism
-Kitchen tourism
-Spa tourism
-Historical and cultural tourism, etc.

For the development of tourism requires infrastructure, improve the level of service and make it available for hotels and airfare rates in addition to the above-mentioned problems, another serious problem of monopoly and corruption.

The government's policy is based on three main objectives- tourism number of visitors, tourists, and obtained revenues, ensured and increased, creation of new jobs, implementation of which efficiency have a big impact of these problems: the development of Tourism in Armenia will contribute to poverty reduction, job creation, rising living standards, increasing distrust, and so on. In the developing of statehood, it is necessary to have a developed economy, where key role is tourism.

ԹԱԳՈՒՀԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ
մանկավարժության և բանասիրության ֆակուլտետի
2-րդ կուրսի ուսանող,
ղեկավար՝ Տնտեսագիտության և կառավարման
ամբիոնի դասախոս Սյուզաննա Սարգսյան

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Առանցքային բառեր- տնտեսագիտություն, տնտեսագիտական դաստիարակություն, Հայաստան, առևտուր, հասարակություն, մշակույթ, զարգացում:

Տնտեսագիտական դաստիարակությունը մեծ նշանակություն ունի պետության ու հասարակության համար: Տնտեսագիտական դաստիարակությունը զարգացնում է անհատի մոտ տնտեսական մտածելակերպ և ձևավորում փոխհարաբերություններում շփման մշակույթ: «Տնտեսագետների և քաղաքական փիլիսոփաների և ճիշտ, և սխալ գաղափարներն իրականում ավելի հզոր են, քան մարդիկ սովորաբար հասկանում են: Իրոք, աշխարհը միայն դրանցով է ղեկավարվում...» Ջոն Մեյնարդ Քեյնս[81]:

Տնտեսագիտությունն իրենից ներկայացնում է գիտությունների ամբողջություն, որոնց հետազոտության առարկան արտադրական հարաբերություններն են, աշխատանքի հասարակական կազմակերպման օրինաչափությունները, պատմական որոշակի արտադրաեղանակներում տնտեսագիտական օրենքների գործողությունը, հասարակական արտադրության կառավարման կիրառվող ձևերն ու եղանակնե-

[81] http://armeco.am/forum/29-23-1

ը։ Նրա խնդիրն է բացահայտել պատմական զարգացման գործընթացում հասարակության տնտեսակարգի օբյեկտիվ օրինաչափությունները և արտադրության եղանակների հաջորդափոխությունը, վիճակագրական մշակման ենթարկել և տեսականորեն համակարգել տնտեսական կյանքի երևույթները, գործնական հանձնարարականներ մշակել կենսական բարիքների արտադրության, բաշխման, փոխանակության և սպառման բնագավառներում։ Լինելով հասարակական գիտությունների մաս՝ տնտեսագիտությունը տեսականորեն արտահայտում է տարբեր դասակարգերի ու սոցիալական խմբերի նյութական շահերը, կատարում աշխարհայացքային և գաղափարական կարևոր դեր[82]։ Կարևորելով տնտեսագիտության տեղն ու դերը հասարակության զարգացման գործընթացում, առանձնահատուկ կարևորություն է ստանում տնտեսագիտական դաստիարակությունը։

Տնտեսագիտական դաստիարակությունը կրթական աշխատանք է, որն ուղղված է զարգացնելու մասնակիցների տնտեսական գիտակցությունը։ Շնորհիվ տնտեսագիտական դաստիարակության՝ աշակերտները յուրացնում են այն մոտեցումներն ու հասկացությունները, որոնք վերաբերում են բուն տնտեսությանը, տնտեսական հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև գործող տնտեսական մեխանիզմներին։ Շատ կարևոր է, որպեսզի տնտեսական կրթությունը կրի համընդհանուր բնույթ, ընդգրկելով բնակչության բոլոր սոցիալական խմբերը, ընդ որում, հիմնական շեշտը պետք է դրվի երեխաների կողմից սոցիալական խնդիրների գնա-

[82]https://hy.wikipedia.org/wiki/%D5%8F%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

հատման գիտական մոտեցման ձևավորմանը, անկախ մտածողության զարգացմանը[83]:

«…Տնտեսագիտական դաստիարակությունը ենթադրում է մարդկանց մոտ գործի նկատմամբ հետաքրքրվածության ձևավորում, ունակություն ոչ միայն տնտեսագիտորեն գրագետ մտածելու, այլև մտածելու պետականորեն, կարողանալ տալ հասարակական գնահատական այս կամ այն տնտեսական երևույթին, տեխնիկական նորամուծությանը, իր իսկ անձնական աշխատանքին և այլն: Այն մտածելու ունակությանը տալիս է նպատակային և փորձնական ուղղվածություն: (Վ.Դ.Պոպով)

«Տնտեսագիտական դաստիարակությունը հանդիսանում է մարդու տնտեսագիտական կրթության կարևորագույն գործոն: (Ն.Ի.Բելկին):

Տնտեսագիտական դաստիարակությունը պետք է սկսել դեռևս վաղ հասակից, քանի որ մարդու, որպես անհատի ձևավորումը սկսվում է արդեն իսկ 6-7 տարեկան հասակում, հետևաբար կազմակերպվածությունը, աշխատասիրությունը և շատ այլ կարևոր մարդկային գծեր պետք է դաստիարակել վաղ հասակից:

Տնտեսագիտական դաստիարակության վերջնարդյունքը իր դրսևորումն է ստանում աշխատանքի, պետության, ֆինանսական միջոցների նկատմամբ երեխայի ճիշտ և գրագետ վերաբերմունքով, նրա կողմից որոշումների կայացման վարքագծով: Աշակերտները տնտեսագիտական դաստիարակության շնորհիվ գիտակցում են, որ մարդու բարեկեցության մակարդակը ուղիղ համեմատական կախվածության մեջ է գտնվում աշխատանքի որակից, որ պետական կառավարում

---

[83]Юсупова С.Г. ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ ЭКОНОМИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ ВО ВНЕУРОЧНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ // Фундаментальные исследования. – 2014

նշանակում է նաև ֆինանսական միջոցների նպատակային և ճիշտ օգտագործում, որ իրենք նույնպես հանդիսանում են «-պետության» կողմից որոշումների կայացման անմիջական մասնակիցներ և այլն:

Երեխան իր կամքից անկախ հանդիսանում է տնտեսական կյանքի մասնակից:

Տնտեսագիտական դաստիարակությունն օգնում է աշակերտներին հասկանալ բնական ռեսուրսների կարևորությունը մարդու և պետության համար: Ինչ է նշանակում բնական ռեսուրս, ինչպես պետք է դրանց վերաբերվել և ինչպիսի բնական ռեսուրսներով է հարուստ իր իսկ երկիրը: Օրինակ՝ Հայաստանը, հարուստ է բազում ռեսուրսներով՝ տուֆ, ոսկի, պղինձ և այլն:

Նրանք ստանում են ճիշտ պատկերացում, թե ինչ է սեփականությունը, փողը և դրա ռացիոնալ օգտագործման մոտեցումները, եկամուտները և ծախսերի ճիշտ բաշխումը թե ընտանիքի, թե պետության մակարդակներում և այլն: Օրինակ՝ գույքի տնօրինումը անձի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացումը, նպաստում է ինքնուրույն մտածելակերպի ձևավորմանը: Այսինքն, երեխան պետք է հանդիսանա իր իրերի սեփականատերը, պետք է նրան հնարավորություն տալ տնօրինելու իր իրերը:

Ինչպես ասել է Ֆրենսիս Բեկոնը.

«Փողը գոմաղբի նման է – եթե այն շաղ չտաս, դրանից քիչ օգուտ կլինի… «[84]:

Երեխային պետք է բացատրել շուկայի, ֆինանսների, փողի էությունը, ինչ կերպ պետք է տնօրինել դրանք: Օրինակ՝ մենք շուկան հասկանում ենք տարբեր իմաստներով և ըստ դրա կարող ենք բաժանել մի քանի խմբի. հագուստի,

[84] http://armeco.am/forum/29-23-1

սննդի, կոշիկի, գրենական պիտույքների, տան կահավորման և այլն: Յուրաքանչյուր մարդ գոնե նվազագույնն իրեն պետք է պատկերացնի առևտրային միջավայրում և հետո արդեն իր պատկերացումները տեղափոխի միջազգային առևտրի ու հարաբերություններ դաշտ: Օրինակ՝ երեխան պետք է պատկերացնի, որ երկրների միջև առևտուրն իրականացվում է մի երկրից մյուսը ապրանքների տեղափոխման ճանապարհով, որ վերջինս իրականացվում է տարբեր տրանսպորտային միջոցներով՝ ինքնաթիռներ, նավեր, բեռնատար մեքենաներ, գնացքներ: Սա, բացի տնտեսագիտական դաստիարակությունից, նրան ընդհանուր գիտելիքներ է տալիս և իր երկրի աշխարհագրական դիրքի և նաև իր երկրի հարևան պետությունների մասին: Օրինակ՝ Հայաստանը չի կարող նավով ապրանք ներմուծել և դուրս բերել երկրից, քանի որ Հայաստանից դեպի հարևան երկրներ չկան ծովային ճանապարհներ: Իսկ օրինակ՝ գնումների իրականացման ժամանակ երեխայի մոտ ձևավորվում է ընտրելու, համեմատելու, գնահատելու և ծախսեր կատարելու մշակութ: Շատ կարևոր է յուրաքանչյուր բացատրություն զուգորդել խաղի կամ պրակտիկ գործողությունների հետ:

Տնտեսագիտական դաստիարակությունն ապահովում է երեխայի մտածելակերպի ճիշտ զարգացումը, նրա մոտ ձևավորվում են տնտեսագիտական և բարոյական որակներ, որոնք անհրաժեշտ են նրա հետագա տնտեսական գործունեության համար: Բացի այդ, տնտեսագիտական դաստիարակությունը երեխային սովորեցնում է նախաձեռնողականություն, սեփականության և հանրային ունեցվածքի նկատմամբ հոգատար մոտեցում, վաղ հասակից նա սկսում է հասկանալ տնտեսագիտական մշակույթի իմաստն ու էությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, տնտեսագիտական դաստիարակություն ասելով հասկանում ենք տնտեսագիտական գիտելիքների սիստեմատիկ յուրացում, հասարակության անդամների մոտ կառավարման, տնտեսվարման ունակությունների ձևավորում՝ տվյալ հասարակությունում ընդունված սոցիալ տնտեսական նորմերին և սկզբունքներին համապատասխան: Հետևաբար, նպատակահարմար է տնտեսագիտական դաստիարակությունն իրականացնել դպրոցում լրացուցիչ դասաժամերի կազմակերպման միջոցով:

Conclusion

Thus, while saying economic upbringing we mean the systematic realization of economic knowledge, the formation of economizing skills, the governing of the members of the society due to adopted social economic norms and principles. Accordingly, it is more preferable to realize the economic upbringing with the help of extra-curricula study organization.

Резюме

Таким образом, экономическое образование означает систематическое присвоение экономических знаний об управлении,о проектировании ,усвоение навыков экономического управления, соответствующих социальных норм и принципов в обществе. Поэтому целесообразно осуществлять экономическое образование в школе путем организации дополнительных уроков.

ՏՊԱՐԱՆ